Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
փետրվարի 23-ի N 266 - Ա որոշման

Զ Ե Կ Ո Ւ Յ Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ (2021-2026 ԹԹ.) 2023 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԲԱՆ

2023 թվականի արդյունքներով Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ ՀՀ կամ Հայաստան) արձանագրվել է 8,7% տնտեսական աճ: 2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքներով ձևավորված Կառավարությունը 2021-2026 թվականներին տարեկան միջինում 7% տնտեսական աճի ապահովումը սահմանեց որպես առանցքային թիրախ: 2022 թվականի արդյունքներով ՀՀ-ում արձանագրվել էր 12,6% տնտեսական աճ, 2021 թվականին՝ 5,8% աճ: Ըստ այդմ, ընտրություններին հաջորդած երեք տարվա արդյունքներով տնտեսական աճի թիրախն ապահովված է: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հրապարակային ելույթներում Հայաստանի տնտեսական զարգացումը սահմանեց որպես ՀՀ պետական շահ, որից պետք է բխեն Կառավարության քաղաքականություններն ու որոշումները: Հայեցա-կարգային այս ընկալումն է ընկած Կառավարության գործունեության հիմքում:

Անվտանգություն

Գլոբալ անկայունության պայմաններում Հայաստանի անվտանգային միջավայրը շարունակել է ձևափոխվել, անվտանգային մեխանիզմները, որոնց ավանդաբար ապավինել է Հայաստանը, հերթական անգամ ի ցույց են դրել իրենց անարդյունավետությունը:

2020, 2021, 2022 թթ. պատերազմական իրադարձություններից հետո, երբ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունն անարդյունավետ գտնվեց, Լեռնային Ղարաբաղում (այսուհետ՝ ԼՂ) տեղակայված Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ ՌԴ) խաղաղապահ զորախումբն ի վիճակի չեղավ կանխելու Լաչինի միջանցքի՝ 2022 թվականի դեկտեմբերի 12-ից մեկնարկած ապօրինի շրջափակումը, ապա և 2023 թվականի սեպտեմբերին՝ հայերի բռնի տեղահանումը ԼՂ-ից, Կառավարությունն անվտանգային հարաբերությունները դիվերսիֆիկացնելու որոշում է կայացրել:

2023 թվականի ընթացքում անվտանգային ոլորտի հարաբերություններ են ձևավորվել և զարգացել Վրաստանի, Ֆրանսիայի, Իրանի, Հնդկաստանի, ԱՄՆ-ի, ԵՄ-ի հետ: 2023 թվականի փետրվարից ԵՄ-ն երկարաժամկետ քաղաքացիական առաքելություն է տեղակայել Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության (այսուհետ՝ Ադրբեջան) պետական սահմանի երկայնքով:

Արտաքին անվտանգության ապահովման ոլորտում Կառավարության հայեցա-կարգային մոտեցումը հիմնվում է տարածաշրջանային քաղաքականության վրա՝ նպատակ ունենալով ախտորոշել Հայաստանի նկատմամբ տարածաշրջանում առկա բացասական և ագրեսիվ դրսևորումները, կառավարել դրանք, ապա և

տարածաշրջանային մտածված քաղաքականության շնորհիվ նվազեցնել և երկարաժամկետ հեռանկարում զրոյացնել:

Այս խնդրի իրագործման համար առանցքային է վարվող քաղաքականությունների լեգիտիմությունը միջազգային իրավունքի և կարգի տեսակետից:

2023 թվականի ընթացքում Կառավարության ներկայացուցիչներն ակտիվ շփումներ և բանակցություններ են ունեցել տարածաշրջանի երկրների՝ Վրաստանի, Իրանի, Թուրքիայի և Ադրբեջանի ներկայացուցիչների հետ: Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերություններում էական առաջընթաց ապահովել չի հաջողվել: Տարին անցել է Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման, դրա հետևանքով ԼՂ-ում հումանիտար ճգնաժամի, ապա և ԼՂ-ի հայերի բռնի տեղահանման պայմաններում:

ԼՂ-ի բռնի տեղահանվածներին աջակցության վերաբերյալ

2023 թվականի հուլիսի 26-ին, այն բանից հետո, երբ Լաչինի միջանցքով ապրանքների տեղաշարժն ըստ էության ի սպառ դադարեց, ԼՂ-ի ժողովրդին աջակցության Կառավարության աշխատանքային խմբի որոշմամբ դեպի Լաչինի միջանցքին սահմանակից Հակարիի կամուրջ ուղարկվեց 19 բեռնատարից բաղկացած 361 տոննա հումանիտար բեռ՝ շրջափակման մեջ գտնվող ԼՂ-ի բնակչությանն առաջնահերթ սննդամթերքով, մանկական սննդով և դեղորայքով ապահովելու նպատակով: Այս հումանիտար բեռների մուտքը նույնպես արգելափակվեց, ինչը միջազգային հանրության համար է՛լ ավելի ակնհայտ դարձրեց ԼՂ-ում կենսական նշանակության ապրանքների անհասանելիությունը: Դրան հաջորդեցին Փարիզի և ֆրանսիական մի քանի ռեգիոնների վարչական ղեկավարների կողմից հումանիտար բեռների ուղարկումը Կոռնիձոր, որոնց մուտքը ԼՂ նույնպես արգելափակվեց:

10 ամիս շարունակ խորացող հումանիտար ճգնաժամից հետո՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ին, ԼՂ-ի ժողովրդի դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծված ռազմական գործողությունները հանգեցրին ԼՂ-ի հայաթափմանը:

Մեկ շաբաթվա ընթացքում բռնի տեղահանվեց ԼՂ-ում բնակվող ավելի քան 100 հազար հայ՝ սեպտեմբերի 24-ին՝ 1500 մարդ, սեպտեմբերի 25-ին՝ 7500, իսկ սեպտեմբերի 26-ից՝ օրական 23-25 հազար մարդ: Սեպտեմբերի 30-ին տեղահանվածների թիվը գերազանցել էր 100 հազարը:

Կառավարությունը Կոռնիձորում, Գորիսում և Վայքում կահավորեց ԼՂ-ի բռնի տեղահանվածների հաշվառման և տեղավորման շուրջօրյա աջակցության կետեր: Հաջորդ օրերին այդպիսի կետեր ստեղծվեցին բոլոր մարզկենտրոններում և խոշոր մարզային բնակավայրերում:

Մի քանի օրում մարզերում կացարանով ապահովվեց մոտ 80 հազար տեղահանված, որոնցից 56 հազարը բնակեցվեց Կառավարության աջակցությամբ տրամադրված հյուրանոցներում և հարմարեցված այլ շենքերում:

Մեծ աջակցություն ցուցաբերեց նաև ՀՀ բնակչությունը՝ կեցության պայմաններ ստեղծելով տասնյակ հազարավոր տեղահանված հայրենակիցների համար:

Բռնի տեղահանվածներն ապահովվեցին սննդով և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներով: 2023 թվականի հոկտեմբերից այդ նպատակով մարզպետարաններին է հատկացվել ավելի քան 4,4 մլրդ ՀՀ դրամ:

2023 թվականի հոկտեմբերի 3-ին Կառավարությունը կայացրել է ԼՂ-ից բռնի տեղահանվածներին 100 հազարական ՀՀ դրամ հրատապ դրամական աջակցություն տրամադրելու վերաբերյալ որոշում: Կարևորելով ցուցաբերվող աջակցության գործընթացի թափանցիկությունը՝ դրամական աջակցությունը տրամադրվեց անկանխիկ եղանակով: 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ այս ծրագրի շահառուների թիվը կազմել էր 112 080, այդ թվում՝ 31 553 անչափահաս: Ծրագրին հատկացված բյուջեն կազմել է շուրջ 11,2 մլրդ ՀՀ դրամ:

2023 թվականի հոկտեմբերի 12-ին Կառավարությունն ընդունել է 40+10 հազար ՀՀ դրամ կեցության ծախսերի հատուցման աջակցության որոշումը՝ 40 հազար ՀՀ դրամ վարձակալության, իսկ 10 հազար ՀՀ դրամ՝ կոմունալ ծախսերի հատուցման նպատակով: Աջակցությունը սահմանվել է 2023 թվականի հոկտեմբերից մինչև 2024 թվականի մարտն ընկած ժամանակահատվածի համար: Ծրագրային աջակցության 6 ամսվա ընդհանուր բյուջեն կազմել է շուրջ 30 մլրդ ՀՀ դրամ: Աջակցություն ստացած անձանց թիվը 2023 թվականի հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար կազմել է համապատասխանաբար՝ 104 027, 77 503 և 82 266:

2023 թվականի նոյեմբերի 9-ին Կառավարությունն ընդունել է բռնի տեղահանվածների առաջնային սպառողական ծախսերը հոգալու դրամական աջակցության որոշում: Սահմանվել է, որ 2023 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար մեր հայրենակիցներին կցուցաբերվի 50 հազարական ՀՀ դրամ աջակցություն՝ բացառությամբ նրանց, ովքեր բանկային հաշիվներին ունեն ավելի քան 2 մլն ՀՀ դրամ դրամական միջոցներ: Այս ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է շուրջ 10 մլրդ ՀՀ դրամ: Նոյեմբեր ամսվա աջակցություն ստացածների թիվը կազմել է 69 429, իսկ դեկտեմբերինը՝ 74 435: Դեկտեմբերի 31-ի դրությամբ այս ծրագրի ֆինանսավորման փաստացի բյուջեն կազմել է շուրջ 7,2 մլրդ ՀՀ դրամ:

2023 թվականի հոկտեմբերից հետո բռնի տեղահանվածներին հումանիտար օգնության նպատակով դրամական կամ բնաիրային աջակցություն են ցուցաբերել նաև մեծ թվով օտարերկրյա կառավարություններ: Աջակցության զգալի մասը հատկացվել է Կարմիր խաչի միջազգային կոմիտեին, ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն

հանձնակատարի գրասենյակին և զարգացման գործակալություններին: Հատկացված աջակցության ընդհանուր գումարը կազմել է շուրջ 109 մլն ԱՄՆ դոլար, որից՝ շուրջ 36 մլն ԱՄՆ դոլարը՝ ՄԱԿ ՓԳՀԳ-ի և Փախստականների կարիքների արձագանքման ծրագրի շրջանակներում գործընկեր կառույցների միջոցով, շուրջ 26 մլն ԱՄՆ դոլարը՝ ԿԽՄԿ-ի միջոցով, շուրջ 13 մլն ԱՄՆ դոլարը՝ ԱՄՆ ՄԶԳ-ի միջոցով:

ԵՄ-ն և մի շարք օտարերկրյա կառավարություններ ցուցաբերել են ուղիղ բյուջետային աջակցություն՝ շուրջ 17 մլն ԱՄՆ դոլարի չափով, ևս շուրջ 16 մլն ԱՄՆ դոլար հատկացվել է Համաշխարհային բանկին՝ բյուջետային աջակցության վարկերի արտոնյալության աստիճանը բարձրացնելու նպատակով:

2023 թվականի հոկտեմբերի 19-ին Կառավարությունը հաստատել է բնաիրային եղանակով ստացված մարդասիրական օգնության (ներառյալ սննդամթերքը) բաշխման կարգը և իրականացրել է բաշխումներ մարզերում բնակվող բռնի տեղահանվածներին:

Առանձին հումանիտար աջակցության ծրագրեր իրականացրել են նաև հայաստանյան և օտարերկրյա առևտրային ու բարեգործական մի շարք կազմակերպություններ, որոնք միտված են եղել մեր տեղահանված հայրենակիցների սննդի, կեցության պայմանների, կրթության և առողջապահական խնդիրների լուծմանը:

2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի հանրակրթական դպրոցներում կրթություն է ստանում բռնի տեղահանված շուրջ 17 300 աշակերտ:

2023 թվականի հոկտեմբերի 12-ին Կառավարությունը հաստատել է բուհերում և միջին մասնագիտական կրթական հաստատություններում բռնի տեղահանված ուսանողների ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման կարգը, որով ուսանողները կստանան 2023-2024 ուսումնական տարվա ուսման վարձը վճարելու կրթաթոշակներ: 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ այս աջակցության շահառու են դարձել բուհերի 1 897 և միջին մասնագիտական կրթական հաստատությունների 917 ուսանողներ:

2023 թվականի հոկտեմբերից սկսվել է առողջության առաջնային պահպանման օղակում բռնի տեղահանվածների հաշվառումը: Դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱԱՊ օղակում հաշվառված է 66 263 բռնի տեղահանված: 2023 թվականի հոկտեմբերից մինչև դեկտեմբերի 31-ը պետական պատվերի շրջանակում գրանցվել է բռնի տեղահանվածներին սպասարկման 5 796 հիվանդանոցային բուժօգնության դեպք:

2023 թվականի հոկտեմբերի 26-ին Կառավարությունը կայացրել է որոշում՝ ԼՂ-ի բռնի տեղահանված անձանց ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ տրամադրելու վերաբերյալ, ինչի արդյունքում նրանց համար հասանելի են դարձել սոցիալական պաշտպանության այն բոլոր միջոցները, որոնք ՀՀ օրենսդրությամբ սահմանված են փախստականների համար:

Սահմանվել է նաև կենսաթոշակների և նպաստների նշանակման պարզեցված կարգ: 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կենսաթոշակի կամ նպաստի դիմում է

ներկայացրել ավելի քան 13 300 բռնի տեղահանված, որոնցից 11 785-ի վճարումներն արդեն կատարվում են (այդ թվում՝ 11 038 կենսաթոշակ): Նպաստների դիմումներ են ստացվել 930 անձից, այդ թվում՝ 165-ը երեխայի ծննդյան միանվագ նպաստի համար, 626-ը՝ մինչև 2 տարեկան երեխաների խնամքի նպաստի համար:

2023 թվականի հոկտեմբերի 12-ին Կառավարությունը հաստատել է բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության ծրագիրը: Սահմանվել է, որ ուսուցիչներն արտամրցութային կարգով կարող են գործուղվել մարզային դպրոցներ: Պայմանագրի կնքման պահից մինչև 2-րդ ուսումնական տարվա ավարտը գործուղված ուսուցչին կտրվի լրացուցիչ վճար՝ աշխատավարձի 30%-ի չափով, իսկ Սյունիքի, Վայոց ձորի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերի սահմանված բնակավայրերում՝ ևս 50 հազար ՀՀ դրամ լրավճար: Դեկտեմբերի 31-ի դրությամբ ծրագրի շրջանակում գործուղվել է 212 ուսուցիչ, այդ թվում՝ 51-ը Կոտայքի, 40-ը Արարատի, 35-ը Արմավիրի, 20-ը Սյունիքի մարզեր:

Առողջապահության ոլորտում բռնի տեղահանվածներին աշխատանքով ապահովելու նպատակով 2023 թվականի հոկտեմբերից հաշվառվել և շարունակական մասնագիտական զարգացման հնարավորություն է ստացել 762 բուժաշխատող: Հայաստանի բժշկական կազմակերպություններում աշխատանքի է ընդունվել 187 բուժաշխատող (12-ը՝ մարզերում):

Բռնի տեղահանվածների զբաղվածությունը խթանելու նպատակով Կառավարությունը 2023 թվականի դեկտեմբերին հաստատել է աջակցության ծրագիր, որը նախատեսում է մշակող արդյունաբերության ոլորտում գործատուին վերադարձնել տարեկան մինչև 500 հազար ՀՀ դրամ եկամտային հարկ, եթե գործատուն բռնի տեղահանված աշխատակցին 12 ամիս անընդմեջ ապահովի աշխատանքով:

2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանում աշխատանքի է անցել շուրջ 10 000 բռնի տեղահանված:

2023 թվականի դեկտեմբերին ընդունվել են օրենսդրական փոփոխություններ, որոնցով իրավաբանական անձանց համար սահմանվել են վերագրանցումների պարզեցված ընթացակարգեր:

ԼՂ-ից բռնի տեղահանված ընտանիքներում Հայաստան տեղափոխվելուց հետո 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ծնվել է 294 երեխա:

Ընդհանուր առմամբ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց աջակցության ծրագրերի իրականացման նպատակով 2023 թվականին պետական բյուջեից փաստացի ծախսվել է շուրջ 34 մլրդ ՀՀ դրամ:

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կառավարության վարած արտաքին քաղաքականության նպատակը ՀՀ անկախությունը, ինքնիշխանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը պաշտպանելն ու ամրապնդելն է, ինչը կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ առաջնահերթություն է:

Հայաստան - Վրաստան հարաբերություններ

2024 թվականի հունվարի 26-ին Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին ստորագրել են «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև ռազմավարական գործընկերության հաստատման մասին» հռչակագիրը:

2023 թվականին տեղի է ունեցել Նիկոլ Փաշինյանի և Իրակլի Ղարիբաշվիլիի վեց հանդիպում, որից չորսը՝ միջազգային հարթակներում (Մյունխենում, Քիշնևում, Թբիլիսիում և Փարիզում) և երկու հեռախոսազրույց:

2023 թվականի ապրիլի 7-ին Թբիլիսիում կայացել է Հայաստան-Վրաստան գործարար համաժողովը, որի շրջանակներում ստորագրվել են ՀՀ Իջևան համայնքի և Վրաստանի Ռուսթավի քաղաքի միջև, ինչպես նաև «Հայփոստ» ՓԲԸ-ի և «Վրացական փոստ» ՍՊԸ-ի միջև համագործակցության հուշագրեր:

2023 թվականի հուլիսի 7-8-ը տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի աշխատանքային այցը Բաթում, իսկ հոկտեմբերի 26-27-ին ՀՀ վարչապետը Թբիլիսիում մասնակցել է «Թբիլիսիի Մետաքսի ճանապարհ» համաժողովին, որի ընթացքում ներկայացրել է «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը: Համաժողովին զուգահեռ անցկացվել է նաև գործարար համաժողով, որին մասնակցել են հայաստանյան մի շարք կազմակերպություններ:

2023 թվականին Հայաստան է այցելել Վրաստանի պաշտպանության նախարարը, իսկ Վրաստան՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը, ՀՀ գլխավոր դատախազը, ՀՀ ՊԵԿ նախագահը, ՀՀ քննչական կոմիտեի նախագահը, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահը, ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղարը, ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարը:

2023 թվականի արդյունքներով Հայաստանի և Վրաստանի միջև առևտրաշրջանառությունը կազմել է շուրջ 1,1 մլրդ ԱՄՆ դոլար (ներմուծման ցուցանիշներն ըստ արտահանող երկրի)՝ 2022 թվականի համեմատ աճելով 25%-ով:

Հայաստան - Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթաց

Տարվա սկզբից ՀՀ կառուցողական ջանքերն ուղղված են եղել տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատմանը և Ադրբեջանի հետ հարաբերությունների

կարգավորմանը: Այս գործընթացում Հայաստանի համար շարունակել են առանցքային մնալ մի շարք սկզբունքներ՝

- Հայաստանը և Ադրբեջանը 1991 թվականի դեկտեմբերի 21-ի Ալմա-Աթայի հռչակագրի հիման վրա պետք է ճանաչեն միմյանց տարածքային ամբողջականությունն առանց որևէ երկիմաստությունների և կամայական մեկնաբանությունների՝ ընդհուպ հստակ նշելով մակերեսները,
- երկու երկրների միջև միջպետական սահմանը պետք է սահմանազատվի իրավական հիմքով և իրավասու մարմինների կողմից իրենց լիազորությունների շրջանակներում կազմված ԽՍՀՄ ժամանակաշրջանի վերջին՝ պատշաճ իրավական հիմքով ձևավորված տոպոգրաֆիկ քարտեզների հիման վրա. Ալմա-Աթայի հռչակագիրը սահմանազատման գործընթացի քաղաքական հենքն է,
- տարածաշրջանային տնտեսական և տրանսպորտային ենթակառուցվածքները պետք է ապաշրջափակվեն՝ համաձայն երկու երկրների ինքնիշխանության և իրավազորության հարգման, փոխադարձության և հավասարության սկզբունքների:

Այս սկզբունքները համաձայնեցվել են 2022 թվականի հոկտեմբերի 6-ի Պրահայի քառակողմ, 2022 թվականի հոկտեմբերի 31-ի Սոչիի եռակողմ, ինչպես նաև 2023 թվականի մայիսի 14-ի և հուլիսի 15-ի Բրյուսելի եռակողմ հանդիպումների ընթացքում և ամրագրվել են համապատասխան հայտարարություններով: Բացի Եվրոպայի խորհրդի նախագահի միջնորդությամբ՝ մայիսի 14-ին և հուլիսի 15-ին Բրյուսելում տեղի ունեցած հանդիպումներից, 2023 թվականին ՀՀ վարչապետի և Ադրբեջանի նախագահի մասնակցությամբ տեղի է ունեցել ևս երեք հանդիպում, այդ թվում՝ մեկ եռակողմ հանդիպում ԱՄՆ պետքարտուղարի միջնորդությամբ (փետրվարի 18-ին Մյունխենում), մեկ եռակողմ հանդիպում ՌԴ նախագահի միջնորդությամբ (մայիսի 25-ին Մոսկվայում) և մեկ հնգակողմ հանդիպում Ֆրանսիայի նախագահի, Գերմանիայի կանցլերի և Եվրոպական խորհրդի նախագահի միջնորդությամբ (հունիսի 1-ին Քիշնևում): Կար պայմանավորվածություն, որ հաջորդ հնգակողմ հանդիպումը տեղի է ունենալու հոկտեմբերի սկզբին Գրանադայում կայանալիք Եվրոպական քաղաքական համայնքի հաջորդ գագաթնաժողովի ընթացքում, իսկ հաջորդ եռակողմ հանդիպումը՝ ենթադրաբար նոյեմբերին՝ Բրյուսելում, սակայն Ադրբեջանի նախագահը հրաժարվեց մասնակցել թե՛ մեկին, թե՛ մյուսին:

Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարները երկու անգամ բանակցություններ են ունեցել ԱՄՆ միջնորդությամբ (մայիսի 1-4 և հունիսի 27-29), երկու անգամ հանդիպել են նաև ՌԴ արտաքին գործերի նախարարի միջնորդությամբ (մայիսի 19 և հուլիսի 25): Նախարարները և նրանց թիմերը «Խաղաղության և միջպետական հարաբերությունների հաստատման մասին» երկկողմ համաձայնագրի նախագծի որոշ հոդվածների շուրջ կարողացել են գրանցել առաջընթաց, սակայն մի շարք սկզբունքային հարցերում չի հաջողվել հասնել փոխըմբռնման:

Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարները ոչ պաշտոնական երկկողմ շփումներ են ունեցել նաև 2023 թվականի հոկտեմբերի 23-ին Թեհրանում՝ «3+3» ձևաչափով նախարարական հանդիպման շրջանակներում:

Հատկանշական է, որ Ադրբեջանի նախագահի կողմից հանդիպման առաջարկները մերժելուն զուգահեռ բանակցություններից հրաժարվել է նաև Ադրբեջանի արտաքին գործերի նախարարը:

Այդուհանդերձ, խաղաղության և հարաբերությունների կարգավորման պայմանագրի նախագծի խմբագրական առաջարկների փոխանակումը կողմերի միջև շարունակվել է: 2023 թվականի տարեվերջին Հայաստանն ստացել է և արդեն 2024 թվականի առաջին օրերին Ադրբեջանին է փոխանցել պայմանագրի նախագծի 7-րդ խմբագրությունը: Կողմերի հրապարակային հավաստիացմամբ՝ առկա է փոխհամաձայնության գալու իրական հնարավորություն:

2023 թվականի հուլիսի 12-ին և նոյեմբերի 30-ին տեղի են ունեցել Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման ու սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի և Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի չորրորդ և հինգերորդ հանդիպումները:

Նոյեմբերի 30-ին տեղի ունեցած հանդիպման ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն դեկտեմբերի 14-ին երկու երկրների կառավարությունների կողմից հաստատվել է ՀՀ և ԱՀ միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովների միջև նիստերի և համատեղ աշխատանքային հանդիպումների կազմակերպման և անցկացման աշխատակարգը:

Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանազատման վերաբերյալ դրույթը տեղ է գտել նաև հոկտեմբերի 5-ին Գրանադայում կայացած քառակողմ հանդիպման արդյունքում ընդունված հայտարարության մեջ, որում, մասնավորապես, ընդգծվում է սահմանների սահմանազատման ուղղությամբ աշխատելու հրատապ անհրաժեշտությունը՝ հիմնվելով կողմերին տրամադրված ԽՍՀՄ գլխավոր շտաբի ամենավերջին քարտեզների վրա, որոնք պետք է նաև հիմք հանդիսանան ուժերի հետքաշման, խաղաղության պայմանագիրը վերջնական տեսքի բերելու և հումանիտար բոլոր խնդիրները լուծելու համար:

2023 թվականին տեղի է ունեցել ՀՀ, ՌԴ և ԱՀ փոխվարչապետերի համանախագահությամբ տարածաշրջանային տնտեսական և տրանսպորտային հաղորդակցությունների ապաշրջափակման եռակողմ աշխատանքային խմբի մեկ նիստ (ստեղծման օրվանից ի վեր տեղի է ունեցել 12 նիստ):

2023 թվականի ընթացքում Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների մակարդակով կայացած հանդիպումների ընթացքում կողմերը համաձայնեցրել են

ապաշրջափակման սկզբունքները՝ հաստատելով, որ բոլոր ենթակառուցվածքները պետք է գործեն երկրների ինքնիշխանության, իրավազորության ներքո և հավասարության ու փոխադարձության սկզբունքների հիման վրա: Նշյալ սկզբունքները քննարկվել և դրանց վերաբերյալ համաձայնություն է ձեռք բերվել նաև ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղարի և Ադրբեջանի նախագահի խորհրդականի հանդիպումների ընթացքում: Առանձին հանդիպումների ընթացքում համաձայնելով այդ սկզբունքների հետ՝ ադրբեջանական կողմը տարվա ընթացքում խուսափել է դրանք առարկայական հաստատելուց և խաղաղության պայմանագրում կամ որևէ առանձին հայտարարությամբ ամրագրելուց:

Ապաշրջափակման համատեքստում 2023 թվականի հոկտեմբերին ՀՀ վարչապետի կողմից հրապարակվել է հայկական կողմի մշակած և խաղաղության օրակարգի կարևոր բաղադրիչ հանդիսացող **«Խաղաղության խաչմերուկ»** նախագիծը, որով հստակ նկարագրվում են տարածաշրջանում տրանսպորտային և այլ ենթակառուցվածքային կապերի ապաշրջափակման հեռանկարը, կառուցվածքը, տրամաբանությունը և հիմնական սկզբունքները:

2023 թվականի դեկտեմբերի 7-ին ՀՀ վարչապետի և ԱՀ նախագահի աշխատակազմերը համատեղ հայտարարություն են ընդունել, որով վերահաստատել են ինքնիշխանության և տարածքային ամբողջականության սկզբունքների հարգման հիման վրա Հայաստանի և Ադրբեջանի հարաբերությունները կարգավորելու և խաղաղության պայմանագրի կնքմանը հասնելու իրենց մտադրությունը: Հայաստանն իր աջակցությունն է հայտնել ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի մասնակիցների կոնֆերանսի 29-րդ նստաշրջանը («COP29») հյուրընկալելու նպատակով Ադրբեջանի ներկայացրած հայտին՝ հանելով իր թեկնածությունը: Ադրբեջանն իր հերթին աջակցություն է հայտնել Արևելյան Եվրոպայի խմբի «COP»-ի բյուրոյին անդամակցելու համար առաջադրված՝ ՀՀ թեկնածությանը:

Ադրբեջանն ազատ է արձակել 32 հայ զինծառայողի: Հայաստանն իր հերթին ազատ է արձակել ադրբեջանցի 2 զինծառայողի:

Դեկտեմբերի 7-ի համատեղ հայտարարության մեջ նշվում է վստահության կառուցման ավելի շատ միջոցառումների անհրաժեշտությունը: Արդեն 2024 թվականի հունվարի 26-ին Հայաստանն Ադրբեջանին է փոխանցել ականապատ դաշտերի նոր քարտեզներ, որոնք ի հայտ են եկել ԼՂ նախկին զինծառայողների շրջանում ՀՀ ԱԱԾ-ի իրականացրած հարցումային աշխատանքի արդյունքում: 2024 թվականի հունվարի 27-ին Գերիների, պատանդների և անհետ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց հարցերով զբաղվող ՀՀ միջգերատեսչական հանձնաժողովը հանդես է եկել հայտարարությամբ, որով ադրբեջանական կողմին առաջարկել է ակտիվացնել համագործակցությունը:

Այդուհանդերձ, Ադրբեջանը շարունակում է պատանդառության մեջ պահել 23 անձի, որոնցից 16-ը գերության մեջ են հայտնվել սեպտեմբերի 19-ի ռազմական գործողությունների հետևանքով: Կան փաստական տվյալներ առնվազն 32 անձանց՝

2020 թվականի պատերազմից հետո բռնի անհետացման վերաբերյալ, որոնց ճակատագրի մասին Ադրբեջանը տվյալներ չի հաղորդում: Շարունակում է բաց մնալ 2020 թվականի 44-օրյա պատերազմում և դրանից հետո անհետ կորած համարվող 215 և 1990-ականներին անհետ կորած 777 ՀՀ քաղաքացիների և ԼՂ-ի հայերի ճակատագիրը:

Հայաստան - Իրան հարաբերություններ

2023 թվականի հունիսի 26-ին և սեպտեմբերի 9-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույցներ է ունեցել ԻԻՀ նախագահ Սեյեդ Էբրահիմ Ռայիսիի հետ:

Հաշվետու տարվա հուլիսի 24-ին և հոկտեմբերի 23-ին կայացել է ՀՀ արտաքին գործերի նախարարի այցը Թեհրան, որի շրջանակներում հանդիպումներ են կայացել նաև ԻԻՀ նախագահի հետ:

2023 թվականի դեկտեմբերի 27-ին Հայաստան է այցելել ԻԻՀ արտաքին գործերի նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանը: ՀՀ արտաքին գործերի նախարարը և ԻԻՀ արտաքին գործերի նախարարը հանդիպումներ են ունեցել նաև տարբեր միջազգային հարթակներում, մասնավորապես, փետրվարի 27-ին՝ Ժնևում և սեպտեմբերի 19-ին՝ Նյու Յորքում:

2023 թվականի հունվարի 18-23-ը ՀՀ վարչապետի տիկին Աննա Հակոբյանի գլխավորած պատվիրակությունն այցելել է Թեհրան՝ հունվարի 20-ին կայացած՝ Ազդեցիկ կանանց միջազգային համագումարին մասնակցելու նպատակով: Այցի շրջանակում ՀՀ վարչապետի տիկին Աննա Հակոբյանը հանդիպել է ԻԻՀ նախագահի տիկին Ջամիլե Սադաթ Ալամոլհոդայի և ԻԻՀ նախագահի՝ կանանց և ընտանիքի հարցերով տեղակալ Էնսիե Խազալիի հետ:

2023 թվականի հունվարի 31-ին ՀՀ փոխվարչապետ Միհեր Գրիգորյանի և ԻԻՀ նախագահի տեղակալ Սեյեդ Մասուդ Միրքազեմիի համանախագահությամբ Թեհրանում կայացել է Հայաստան-Իրան միջկառավարական համատեղ հանձնաժողովի 17-րդ նիստի պայմանավորվածությունների ընթացքը մշտադիտարկող հանձնախմբի նիստը: Նույն թվականի օգոստոսի 10-ին Երևանում ստորագրվել է «Գազ-էլեկտրաէներգիայի դիմաց» ծրագիրը մինչև 2030 թվականը երկարաձգելու պայմանագիրը: Հոկտեմբերի 23-ին ԻԻՀ ճանապարհների և քաղաքաշինության նախարարի Հայաստան այցի ընթացքում ստորագրվել է Ագարակ-Քաջարան 32 կմ ճանապարհահատվածի շինարարության մրցույթում իրանական համատեղ ձեռնարկությանը հաղթող ճանաչելու մասին փաստաթուղթը:

2023 թվականի ապրիլի 9-ին ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղարն Իրանում հանդիպել է ԻԻՀ ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղարի հետ: Հոկտեմբերի 1-2-ը կայացել է ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղարի հերթական այցը Թեհրան, որի շրջանակում հանդիպումներ են տեղի ունեցել ԻԻՀ նախագահի, ԱԱԳԽ քարտուղարի, Արտաքին գործերի նախարարի և ՀՈՒ ԳՇ պետի հետ:

2023 թվականի ընթացքում ԻԻՀ են այցելել նաև ՀՀ առողջապահության, ՀՀ շրջակա միջավայրի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարները:

2023 թվականի արդյունքներով Հայաստանի և Իրանի միջև առևտրաշրջանառությունը կազմել է շուրջ 692,5 մլն ԱՄՆ դոլար:

Հայաստան - Թուրքիա հարաբերությունների կարգավորում

2023 թվականն առանձնացել է բարձր մակարդակի մի շարք հանդիպումներով, որոնք դրական հիմք են ստեղծել հետագա գործընթացների համար:

2023 թվականի հունվարի 6-ին թուրքական կողմը տեղեկացրել է, որ վերացվել են երկու երկրների միջև ուղիղ օդային բեռնափոխադրումներ կատարելու համար նախկինում առկա արգելքները:

Թուրքիայում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժից հետո 2023 թվականի փետրվարի 8-ին ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության որոնողափրկարարական թիմը գործուղվել է Թուրքիայի Ադըյաման քաղաք և մասնակցել երկրաշարժի հետևանքների վերացման աշխատանքներին:

2023 թվականի փետրվարի 11-14-ն ընկած ժամանակահատվածում Մարգարայի կամրջով 112 տոննա հումանիտար բեռով 7 հայկական բեռնատար հատել է հայ-թուրքական սահմանը և ուղևորվել աղետի գոտի: Փետրվարի 15-ին ՀՀ արտաքին գործերի նախարարի գլխավորած պատվիրակությունն այցելել է Թուրքիա: Անկարայում տեղի է ունեցել ՀՀ-ի և Թուրքիայի արտաքին գործերի նախարարների հանդիպումը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ ջանքերով վերանորոգել Անիի պատմական կամուրջը: Նույն օրը ՀՀ արտաքին գործերի նախարարը մեկնել է աղետի գոտի՝ Ադըյաման, որտեղ հանդիպել է ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության որոնողափրկարարական թիմին:

2023 թվականի հունիսի 3-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն Անկարայում մասնակցել է Թուրքիայի վերընտրված նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի պաշտոնամուտի արարողությանը: 2023 թվականի փետրվարի 7-ին, հունիսի 28-ին և սեպտեմբերի 11-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ԹՀ նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի միջև տեղի են ունեցել հեռախոսազրույցներ, որոնց ընթացքում երկուստեք ընդգծվել է տարածաշրջանում երկարատև խաղաղություն և կայունություն հաստատելու, ինչպես նաև երկկողմ հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունը:

2023 թվականի հոկտեմբերի 23-ին Թեհրանում «3+3» տարածաշրջանային խորհրդակցական հարթակի հանդիպման շրջանակներում տեղի է ունեցել ՀՀ արտաքին գործերի նախարարի և ԹՀ արտաքին գործերի նախարարի հանդիպումը, որի ընթացքում քննարկվել են ընթացիկ տարածաշրջանային և երկկողմ օրակարգային հարցեր: Կողմերը վերահաստատել են նախկինում ձեռք բերված պայմանավորվածություններն ի

կատար ածելու պատրաստակամությունը: Հայաստանի և Թուրքիայի արտաքին գործերի նախարարներն ունեցել են նաև երկու հեռախոսազրույց՝ 2023 թվականի հունիսի 7-ին և սեպտեմբերի 27-ին:

Հայաստան - Ռուսաստան հարաբերություններ

2023 թվականի ընթացքում շարունակվել է ՌԴ-ի հետ բարձրագույն և բարձր մակարդակներով երկխոսությունը:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի միջև 2023 թվականի ընթացքում տեղի են ունեցել 2 հանդիպում (մայիսի 25-ին Մոսկվայում և հունիսի 9-ին Սոչիում) և 9 հեռախոսազրույց:

2023 թվականի օգոստոսի 24-ին Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի շրջանակում Ծաղկաձորում տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ՌԴ կառավարության նախագահ Միխայիլ Միշուստինի հանդիպումը:

2023 թվականի դեկտեմբերի 15-ին ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի և ՌԴ փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկի համանախագահությամբ Երևանում կայացել է ՀՀ-ՌԴ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 22-րդ նիստը, որի ընթացքում, մասնավորապես, հաստատվել է 2023-2025 թթ. երկու երկրների կառավարությունների տնտեսական համագործակցության ծրագրի միջոցառումների պլանը:

2023 թվականի ընթացքում կայացել է ՀՀ և ՌԴ արտաքին գործերի նախարարների 6 հանդիպում:

2023 թվականի արդյունքներով ՀՀ-ի և ՌԴ-ի միջև առևտրաշրջանառությունը (ներմուծման ցուցանիշներն ըստ արտահանող երկրի) կազմել է շուրջ 7,5 մլրդ ԱՄՆ դոլար՝ 2022 թվականի համեմատ աճելով 39,4%-ով:

Հայաստան - ԱՄՆ հարաբերություններ

2023 թվականի ընթացքում շարունակվել է ԱՄՆ-ի հետ ռազմավարական երկխոսության ու գործընկերության ամրապնդումը, խորացումը և ընդլայնումը՝ ժողովրդավարության, օրենքի գերակայության, մարդու իրավունքների պաշտպանության, կոռուպցիայի դեմ պայքարի, արդարադատության ու դատաիրավական համակարգի բարեփոխումների, անվտանգության և այլ ուղղություններով:

2023 թվականի ընթացքում կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի 8 հեռախոսազրույց:

Մարտի 29-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնակցել և ելույթով է հանդես եկել ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի նախաձեռնած «Հանուն ժողովրդավարության» երկրորդ գագաթնաժողովին:

2023 թվականի ընթացքում Հայաստան-ԱՄՆ Ռազմավարական երկխոսության շրջանակում կայացել են Տնտեսության և էներգետիկայի հարցերով աշխատանքային խմբի և Արդարադատության և իրավապահ մարմինների ու ժողովրդավարության հարցերով աշխատանքային խմբի նիստերը:

Սեպտեմբերի 25-ին Հայաստան է ժամանել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տնօրեն Սամանթա Փաուերը:

2023 թվականի ընթացքում ՀՀ արտաքին գործերի նախարարը երեք հանդիպում է ունեցել ԱՄՆ պետքարտուղարի հետ, որոնց ընթացքում քննարկվել են երկկողմ օրակարգի առանցքային հարցերը, ինչպես նաև տարածաշրջանային զարգացումները:

Հունիսին Հայաստան են այցելել ԱՄՆ Կանզաս նահանգի նահանգապետը, Կանզասի Ազգային գվարդիայի հրամանատարը և ԱՄՆ պետքարտուղարության պատժամիջոցների համակարգման գրասենյակի ղեկավարը:

2023 թվականի արդյունքներով Հայաստանի և ԱՄՆ-ի միջև առևտրաշրջանա-ռությունը կազմել է 670,1 մլն ԱՄՆ դոլար՝ 2022 թվականի համեմատ աճելով 45,1%-ով:

Հայաստան - ԵՄ հարաբերություններ

ՀՀ-ԵՄ քաղաքական երկխոսությունն զգալիորեն խորացել է՝ էապես բարձրացնելով քաղաքական երկխոսության մակարդակը և ընդգրկելով նոր բաղադրիչներ, այդ թվում՝ անվտանգության ոլորտում:

2023 թվականի հունվարի 23-ին ԵՄ խորհուրդը որոշում է ընդունել Հայաստանում երկարաժամկետ (երկու տարի) քաղաքացիական առաքելության տեղակայման վերաբերյալ: Առաքելության գործունեության մեկնարկը տրվել է 2023 թվականի փետրվարի 20-ին: Առաքելության նպատակն է Հայաստան-Ադրբեջան սահմանի հայկական կողմում իր տեղակայման միջոցով նպաստել Հայաստանի սահմանամերձ գոտիներում կայունությանը, կառուցել վստահություն և մարդկային անվտանգություն հակամարտությունից տուժած տարածքներում և ապահովել այնպիսի միջավայր, որը կնպաստի Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունների կարգավորման՝ ԵՄ-ի աջակցությամբ գործադրվող ջանքերին: Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Հայաստանում ԵՄ առաքելության կարգավիճակի վերաբերյալ համաձայնագիրն ստորագրվել է նոյեմբերի 20-ին, իսկ դեկտեմբերի 12-ին ԵՄ Արտաքին գործերի խորհուրդը համաձայնություն է տվել քաղաքացիական առաքելության թվաքանակի ավելացմանը՝ 138-ից հասցնելով 209-ի:

2023 թվականին ՀՀ-ի և ԵՄ-ի միջև մեկնարկել է քաղաքական և անվտանգային հարցերով երկխոսությունը, որի առաջին նիստը տեղի է ունեցել Երևանում՝ հունվարի 26-ին, իսկ երկրորդ նիստը՝ Բրյուսելում՝ նոյեմբերի 15-ին: Նիստերի արդյունքում

ընդունվել են համատեղ հայտարարություններ, որտեղ, ի թիվս այլ հարցերի, անդրադարձ է կատարվել Հարավային Կովկասում տիրող իրավիճակին՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունների կարգավորմանն ու ԼՂ-ին առնչվող հարցերին:

Տարվա ընթացքում շարունակվել են շփումները ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի միջև: Կայացել են երեք հեռախոսազրույց (մարտի 25-ին, մարտի 30-ին, ապրիլի 26-ին) և հինգ հանդիպում (փետրվարի 2-ին, մայիսի 13-ին, հունիսի 1-ին, հուլիսի 15-ին և հոկտեմբերի 5-ին):

ՀՀ վարչապետը հանդիպումներ (փետրվարի 17-ին և հոկտեմբերի 5-ին) և հեռախոսազրույց (հոկտեմբերի 2-ին) է ունեցել նաև Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենի հետ:

Գրանադայում հոկտեմբերի 5-ին կայացած հանդիպման արդյունքում ընդունվել է համատեղ հայտարարություն, որում անդրադարձ է կատարվել Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունների կարգավորմանը, ԼՂ-ից բռնի տեղահանվածների կարիքների հասցեագրմանը, ինչպես նաև ՀՀ-ԵՄ տնտեսական կապերի ակտիվացմանը: Տնտեսական համագործակցության շրջանակներում ընդգծվել է Հանձնաժողովի պատրաստակամությունն աջակցելու Հայաստանի մասնակցությանը տարածաշրջանային նախագծերում:

2023 թվականի հունիսի 1-ին և հոկտեմբերի 5-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Քիշնևում և Գրանադայում մասնակցել է Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովներին, որոնց շրջանակներում ունեցել է երկկողմ շփումներ մասնակից երկրների առաջնորդների հետ:

Հայաստան-ԵՄ հարաբերությունների համար առանցքային էր 2023 թվականի հոկտեմբերի 16-17-ը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի այցը Եվրոպական խորհրդարան, որի շրջանակներում ՀՀ վարչապետը ելույթով հանդես եկավ Եվրոպական խորհրդարանի լիագումար նիստին:

2023 թվականի հունվարի 24-ին, նոյեմբերի 15-ին և դեկտեմբերի 11-ին ՀՀ արտաքին գործերի նախարարն աշխատանքային այցերով եղել է Բրյուսելում, որոնց շրջանակներում ելույթով հանդես է եկել Եվրոպական խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում, ԱլԳ Քաղաքացիական հասարակության ֆորումի գլխավոր վեհաժողովի տարեկան հանդիպմանը, ինչպես նաև մասնակցել է ԵՄ անդամ երկրների արտաքին գործերի նախարարների ոչ պաշտոնական հանդիպ-մանն ու ԵՄ Արևելյան գործընկերության արտաքին գործերի նախարարների նիստին:

2023 թվականին ՀՀ արտաքին գործերի նախարարը 5 հանդիպում (հունվարի 25-ին, մարտի 3-ին, սեպտեմբերի 19-ին, հոկտեմբերի 5-ին, նոյեմբերի 29-ին) և 1 հեռախոսա-զրույց (օգոստոսի 2-ին) է ունեցել ԵՄ արտաքին գործերի ու անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելի հետ:

Հայաստան-ԵՄ հարաբերությունների հետագա խորացման համար առանցքային էր 2023 թվականի նոյեմբերի 27-29-ը ԵՄ բարձրաստիճան պատվիրակության այցը Հայաստան, որի շրջանակներում նոյեմբերի 29-ին Երևանում տրվեց ԵՄ Տնտեսական և ներդրումային պլանից բխող ուղենշային նախաձեռնությունների իրագործման խթանմանն ուղղված ՀՀ–ԵՄ ներդրումների համակարգման հարթակի մեկնարկը:

Տնտեսական և ներդրումային պլանի ներքո հաստատված 5 ուղենիշների շրջանակներում 2023 թվականի վերջի դրությամբ շուրջ 550 մլն եվրո արժողությամբ ծրագրեր են հաստատվել և մեկնարկել:

ԵՄ-ի հետ համագործակցության շրջանակներում 2023 թվականի ընթացքում հաստատվել է 49,5 մլն եվրո ընդհանուր արժողությամբ երեք դրամաշնորհային համաձայնագիր (2-ը՝ բյուջետային աջակցության տրամաբանությամբ), մասնավորապես, «Հայաստանում ԵՄ աջակցությունը կրթությանը» (32 մլն եվրո), «Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների իրականացմանը. Փուլ II» (11 մլն եվրո) և «Կայուն էներգիա, էներգետիկ անվտանգություն և կլիմայի փոփոխություն-ների նկատմամբ դիմակայունություն Հայաստանի գյուղական վայրերում» (6,5 մլն եվրո):

2023 թվականին տրվել է ԵՄ-ի, ԵՄ անդամ մի շարք պետությունների, Շվեյցարիայի, ինչպես նաև ԵՆԲ-ի համատեղ «Դիմակայուն Սյունիք Թիմ Եվրոպա նախաձեռնության» պաշտոնական մեկնարկը, որի սկզբնական բյուջեն առաջիկա 5 տարիների համար հայտարարվել էր շուրջ 51 մլն եվրո, իսկ տարվա ընթացքում ավելացել է՝ դառնալով շուրջ 116 մլն եվրո: Նախաձեռնության հիմնական նպատակներն են՝ նպաստել Սյունիքի մարզում ձեռնարկությունների համար գործարար միջավայրի բարելավմանը, մասնավոր հատվածի մրցունակության բարձրացմանը, քաղաքացիակենտրոն և որակյալ հանրային ծառայությունների հասանելիության ընդլայնմանը, տարածքային «կանաչ» զարգացման մոտեցումների կիրառմանը:

2023 թվականի արդյունքներով Հայաստանի և ԵՄ երկրների միջև առևտրաշրջանառու-թյունը 2022 թվականի համեմատ աճել է 17,1%-ով՝ կազմելով շուրջ 2,7 մլրդ ԱՄՆ դոլար:

Հայաստան - Ֆրանսիա հարաբերություններ

Հաշվետու տարում կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի 5 հանդիպում՝ միջազգային հարթակներում մասնակցության շրջանակներում (փետրվարի 17-ին՝ Մյունխենի անվտանգության համաժողով, մայիսի 17-ին՝ Ռեյկյավիկում ԵԽ 4-րդ գագաթնաժողով, հունիսի 1-ին և հոկտեմբերի 5-ին՝ Քիշնևում և Գրանադայում ԵՔՀ 2-րդ և 3-րդ գագաթնաժողովներ), ինչպես նաև նոյեմբերի 9-ին Փարիզում՝ Խաղաղության ֆորումի շրջանակում:

2023 թվականին կայացել է Ֆրանսիայի Ազգային ժողովի նախագահի առաջին այցը Հայաստան:

Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարը հաշվետու տարում երկու անգամ այցելել է Հայաստան, տեղի են ունեցել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի և Ֆրանսիայի մշակույթի նախարարի փոխայցերը, ՀՀ պաշտպանության նախարարի երկու այցը Ֆրանսիա:

Տարվա ընթացքում Հայաստան են այցելել Ֆրանսիայի բազմաթիվ խորհրդարանականներ, ռեգիոնների նախագահներ, փոխնախագահներ, քաղաքապետեր, այդ թվում՝ Փարիզի քաղաքապետը:

2023 թվականի օգոստոսին ֆրանսիական կողմը որոշում է կայացրել հյուպատոսական գրասենյակ բացել Գորիսում:

Հայաստանի և Ֆրանսիայի միջև համագործակցության խորացումն առարկայացել է 2023 թվականին Երևանում Ֆրանսիայի պաշտպանական առաքելության բացմամբ և առաջին ռեզիդենտ ռազմական կցորդի նշանակմամբ և հոկտեմբերին ՀՀ պաշտպանության նախարարի Փարիզ այցի ընթացքում զինտեխնիկայի մատակարարման մասին համաձայնագրերի ստորագրմամբ:

2023 թվականի արդյունքներով Հայաստանի և Ֆրանսիայի միջև առևտրաշրջանառությունը 2022 թվականի համեմատ աճել է 44,4%-ով՝ կազմելով 176,9 մլն ԱՄՆ դոլար:

Հայաստան - Գերմանիա հարաբերություններ

2023 թվականն աննախադեպ էր Հայաստանի և Գերմանիայի միջև բարձր մակարդակի շփումների առումով: Գերմանիան միացավ Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունների կարգավորման միջնորդական ջանքեր գործադրող երկրների խմբին, մասնավորապես, Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցը մասնակցեց հունիսի 1-ին Քիշնևում և հոկտեմբերի 5-ին Գրանադայում կայացած հանդիպումներին:

2023 թվականի ընթացքում աշխատանքային այցով Գերմանիա են այցելել ՀՀ վարչապետը, ՀՀ նախագահը, ՀՀ Ազգային ժողովի նախագահը և ՀՀ արտաքին գործերի նախարարը:

2023 թվականի նոյեմբերի 3-ին տեղի է ունեցել ԳԴՀ արտաքին գործերի նախարարի աշխատանքային այցը Հայաստան: Տարվա ընթացքում Հայաստան են ժամանել նաև Գերմանիայի Բունդեսթագի Գերմանիա-Հարավային Կովկաս պատգամավորական խմբի պատվիրակությունը և Բունդեսթագի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահը:

2023 թվականի նոյեմբերի 21-22-ը Երևանում կայացել են ֆինանսական և տեխնիկական համագործակցության Հայաստան-Գերմանիա միջկառավարական հերթական բանակցությունները:

2023 թվականի արդյունքներով Հայաստանի և Գերմանիայի միջև առևտրաշրջանառությունը 2022 թվականի համեմատ աճել է 20,3%-ով՝ կազմելով 637,5 մլն ԱՄՆ դոլար:

Հայաստան - Միացյալ Թագավորություն հարաբերություններ

2023 թվականն աննախադեպ էր նաև Հայաստան-ՄԹ երկկողմ հարաբերությունների հետագա խորացման առումով:

2023 թվականի մայիսի 22-23-ին և նոյեմբերի 20-ին աշխատանքային այցերով Հայաստանում էր ՄԹ Եվրոպայի հարցերով նախարարը:

Հոկտեմբերի 26-ին ՄԹ է այցելել ՀՀ էկոնոմիկայի նախարարի գլխավորած պատվիրակությունը, որի ընթացքում տեղի է ունեցել հայ-բրիտանական գործարար համաժողով:

Նոյեմբերի 13-ին Լոնդոնում կայացել է ՀՀ արտաքին գործերի նախարարի և ՄԹ Եվրոպայի հարցերով նախարարի հանդիպումը, որով տրվել է ՀՀ-ՄԹ ռազմավարական երկխոսության մեկնարկը: ՄԹ այցի շրջանակներում ՀՀ արտաքին գործերի նախարարը ելույթ է ունեցել հեղինակավոր Չաթամ Հաուս հարթակում:

2023 թվականի նոյեմբերի 13-ին տեղի է ունեցել ՄԹ-ում Հայաստանի դեսպանության նոր շենքի պաշտոնական բացման արարողությունը:

ԵԱՀԿ նախարարական 30-րդ համաժողովի շրջանակներում եղել է շփում ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի և ՄԹ արտաքին գործերի նախարար Դեյվիդ Քեմերոնի միջև:

2023 թվականի դեկտեմբերի 9-ին ՄԹ է այցելել նաև ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղարը և հանդիպել է ՄԹ վարչապետի ազգային անվտանգության հարցերով խորհրդականի հետ:

2023 թվականի արդյունքներով Հայաստանի և ՄԹ-ի միջև առևտրաշրջանառությունը 2022 թվականի համեմատ աճել է 22,2%-ով՝ կազմելով 113 մլն ԱՄՆ դոլար:

Հայաստան - եվրոպական այլ երկրներ հարաբերություններ

2023 թվականի մայիսի 4-5-ը կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի պաշտոնական այցը Չեխիա: Այցի շրջանակներում Հայաստանի և Չեխիայի վարչապետերն ստորագրել են երկու երկրների հարաբերությունների մասին համատեղ հայտարարություն:

Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ արտաքին գործերի նախարարը պաշտոնական այցով եղել է Մալթայում և Ռումինիայում:

2023 թվականի հուլիսի 18-ին կայացել է ՀՀ արտաքին գործերի նախարարի աշխատանքային այցը Վիեննա:

Պաշտոնական և աշխատանքային այցերով Հայաստան են ժամանել Սլովենիայի Ազգային ժողովի նախագահը, Լիտվայի վարչապետը, Հունգարիայի փոխվարչապետը, Սուրբ Աթոռի պետքարտուղարը, Էստոնիայի, Խորվաթիայի, Լյուքսեմբուրգի, Հունգարիայի արտաքին գործերի նախարարները, Իտալիայի մշակույթի նախարարը, Իտալիայի ԶՈՒ ԳՇ պետը, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության գլխավոր տնօրենը:

2023 թվականին Բելգիայի արտաքին գործերի նախարարի՝ Հայաստան կատարած այցի շրջանակներում պաշտոնապես ազդարարվել է Հայաստանում ռեզիդենտ դեսպանության բացման վերաբերյալ որոշման մասին:

Հայաստան - Հնդկաստան հարաբերություններ

2023 թվականի ընթացքում տեղի է ունեցել ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի աշխատանքային այցը Հնդկաստան՝ «Ռաիսինա երկխոսություն» միջազգային համաժողովին մասնակցելու նպատակով: ՀՀ արտաքին գործերի նախարարը հանդիպում է ունեցել Հնդկաստանի արտաքին գործերի նախարարի հետ: Երկու երկրների արտաքին գործերի նախարարները հանդիպել են նաև սեպտեմբերի 24-ին Նյու Յորքում:

2023 թվականին Հնդկաստան են այցելել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարը, ՀՀ առողջապահության նախարարը, ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղարը, ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, ԶՈՒ ԳՇ պետը:

2023 թվականի ապրիլի 20-ին Երևանում կայացել են Հայաստանի, Իրանի և Հնդկաստանի արտաքին գործերի նախարարությունների միջև եռակողմ ձևաչափով առաջին քաղաքական խորհրդակցությունները:

2023 թվականի նոյեմբերի 16-ին Հայաստանի կողմից պաշտոնապես ստորագրվել է Հնդկաստանի և Ֆրանսիայի կողմից համատեղ նախաձեռնված «Միջազգային արևային դաշինքի հիմնադրման մասին» շրջանակային համաձայնագիրը:

Ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխադարձ օգնության մասին» համաձայնագիրը, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության և Հնդկաստանի էլեկտրոնիկայի և տեղեկատվական տեխնոլոգիայի նախարարությունների միջև՝ «Թվային փոխակերպումների համար բնակչության

մասշտաբով իրականացված հաջող թվային լուծումների փոխադարձ տրամադրման ոլորտում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիրը:

2023 թվականի արդյունքներով Հայաստանի և Հնդկաստանի միջև առևտրաշրջանառությունը 2022 թվականի համեմատ աճել է 7,1%-ով՝ կազմելով շուրջ 384 մլն ԱՄՆ դոլար:

Հայաստան - Չինաստան հարաբերություններ

2023 թվականի հունիսի 7-ին Պեկինում կայացել է Առևտրատնտեսական հարցերով հայ-չինական համատեղ հանձնաժողովի 11-րդ նիստը:

Չինաստան են այցելել ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի և ՀՀ պաշտպանության նախարարները:

2023 թվականի հունիսի 2-ին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և ՉԺՀ առևտրի նախարարության միջև ստորագրվել է ՀՀ և ՉԺՀ կառավարությունների միջև Հայաստանի հանրային հեռուստաընկերության նոր տաղավարի կառուցման նախագծի իրականացման պայմանագիրը:

2023 թվականի արդյունքներով Հայաստանի և Չինաստանի միջև առևտրաշրջանառությունը 2022 թվականի համեմատ աճել է 21,3%-ով՝ կազմելով շուրջ 2,1 մլրդ ԱՄՆ դոլար:

Հայաստան - Միջին Արևելքի երկրներ հարաբերություններ

2023 թվականի ընթացքում երկկողմ հարաբերություններում և Հարավային Կովկասի տարածաշրջանային հարցերում մեծ հետաքրքրվածություն էր ցուցաբերվում Արաբական Միացյալ Էմիրությունների կողմից: ՀՀ արտաքին գործերի նախարարի ԱՄԷ այցի ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ ԱՄԷ նախագահի, արտաքին գործերի նախարարի, Դաշնային ժողովի նախագահի, ինչպես նաև համակեցության և հանդուրժողականության հարցերով նախարարի հետ: 2023 թվականին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև 2009 թվականի հունիսի 21-ի՝ դիվանագիտական անձնագրեր ունեցող անձանց մուտքի արտոնագիր ստանալու պահանջից ազատելու մասին» Փոխըմբռնման հուշագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը: Արդյունքում, երկրները վերացրել են քաղաքացիների մուտքի արտոնագրի պահանջը:

2023 թվականի սեպտեմբերի 18-ին Երևանում կայացել է Հայաստան-ԱՄԷ գործարար համաժողովը:

2023 թվականի նոյեմբերի 12-ին ՀՀ պաշտպանության նախարարի գլխավորած պատվիրակությունն աշխատանքային այցով մեկնել է ԱՄԷ:

2023 թվականի արդյունքներով Հայաստանի և ԱՄԷ-ի միջև առևտրաշրջանառությունը 2022 թվականի համեմատ աճել է 3,9 անգամ՝ կազմելով շուրջ 2,3 մլրդ ԱՄՆ դոլար:

Միջին Արևելքի հետ հարաբերությունների համատեքստում հաշվետու տարվա նշանակալի իրադարձություն էր ՀՀ և Սաուդյան Արաբիայի Թագավորության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին արձանագրության ստորագրումը:

2023 թվականի ընթացքում պաշտոնական այցով Հայաստանում են գտնվել Եգիպտոսի Արաբական Հանրապետության նախագահը և Իրաքի Հանրապետության նախագահը:

2023 թվականին ՀՀ արտաքին գործերի նախարարն այցելել է Սիրիա և հանդիպումներ է ունեցել նախագահ Բաշար Ալ-Ասադի և արտաքին գործերի նախարարի հետ:

2023 թվականի մարտի 7-ին ՀՀ արտաքին գործերի նախարարն աշխատանքային այց է կատարել Կահիրե և ելույթ ունեցել Արաբական պետությունների լիգայի խորհրդի նախարարական մակարդակով 159-րդ նիստին: Այցի շրջանակներում ՀՀ արտաքին գործերի նախարարը հանդիպումներ է ունեցել նաև ԱՊԼ գլխավոր քարտուղարի, Եգիպտոսի, Լիբանանի և Հորդանանի իր պաշտոնակիցների, ԱՄԷ պետնախարարի, ինչպես նաև Ալ-Ազհարի Գերագույն Իմամի և Ղպտի ուղղափառ եկեղեցու հոգևոր առաջնորդի հետ:

2023 թվականի նոյեմբերի 18-ին Բահրեյնում ՀՀ արտաքին գործերի նախարարը հանդիպում է ունեցել Ծոցի համագործակցության խորհրդի գլխավոր քարտուղարի հետ, որի ընթացքում անդրադարձ է կատարվել Ծոցի երկրների և Հայաստանի միջև տարբեր բնագավառներում փոխշահավետ համագործակցության հարցերի: ՀՀ արտաքին գործերի նախարարը հանդիպել է նաև Բահրեյնի Թագավորության արտաքին գործերի նախարարի հետ:

Համագործակցությունը գործընկեր այլ պետությունների հետ

2023 թվականի ընթացքում ՀՀ վարչապետը հեռախոսազրույցներ է ունեցել Ուզբեկստանի նախագահի (հուլիսի 12-ին), Բելառուսի նախագահի (նոյեմբերի 14-ին) և Ղազախստանի նախագահի (դեկտեմբերի 8-ին) հետ:

2023 թվականին պաշտոնական այցով Հայաստան է ժամանել Կանադայի արտաքին գործերի նախարարը: Այցի շրջանակներում կայացել է Երևանում Կանադայի ռեզիդենտ դեսպանության պաշտոնական բացման արարողությունը:

2023 թվականի հոկտեմբերի 3-ին Երևանում Հայաստանի և Ճապոնիայի արտաքին գործերի նախարարությունների միջև կայացել են հերթական քաղաքական խորհրդակցու-թյունները: Տարվա ընթացքում շարունակվել են աշխատանքները 2025 թվականին

Ճապոնիայի Օսակա քաղաքում կայանալիք «World Expo» ցուցահանդեսին ՀՀ մասնակցության նախապատրաստման ուղղությամբ:

Հայաստանի և Կորեայի Հանրապետության միջև հարաբերություններում նկատվել է զգալի դրական դինամիկա, ինչը դրսևորվել է ոչ ռեզիդենտ դեսպանների փոխադարձ հավատարմագրմամբ, երկկողմ այցերով և հանդիպումներով, ինչպես նաև փոխադարձության սկզբունքով երկու երկրներում դեսպանություններ բացելու պատրաստակամության շուրջ արված հրապարակային հայտարարություններով: Տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հեռախոսազրույցը Կորեայի Հանրապետության նախագահ Յուն Սոկ Յոլի հետ: Բազմակողմ հարթակներում կայացել է նաև ՀՀ և ԿՀ արտաքին գործերի նախարարների երկու հանդիպում:

2023 թվականին Երևանում կազմակերպված Դեպի ծով ելք չունեցող զարգացող պետությունների նախարարական հանդիպման շրջանակներում տեղի են ունեցել ՀՀ արտաքին գործերի նախարարի հանդիպումները Բոտսվանայի և Նեպալի արտաքին գործերի նախարարների հետ: Բոտսվանայի հետ ստորագրվել է դիվանագիտական հարաբերությունների հաստատման արձանագրություն:

2023 թվականի ընթացքում շփումներ են եղել Ուկրաինայի հետ: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին կարճատև շփվել են Քիշնևում՝ Եվրոպական քաղաքական համայնքի 2-րդ գագաթնաժողովի շրջանակներում և հանդիպել են Գրանադայում՝ Եվրոպական քաղաքական համայնքի 3-րդ համաժողովի շրջանակներում: ՀՀ և Ուկրաինայի նախագահները շփում են ունեցել Արգենտինայի նախագահի երդմնակալության արարողության ընթացքում: Դեկտեմբերի 11-ին Բրյուսելում ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Ուկրաինայի արտաքին գործերի նախարար Դմիտրո Կուլեբայի հետ: Հանդիպումներ է կայացել նաև ՀՀ և Ուկրաինայի խորհրդարանների նախագահների և ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղարի ու Ուկրաինայի նախագահի աշխատակազմի ղեկավարի միջև: 2023 թվականի սեպտեմբերի 6-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի տիկին Աննա Հակոբյանը Կիևում մասնակցել է Առաջին տիկնանց և ամուսինների ամենամյա գագաթնաժողովին:

Բազմակողմ համագործակցություն

<u>Եվրասիական տնտեսական միություն</u>

ԵԱՏՄ-ի շրջանակներում կայացել է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2, Եվրասիական միջկառավարական խորհրդի 3 հերթական և 1 արտահերթ (Ծաղկաձորում) նիստ, ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 13 նիստ, որոնց արդյունքում ընդունվել է շուրջ 200 որոշում:

2023 թվականի ընթացքում պարենային անվտանգությունն ապահովելու, ինչպես նաև ներքին շուկայի պահանջարկը բավարարելու համար հաստատվել են գյուղատնտեսական առաջնային նշանակություն ունեցող առանձին ապրանքների՝ ցորենի, մեսլինի, գարու, եգիպտացորենի, արևածաղկի սերմի և ձեթի գծով ինդիկատիվ հաշվեկշիռները:

Սահմանվել է սակագնային արտոնություն էլեկտրական շարժիչով ավտոմեքենաների առանց մաքսատուրքի Հայաստանի տարածք ներմուծման մասով, մասնավորապես, 2023 թվականի համար հատկացվել է էլեկտրաշարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների ներմուծման սակագնային քվոտա 8000 չափաքանակով: Երկարաձգվել է նաև էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների ներմուծումը և (կամ) օտարումն ավելացված արժեքի հարկից ազատելու մասով գործող օրենսդրական նորմը:

Արդյունաբերական կոոպերացիոն համատեղ նախագծերի իրականացման նպատակով ընդունվել է համատեղ նախագծերի ընտրության, ֆինանսական աջակցության և դրա իրականացման նկատմամբ վերահսկողության կարգը (ԵԱՏՄ 2024 թվականի բյուջեում այդ նպատակների համար նախատեսվել է շուրջ 1,8 մլրդ ռուսական ռուբլի):

Հաշվետու տարվա ընթացքում «Եվրասիական վերաապահովագրական ընկերության հիմնադրման մասին» համաձայնագրի շրջանակներում 2023 թվականի դեկտեմբերի 22-ից իր գործունեությունն է սկսել 15 մլրդ ռուսական ռուբլի կանոնադրական կապիտալով Եվրասիական վերաապահովագրական ընկերությունը, որի նպատակն է փոխադարձ առևտրի խթանումը և ներդրումային գրավչության բարձրացումը:

2023 թվականի դեկտեմբերին ստորագրվել է ԵԱՏՄ-ի և Իրանի միջև ազատ առևտրի մասին համաձայնագիրը:

2023 թվականի արդյունքներով Հայաստանի և ԵԱՏՄ անդամ պետությունների միջև առևտրաշրջանառությունը (ներմուծման ցուցանիշներն ըստ արտահանող երկրի) կազմել է շուրջ 7,8 մլրդ ԱՄՆ դոլար, որը 2022 թվականի համեմատ աճել է 39%-ով:

<u>Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպություն</u>

2023 թվականի հունիսի 20-ին ՀՀ արտաքին գործերի նախարարի մասնակցությամբ Մինսկում կայացել է ՀԱՊԿ արտաքին գործերի նախարարների խորհրդի նիստը, որի ընթացքում ՀՀ արտաքին գործերի նախարարը ներկաներին ներկայացրել է տարածաշրջանում, մասնավորապես, Հայաստանի և Ադրբեջանի սահմանին և ԼՂ-ում տեղի ունեցած զարգացումները: Հիշեցնելով Ադրբեջանի կողմից Հայաստանի՝ ՀԱՊԿ անդամ պետության ինքնիշխան տարածքի շարունակվող օկուպացիայի մասին՝ ՀՀ արտաքին գործերի նախարարն անդրադարձել է Հայաստանի ինքնիշխան տարածքի և միջազգայնորեն ճանաչված սահմանների նկատմամբ Ադրբեջանի շարունակական ագրեսիվ գործողություններին, ՀՀ-ի հետ սահմանին հայկական դիրքերի ու

քաղաքացիական օբյեկտների թիրախավորմանը՝ ընդգծելով ընդհանուր տարածաշրջանային կայունության և անվտանգության հարցում դրանց ապակայունացնող ազդեցությունը: Այս համատեքստում ՀՀ արտաքին գործերի նախարարը շեշտել է ՀԱՊԿ հասցեական արձագանքի հրամայականը: ՀՀ արտաքին գործերի նախարարն անդրադարձ է կատարել նաև ԼՂ-ում և ԼՂ-ի շուրջ ստեղծված լարված իրավիճակին, այդ թվում՝ ռուսական խաղաղապահ զորակազմի պատասխանատվության գոտում Ադրբեջանի սադրանքներին, 2023 թվականի հունիսի 15-ին Հակարիի կամրջի մոտ տեղի ունեցած միջադեպին, ինչպես նաև Լաչինի միջանցքի՝ ապօրինի արգելափակման հետևանքով ստեղծված հումանիտար խնդիրներին և Ադրբեջանի կողմից էթնիկ զտումների իրականացման խորացող վտանգին:

Բելառուսական կողմի նախաձեռնությամբ նոյեմբերի 14-ին տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հեռախոսազրույցը Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի հետ: Քննարկվել են ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի՝ նոյեմբերի 23-ին Բելառուսի մայրաքաղաք Մինսկում կայանալիք նիստի կազմակերպման հետ կապված հարցեր:

Ելնելով առկա իրավիճակից՝ նոյեմբերի 22-ին Մինսկում կայացած ՀԱՊԿ ԱԳՆԽ, ՊՆԽ և ԱԽՔԿ համատեղ նիստին, ինչպես նաև նոյեմբերի 23-ին կայացած ՀԱՊԿ ՀԱԽ նստաշրջանին, հայաստանյան կողմը մասնակցություն չի ունեցել:

2023 թվականի դեկտեմբերի 21-ին ՀՀ արտաքին գործերի նախարարն ընդունել է ՀԱՊԿ գլխավոր քարտուղարին:

Ընդհանուր առմամբ Հայաստանի Հանրապետությունը նվազագույնի է հասցրել, գործնականում սառեցրել է իր ակտիվությունը ՀԱՊԿ-ում:

<u>ԱՊՀ</u>

ԱՊՀ-ի հետ համագործակցության շրջանակներում 2023 թվականի ընթացքում կայացել է պետությունների ղեկավարների 1, կառավարությունների ղեկավարների 3 և տնտեսական խորհրդի 4 նիստ, որոնց արդյունքներով ընդունվել է շուրջ 120 որոշում: Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ կնքվել է հինգ համաձայնագիր:

<u>ՄԱԿ</u>

ՄԱԿ-ի հետ համագործակցության շրջանակներում 2023 թվականին ՀՀ արտաքին գործերի նախարարի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 78-րդ նստաշրջանի բարձրաստիճան հատվածին, այդ թվում՝ Կայուն զարգացման նպատակների գագաթնաժողովին: Կազմակերպվել է ավելի քան 30 երկկողմ հանդիպում ՄԱԿ-ի Քարտուղարության ղեկավարության և անդամ պետությունների արտաքին գործերի նախարարների հետ: Կայուն զարգացման 2030 օրակարգի իրականացման շրջանակներում տեղի է ունեցել Հայաստան-ՄԱԿ համատեղ ղեկավար

կոմիտեի առաջին նիստը: Երևանում կազմակերպվել է Դեպի ծով ելք չունեցող զարգացող պետությունների նախարարական հանդիպումը, որի ավարտին ընդունվել է «Երևանի հայտարարությունը»:

ՅՈՒՆԵՍԿՕ

ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համագործակցության շրջանակներում 2023 թվականին Հայաստան է այցելել ՅՈՒՆԵՍԿՕ-ի հրատապ փաստահավաք առաքելություն՝ գնահատելու և հասցեագրելու ադրբեջանական հարձակման հետևանքով ԼՂ-ից բռնի տեղահանված և Հայաստան ժամանած փախստականների կրթության ոլորտում առկա կարիքները, հաստատվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի մասնակցության ծրագրի (Participation Programme) շրջանակներում հրատապ աջակցության համար ներկայացված ծրագիրը՝ ի աջակցություն «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված փախստական երեխաներին կրթության գործընթացում ներառելուն և նրանց բարոյահոգեբանական վիճակը բարելավելուն»: Փարիզում տեղի ունեցած ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր համաժողովի 42-րդ նստաշրջանին մասնակցել և ելույթով հանդես է եկել ՀՀ արտաքին գործերի նախարարը:

Շառլ Ազնավուրի և Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյա հոբելյաններն ընդգրկվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների հոբելյանների 2024-2025 թթ. օրացույցում:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի միջկառավարական կոմիտեի 18-րդ նստաշրջանի շրջանակներում Գյումրիի դարբնության ավանդույթը ներառվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում:

Մշակվել և ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն է ներկայացվել Արագածոտնի մարզի Տիրինկատար լեռան տարածքում գտնվող 12 վիշապաքարերի հայտը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության նախնական ցանկում այն ընդգրկելու նպատակով:

Ընտրություններ միջազգային կազմակերպություններում և մարմիններում

2023 թվականի ընթացքում Հայաստանն ընտրվել է՝

- Ատոմային էներգիայի միջազգային գործակալության կառավարիչների խորհուրդ (IAEA, 2023-2025 թթ.),
- Հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության հանձնաժողով (CCPCJ, 2024-2026 թթ.),
- Թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի հանձնաժողով (CND, 2024-2027 թթ.),
- ՄԱԿ Ծրագրերի և համակարգման կոմիտե (CPC՝ 2024-2026 թթ.),

- ՅՈՒՆԵՍԿՕ-ի Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության կոմիտե (Committee for the protection of cultural property in the events of armed conflict, 2023-2026 թթ.):

ԵԱՀԿ

ԵԱՀԿ-ի հետ համագործակցության շրջանակներում 2023 թվականին կայացել է ԵԱՀԿ գործող նախագահ, Հյուսիսային Մակեդոնիայի արտաքին գործերի նախարար Բույար Օսմանիի աշխատանքային այցը Հայաստան:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և ՀՀ արտաքին գործերի նախարարը մի շարք հանդիպումներ են ունեցել ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Հելգա Շմիդի հետ: Երևանում կայացել է ԵԱՀԿ ԽՎ աշնանային նստաշրջանը, որին բացման ելույթով հանդես է եկել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Հյուսիսային Մակեդոնիայի Սկոպյե քաղաքում ՀՀ արտաքին գործերի նախարարը մասնակցել և ելույթով հանդես է եկել ԵԱՀԿ 30-րդ նախարարական համաժողովին:

Եվրոպայի խորհուրդ

ԵԽ-ի հետ համագործակցության շրջանակներում 2023 թվականի փետրվարի 17-ին ՀՀ արտաքին գործերի նախարարի և ԵԽ Գլխավոր քարտուղարի տեղակալ Բյորն Բերգեյի մասնակցությամբ Երևանում պաշտոնական մեկնարկ է տրվել Հայաստան-Եվրոպայի խորհուրդ 2023-2026 թթ. գործողությունների ծրագրին, որի բյուջեն կազմում է ավելի քան 21 մլն եվրո: Ռեյկյավիկում կայացել է Եվրոպայի խորհրդի երկրների և կառավարությունների ղեկավարների 4-րդ գագաթնաժողովը, որի շրջանակում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը քննարկումներ և հանդիպումներ է ունեցել Ֆրանսիայի նախագահի, Գերմանիայի կանցլերի, Լատվիայի նախագահի, Վրաստանի վարչապետի, Լեհաստանի նախագահի, Մալթայի վարչապետի, Լյուքսեմբուրգի վարչապետի և ԵԽԽՎ նախագահի հետ:

ՆԱՏՕ

Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպել է ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի հետ: Հունվարի 23-ին ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում Գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգին հանդիպել է նաև ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը:

Հայաստան է այցելել Կովկասում և Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Խավիեր Կոլոմինան:

Հայաստանը Կոսովոյում (KFOR) իր խաղաղապահ անձնակազմն ավելացրել է 17 ծառայողով՝ ընդհանուր հասցնելով 57-ի:

2023 թվականի ընթացքում ՆԱՏՕ-ի ներկայացուցիչների հետ քննարկվել և համաձայնեցվել է ՀՀ-ՆԱՏՕ Անհատապես հարմարեցված գործընկերության ծրագրի նախագիծը, որն արդեն ներկայացվել է դաշինքի անդամ երկրների հավանությանը: ՆԱՏՕ-ի Պաշտպանական կրթության զարգացման հայաստանյան ծրագրի 2023 թվականի համագործակցության պլանի շրջանակներում իրականացվել են ռազմակրթական համակարգի բարեփոխումների խորհրդատվական մի շարք այցեր:

Համագործակցություն Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության հետ

2023 թվականի սեպտեմբերի 29-ին Հայաստանը պաշտոնապես ՖՄԿ-ին է փոխանցել 2027 թվականի Ֆրանկոֆոնիայի միջազգային մարզամշակութային խաղերը Հայաստանում հյուրընկալելու վերաբերյալ հայտը, որը միաձայն բավարարվել է 2024 թվականի փետրվարի 8-ին:

Ներկայացուցչական պատվիրակության ուղեկցությամբ Հայաստան է այցելել Ֆրանկոֆոնիայի գլխավոր քարտուղար Լուիզ Մուշիկիվաբոն՝ արտահայտելու ֆրանկոֆոն մեծ ընտանիքի համերաշխությունը Հայաստանին՝ սեպտեմբերին ԼՂ-ի ժողովրդի դեմ Ադրբեջանի հերթական ագրեսիայի հետևանքով առաջացած մարտահրավերների համատեքստում:

Համագործակցություն միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ

Միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում 2023 թվականի ընթացքում՝

- ամփոփվել են Արժույթի միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող պահուստային ծրագրի առաջին երկու վերանայումները, ինչն արտացոլել է երկրի մակրոտնտեսական քաղաքականության կայունությունն ու սահմանված բարեփոխումների օրակարգի դրական առաջընթացը,
- Համաշխարհային բանկի և ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի կողմից համապատասխանաբար 92,3 մլն եվրո և 50 մլն եվրո չափով բյուջետային աջակցություն է հատկացվել Հայաստանին՝ միտված սոցիալական, կլիմայական, հակակոռուպցիոն ոլորտներում բարեփոխումների իրականացմանը,
- Հայաստանն ընդգրկվել է Համաշխարհային բանկի կողմից կառավարվող Արտոնյալ ֆինանսավորման գլոբալ գործիքի շահառուների կազմում (գործիքի շրջանակներում միջոցները հատկացվում են բռնի տեղահանման արդյունքում փախստական դարձած անձանց խնդիրների լուծման համատեքստում),
- ստորագրվել են ոլորտային ներդրումային վարկային համաձայնագրեր, մասնավորապես, ԱԶԲ-ի հետ հաստատվել են 66 մլն եվրո ծավալով Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիրը և 60 մլն եվրո ծավալով Երևանի

քաղաքային զարգացման ներդրումային ծրագիրը, ինչպես նաև ԵՆԲ-ի հետ հաստատվել է «Երևանի էներգաարդյունավետության երկրորդ փուլ» ծրագիրը:

Սփյուռքի հետ կապեր

Հաշվետու տարվա ընթացքում սփյուռքում լայնորեն ներկայացվել է Սփյուռքի գործերի հանձնակատարների ինստիտուտի էությունը: Պատրաստվել է պոտենցիալ թեկնածուների ցանկ՝ ըստ աշխարհագրական սփռվածության, որի հիման վրա 2024 թվականին նախատեսվում են մի քանի տասնյակ նշանակումներ: Լեհաստանում արդեն նշանակվել է սփյուռքի գործերի հանձնակատար:

2023 թվականին կայացել են ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի այցերը 13 երկրների՝ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Սիրիայի, Լիբանանի, Ռուսաստանի, Կիպրոսի, Լեհաստանի, Իսպանիայի, Գերմանիայի, Բելգիայի, Նիդերլանդների, Մեծ Բրիտանիայի և Ուկրաինայի 38 տարբեր քաղաքների հայ համայնքներ: Այցերի շրջանակներում կայացել է ավելի քան 170 միջոցառում:

2023 թվականին Երևանում բացվել է հայրենադարձության և ինտեգրման առաջին կենտրոնը:

2023 թվականին կազմակերպվել է՝

- Ազգային երիտասարդական համաժողով, որին մասնակցել է 600-ից ավելի երիտասարդ աշխարհի 50 երկրից և 100-ից ավելի բանախոս 15 երկրից,
- Հայ իրավաբանների համագումար, որին մասնակցել է 250 հայ իրավաբան 30-ից ավելի երկրից:

Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեն 2023 թվականի օգոստոսի 5-19-ը Հայաստանում կազմակերպել է Համահայկական 8-րդ խաղերը, որոնց մասնակցել է 41 երկրի 181 քաղաքի 7 161 մարզիկ:

«Քայլ դեպի տուն» միջոցառման շրջանակներում կազմակերպվել է 13-18 տարեկան սփյուռքահայ պատանիների համար նախատեսված ուսումնաճանաչողական ծրագիր, որը ներառել է 13-օրյա ճամբարային ծրագիր, հայոց լեզվի դասընթացներ, հայրենագիտության դասեր, մշակութային միջոցառումներ և այցեր: Ճամբարային ծրագիրն իրականացվել է Բյուրականում, որին 6 փուլով մասնակցել է 600 երեխա՝ 25 երկրից:

«ԻԳործ» սփյուռքահայ մասնագետների ներգրավում ՀՀ պետական կառավարման համակարգում» միջոցառման շրջանակներում 2022-2023 թվականներին 50 սփյուռքահայ մասնագետ ներգրավվել է ՀՀ պետական կառավարման համակարգի 23 կառույցում, իսկ 2023-2024 թվականներին՝ 50 մասնագետ 19 կառույցում:

«Սփյուռքի երիտասարդ դեսպան» ծրագրին 2023 թվականին մասնակցել է 18 սփյուռքահայ երիտասարդ՝ աշխարհի 8 երկրից:

Հաշվետու տարվա ընթացքում մեկնարկել է «ԴիասՊրո» մասնագիտական կամավորական ծրագիրը, որը հնարավորություն կտա սփյուռքահայ մասնագետներին առցանց կամ անցանց եղանակով իրենց խորհրդատվական և փորձագիտական ներուժը ներդնել Հայաստանի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքների զարգացման մեջ: Ստացվել է 142 հայտ՝ աշխարհի 24 երկրից:

Կազմակերպվել են Արամ Խաչատրյանի անվան Եռյակի համերգային ծրագրեր Իրանի և Ղազախստանի հայ համայնքներում:

Շարունակվել է պետական բյուջեի ֆինանսավորմամբ օտարերկրյա համալսարաններում հայերենի և այլ հայագիտական առարկաների դասավանդումը: Հայագիտական կենտրոններ են ստեղծվել Թրակիայի Դեմոկրիտ համալսարանում (Հունաստան) և Սինալոայի համալսարանում (Մեքսիկա)՝ այդպիսով արտերկրի հայագիտական կենտրոնների թիվը հասցնելով 15-ի 12 պետությունում:

Սփյուռքի կրթօջախներին տրամադրելու նպատակով ձեռք է բերվել ավելի քան 38 000 կտոր գրականություն, որոնցից՝ սփյուռքի շուրջ 20 երկրի 220 կրթօջախի տարվա ընթացքում տրամադրվել է շուրջ 26 700 կտոր գրականություն, այդ թվում՝ Վրաստանի հանրային դպրոցներին տրամադրվել է 9 500 դասագիրք:

Ձևավորվել է սփյուռքի դպրոցների ուսումնական նյութերի էլեկտրոնային շտեմարանը, որն աստիճանաբար համալրվում է նոր դասագրքերով և նյութերով:

2023 թվականի ընթացքում կայացել են սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ՝ 18 երկրից 69 ուսուցչի մասնակցությամբ:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի ընթացքում մշակվել և հաստատվել են պաշտպանության ոլորտի կարևորագույն մի շարք փաստաթղթեր՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի 2023-2027 թթ. զարգացման պլանը, Հայաստանի Հանրապետության սպառազինության և ռազմական տեխնիկայի 2023-2027 թթ. զարգացման պետական ծրագիրը, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կիրառման պլանը՝ ծավալման և զորահավաքային պլաններով, Հայաստանի Հանրապետության տարածքի պաշտպանության օպերատիվ սարքավորման պլանի մտահղացումը:

2023 թվականին մեկնարկել է զինծառայողների ատեստավորման գործընթացը: Ատեստավորմանը մասնակցել է շուրջ 5800 զինծառայող: Ատեստավորման

արդյունքներով զինծառայողների ընդհանուր դրամական բավարարումն ավելացվելու է 205 000-ից 470 000 դրամի չափով, ինչի արդյունքում որոշ դեպքերում ընդհանուր դրամական բավարարումը գրեթե կրկնապատկվելու է:

Ներդրվել է ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից պայմանագրային զինվորական ծառայության ներգրավելու «Պաշտպան հայրենյաց» ծրագիրը, որի շահառուները 5 տարի ժամկետով պայմանագրային զինվորական ծառայության ընթացքում կստանան բարձր դրամական բավարարում, իսկ ծառայության ավարտին՝ 5 մլն դրամ պարգևավճար:

Հաշվետու տարվա ընթացքում շարունակվել են ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ ԶՈՒ ԳՇ կառուցվածքային ստորաբաժանումների կառուցվածքային բարեփոխումները:

Հաստատվել են ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ ԶՈՒ ԳՇ նոր կանոնադրություններն ու կառուցվածքը:

2023 թվականի ընթացքում ամբողջացվել են զինված ուժերի կառավարման և ղեկավարման միասնական ավտոմատացված համակարգի ստեղծման աշխատանքները:

Պետական սահմանի պահպանության համակարգի կատարելագործման ուղղությամբ 2023 թվականի ընթացքում կահավորվել և ավարտին են հասցվել 9 կառավարման կետեր:

Ռազմավարական նշանակության օբյեկտների ու ենթակառուցվածքների անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով 2023 թվականի ընթացքում շարունակվել են նոր տեղակայման վայրերի կառուցման աշխատանքները Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում:

2023 թվականին գործողության մեջ է դրվել արհեստավարժ սերժանտների ինստիտուտի կայացման ճանապարհային քարտեզը: Մի շարք ուսումնական զորամասերում ստեղծվել և համալրվել են դասակի և վաշտի սերժանտների հաստիքներ:

Պահեստազորային պատրաստության համակարգի կատարելագործման նպատակով 2023 թվականին ընդլայնվել է վարժական հավաքների անցկացման շրջանակը:

Զինված ուժերում կանանց ներգրավվածության մակարդակի բարձրացման նպատակով կատարվել են օրենսդրական փոփոխություններ, համաձայն որոնց՝ իգական սեռի քաղաքացիներն այսուհետ հնարավորություն ունեն կամավոր հիմունքներով դիմելու պարտադիր զինվորական ծառայության զորակոչին 6 ամիս ժամկետով: Ծառայության ժամկետի ավարտից հետո նախատեսվում է 1 մլն դրամի հավելավճարի տրամադրում, ինչպես նաև հնարավորություն՝ անցնելու պայմանագրային ծառայության: Այդ նպատակով ձևավորվել է կին զինծառայողներով համալրվող հրաձգային գումարտակ:

Այլ պետությունների և կազմակերպությունների հետ փոխգործակցության մակարդակը բարձրացնելու նպատակով 2023 թվականի ընթացքում զինված ուժերի ստորաբաժանումները և խմբերը մասնակցել են 10-ից ավելի զորավարժությունների և վարժանքների, որոնցից մեկն անցկացվել է Հայաստանում («Արծիվ գործընկեր» հայ-ամերիկյան զորավարժություն):

2023 թվականի ընթացքում կազմակերպվել են Հայաստան-Հունաստան, Հայաստան-Հունաստան-Կիպրոս, Հայաստան-ԱՄՆ, Հայաստան-Մեծ Բրիտանիա, Հայաստան-Ֆրանսիա, ՀՀ-ՆԱՏՕ ձևաչափերով պաշտպանական և ռազմաքաղաքական խորհրդակցություններ:

Երկկողմ ձևաչափով համագործակցության պլաններ են ստորագրվել Հունաստանի, Կիպրոսի, Լիտվայի, Լեհաստանի, Բուլղարիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Վրաստանի, Միացյալ Թագավորության, Հնդկաստանի հետ, ինչպես նաև ստորագրվել է Հայաստան-Հունաստան-Կիպրոս պլանը:

ՀՀ զինված ուժերի մասնագետները շարունակել են իրենց մասնակցությունը Սիրիայում իրականացվող մարդասիրական առաքելությանը: ՀՀ զինված ուժերի ստորաբաժանումը շարունակել է առաքելության իրականացումը Կոսովոյում և Լիբանանում:

2023 թվականին հաստատվել են ՀՀ պաշտպանության նախարարության ռազմաուսումնական հաստատություններում պրոֆեսորադասախոսական կազմի տարակարգերը և այդ կազմի ընտրության, թափուր պաշտոնների համալրման կարգերը:

Բարձրացվել են ՀՀ ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտների դրամական ապահովության չափերը, սահմանվել է առաջադիմությամբ պայմանավորված դրամական ապահովության չափերի ավելացման բանաձևը:

Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարության զորամասերում պարբերաբար իրականացվել են Տեղեկատվական անվտանգության թեմայով մեթոդագործնական պարապմունքներ:

Հանրային իրազեկման գործընթացի պատշաճ կազմակերպման և ճգնաժամային իրավիճակներում տեղեկատվական դաշտը կառավարելի դարձնելու նպատակով անցկացվել է «Փակ շղթա-2023» տեղեկատվական վարժանքը:

«Մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի շրջանակներում հիփոթեքային վարկավորման միջոցով բնակարան կամ բնակելի տուն է ձեռք բերել 541 զինծառայող: 78 շահառուի հատկացվել է բնակարանի գնման վկայագիր, որոնցից 40 զինծառայող արդեն ձեռք է բերել բնակարան կամ բնակելի տուն:

Զինված ուժերում կարգապահության և մարդու իրավունքների պաշտպանության խթանման շրջանակներում 2023 թվականին Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի սպաների որակավորման բարձրացման կենտրոնի կրթական

ծրագրերում ներդրվել է «Պատշաճ կառավարում և բարեվարքության ամրապնդում» առարկան (պիլոտային ծրագրով):

Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ ռազմական ոստիկանության կողմից իրականացվել է պրոֆիլակտիկ և կանխարգելիչ բնույթի շուրջ 8000 միջոցառում, բացահայտվել է շուրջ 600 դեպք, որից շուրջ 560-ը հանցակազմ պարունակող:

2023 թվականի ընթացքում ՀՀ զինված ուժերում մարտական պայմաններում զոհվել է 19, իսկ ոչ մարտական պայմաններում 64 զինծառայող: Տարվա ընթացքում գերեվարվել և վերադարձվել է 3 զինծառայող:

«Global Firepower» միջազգային վերլուծական ընկերության Ռազմական հզորության վարկանիշում 145 երկրի շարքում Հայաստանն զբաղեցնում է 94-րդ տեղը. 2022 թվականին Հայաստանը 97-րդն էր 140 երկրից:

Էկոնոմիկայի և խաղաղության ինստիտուտի կողմից հրապարակվող Խաղաղության համաշխարհային ցուցիչում 163 երկրից Հայաստանը 66-րդն է՝ 2022 թվականի զեկույցի 83-րդ տեղի համեմատ: Այս ցուցանիշով Հայաստանն առաջատարն է հարավկովկասյան տարածաշրջանում, իսկ Ռուսաստան և Եվրասիա տարածաշրջանում 2-րդը: Հայաստանի խաղաղության վիճակը գնահատվում է «միջին»:

Ազգային անվտանգության ծառայություն

Օրենսդրական բարեփոխումների արդյունքում ՀՀ ԱԱԾ տնօրենի և տնօրենի տեղակալների պաշտոններն զբաղեցնող անձինք այլևս չեն համարվելու զինվորական ծառայողներ, այլ զբաղեցնելու են հանրային պաշտոններ: ՀՀ ԱԱԾ տնօրենին և տնօրենի տեղակալներին պաշտոնին նշանակելու և պաշտոնից ազատելու է ՀՀ վարչապետը:

2023 թվականի ընթացքում շահագործման են հանձնվել ամբողջությամբ կահավորված մի շարք սահմանապահ ուղեկալներ և պարետատներ, սարքավորումներով հագեցվել և կահավորվել են սահմանապահ կետեր, կառուցվել են դիտակետեր, իրականացվել են ամրացման, տեխնիկական հագեցման և կահավորման այլ աշխատանքներ: Մի շարք հատվածներում տեսահսկման համակարգերը համալրվել են ստացիոնար տեսադիտարկման սարքերով և այլ տեխնիկական միջոցներով: Աշխատանքներ են տարվել կապի կազմակերպման և լավարկման ուղղությամբ:

2023 թվականի ընթացքում ՀՀ պետական սահմանի «Գյումրի», «Բավրա» «Գոգավան» և «Զվարթնոց» անցման կետերում իրականացվել են տեխնիկական վերազինման մի շարք աշխատանքներ:

ՀՀ պետական սահմանի անցման կետերում «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքով սահմանային հսկողության գործընթացի ներդրման շրջանակներում

արդիականացվել է Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի ծրագրային ապահովումը:

Գործարկվել է նույնականացման քարտերով ՀՀ և Վրաստանի քաղաքացիների սահմանահատման ձևակերպման համար անհրաժեշտ ծրագրային ապահովումը:

Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայում բացվել է «Սահմանապահ զորքերի կառավարում» ցիկլը (մասնագիտությունը), որտեղ ուսումնառություն են անցնում ՀՀ սահմանապահ զորքերի կուրսանտները:

ՀՀ սահմանապահ զորքերում 2022 թվականի համեմատ կին զինծառայողների թիվը ավելացել է շուրջ 9%-ով, 2021 թվականի համեմատ՝ շուրջ 20%-ով:

2023 թվականին ՀՀ ԱԱԾ-ում մեկնարկել է ատեստավորման գործընթացը, որն իրականացվել է փուլային սկզբունքով: Ատեստավորմանը մասնակցել և դրական արդյունք է գրանցել ծառայողների շուրջ 20%-ը: Ատեստավորված անձնակազմի աշխատավարձն ավելացել է միջինը շուրջ 57%-ով:

2023 թվականին որոշում է կայացվել ՀՀ ԱԱԾ-ի սահմանապահ զորքերի ու հատուկ ստորաբաժանումների ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների համար սահմանել բնակարանային պայմանների բարելավման հնարավորություն:

Հաշվետու տարվա ընթացքում շարունակվել են պետական մարմինների պաշտոնական կայքերի, էլեկտրոնային հարթակների և այլ տեղեկատվական համակարգերի կիբեռանվտանգության ապահովման աշխատանքները, այդ թվում՝ նշված համակարգերի ուղղությամբ կիբեռմիջադեպերի արձագանքման գործընթացի համակարգման ուղղությամբ: Կանխվել են ավելի քան 2 մլն կիբեռհարձակման փորձեր:

Թմրամիջոցների մաքսանենգության և ապօրինի շրջանառության դեմ պայքարի շրջանակներում իրականացված օպերատիվ-հետախուզական աշխատանքների արդյունքում բացահայտվել է 17 խոշոր դեպք, այդ թվում՝ Էկվադորից Հայաստան ներմուծված շուրջ 1 տոննա կոկաին տեսակի թմրամիջոցի ներմուծման փորձը:

Անվտանգային համակարգեր

Անվտանգային սպառնալիքներին առավել արդյունավետորեն արձագանքելու նպատակով իրականացված բարեփոխումների արդյունքում Հայաստանում ձևավորվել են ՀՀ արտաքին հետախուզության ծառայությունը և ՀՀ պետական պահպանության ծառայությունը, որոնք հանդիսանում են պետական կառավարման համակարգի՝ ՀՀ վարչապետին ենթակա մարմիններ:

ՀՀ ներքին գործերի նախարարության բարեփոխումներ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և ՀՀ ոստիկանության հենքի վրա ձևավորվել է ՀՀ ներքին գործերի նախարարությունը: Հաստատվել են նախարարության և ենթակա 3 պետական մարմինների՝ Ոստիկանության, Փրկարար ծառայության, Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կանոնադրություններն ու կառուցվածքը, նախարարության թվակազմը, որի արդյունքում ընդհանուր առմամբ օպտիմալացվելու է 629 հաստիք: Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների գերակշիռ մասն արդեն իսկ 2023 թվականի ընթացքում ձևավորվել և լիարժեք գործում է: Փոփոխությունների կատարման ընթացքում հանրությանը մատուցվող ծառայությունների որևէ խափանում չի եղել:

Պարեկային ծառայությունը՝ որպես արտաքին ծառայության նոր և ժամանակակից մոդել, 2023 թվականի ընթացքում արդեն ամբողջությամբ ներդրվել է Հայաստանի ամբողջ տարածքում: Այժմ Պարեկային ծառայությունն ունի արդեն լիովին նոր նյութատեխնիկական հագեցվածություն:

Ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնը՝ որպես քաղաքացիներից ստացված ահազանգերի սպասարկման, պարեկային ծառայության օպերատիվ կառավարման և ոստիկանության ուժերի համատեղ գործողությունների համակարգման նոր և ժամանակակից մոդել, 2023 թվականի ընթացքում ամբողջությամբ ներդրվել է Հայաստանի ամբողջ տարածքում. կենտրոնը հավակնում է դառնալու ոստիկանության բոլոր ուժերի օպերատիվ կառավարման հանգույց:

Սևանա լճում և ափամերձ տարածքներում 2023 թվականին գործարկվել է Ջրային պարեկային ծառայությունը, որը համալրվել է նավերով, սկուտերներով, ռադիոկապի միջոցներով, ջրային տեխնիկայի տեղափոխման համար նախատեսված ծառայողական ամենագնացներով, կահավորված մոդուլային շենքերով:

Պարեկային ծառայությունում կին պարեկների ներգրավման խթանման նպատակով 2023 թվականին հայտարարվել է նոր ընդունելություն, որտեղ գերակշիռ տեղերը հատկացվել են կին դիմորդներին: Ընդունելության արդյունքներով 140 կին մասնակցել է ծառայության շարքերը համալրելու նպատակով անցկացվող քննություններին:

Հաշվետու տարում հաստատվել է Ոստիկանության գվարդիայի ձևավորման հայեցակարգը, մշակվել, ներառական հանրային քննարկումների փուլ է անցել և միջազգային փորձաքննական դրական գնահատականի արժանացել «Ոստիկանության գվարդիայի մասին» և հարակից օրենքների նախագծերի փաթեթը:

Գործարկվել է քաղաքացիներին սպասարկող Արտաշատի հաշվառման-քննական բաժինը՝ միջազգային ստանդարտներին համապատասխան նոր լուծումներով և մոտեցումներով:

2023 թվականին ներդրվել է ոստիկանների ատեստավորման համակարգը: Արդեն իսկ իրականացվել է ավելի քան 1000 ծառայողի ատեստավորում, որը հաջողությամբ արդեն անցել է մասնակիցների շուրջ 20%-ը և որի արդյունքներով ոստիկանները կարող են ընդհուպ կրկնապատկել իրենց դրամական ապահովումը:

Ոստիկանության ոլորտի բարեփոխումները հանգեցրել են Ոստիկանության նկատմամբ հանրային վստահության մակարդակի աճին: Մասնավորապես, Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) կողմից Հարցումների հետազոտության կենտրոնի նախաձեռնությամբ 2023 թվականի հունվար-մարտ ամիսների համար Հայաստանի բնակչության շրջանում արված հանրային կարծիքի ուսումնասիրության արդյունքներով Ոստիկանությունն զբաղեցրել է երկրորդ տեղը՝ բնակչության կողմից հայաստանյան կառույցների աշխատանքից բավարարված լինելու գնահատմամբ:

2023 թվականը ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից հայտարարվել էր թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի տարի: Իրականացված մեծածավալ օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումների արդյունքում 2023 թվականի ընթացքում թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի հայտնաբերման թիվն աճել է շուրջ 2,5 անգամ: Հայտնաբերվել է թմրամիջոցների վաճառքով զբաղվող համացանցային 650 «խանութ» և 35 «ալիք»:

Ատեստավորման համակարգ է ներդրվել նաև փրկարար ծառայողների համար: Իրականացվել է ավելի քան 190 փրկարարի ատեստավորում, որից 15-ը հաղթահարել է այն: Արդյունքում գերազանց ատեստավորված փրկարարն ստանում է 437 000 ՀՀ դրամ (զուտ) դրամական ապահովում՝ նախկին 232 000-ի փոխարեն:

2023 թվականին Փրկարար ծառայությունը համալրվել է 8 «Պոլարիս» մակնիշի ամենագնացով և 2 անօդաչու թռչող սարքով:

2023 թվականին հաստատվել են Աղետների ռիսկի կառավարման 2023-2030 թվականների ռազմավարությունը և 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը, որոնք սահմանում են ՀՀ դիմակայուն զարգացման և բնակչության պաշտպանության ուղղությամբ պետության համակարգային բարեփոխումների օրակարգն ու առաջնահերթությունները:

Հաշվետու տարում Հայաստանում անցկացվել է «Երկրաշարժի համակողմանի կառավարումը Հարավային Կովկասի խոցելի տարածքներում՝ արդյունավետ պլանավորման, արձագանքման և համատեղ գործողությունների միջոցով» ծրագրի շրջանակներում իրականացվող HOPE FSX 2023 լայնամասշտաբ միջազգային հրամանատարաշտաբային ուսումնավարժանքը, որն իր բնույթով և ծավալով աննախադեպ էր: Ուսումնավարժանքին մասնակցել են միջազգային հումանիտար կազմակերպությունների և ծրագրի կոնսորցիումի անդամ երկրների՝ Վրաստանի, Կիպրոսի, Հունաստանի,

Ֆրանսիայի, Մոնտենեգրոյի և Հյուսիսային Մակեդոնիայի միջազգային որոնողափրկարարական բազմանդամ թիմեր, դիտորդներ և միջազգային փորձագետներ:

«Numbeo» պորտալի Հանցավորության ցուցիչում Հայաստանը 142 երկրի շարքում զբաղեցնում է 136-րդ տեղը՝ 2022 թվականի համեմատ արձանագրելով առաջընթաց 2 հորիզոնականով: Հայաստանը, ըստ վարկանիշի, համարվում է ցածր հանցավորություն ունեցող երկիր: Նույն պորտալի Անվտանգության ցուցիչում Հայաստանը 142 երկրի շարքում զբաղեցնում է 7-րդ տեղը՝ նախորդ տարվա համեմատ արձանագրելով առաջընթաց 1 հորիզոնականով, ըստ որի՝ Հայաստանը համարվում է անվտանգ երկիր: Երկու ցուցիչի դեպքում էլ Հայաստանը զիջում է միայն Կատարին, ԱՄԷ-ին, Թայվանին, Մեն կղզուն, Օմանին և Հոնկոնգին: «Numbeo» պորտալի «Կյանքի որակի ցուցիչ՝ ըստ քաղաքների» վարկանիշային աղյուսակում 242 քաղաքից Հայաստանի մայրաքաղաք Երևանն զբաղեցնում է 177-րդ տեղը (2022 թվականին Երևանն զբաղեցնում էր 186-րդ տեղը 255 քաղաքից): Հարավկովկասյան տարածաշրջանում Հայաստանի մայրաքաղաքն առաջատարն է:

«World Population Review» հանրահայտ կազմակերպության՝ աշխարհում հանցավորության մակարդակի վերաբերյալ վերլուծության համաձայն՝ Հայաստանը հանցավորության ցածր մակարդակ ունեցող 137 երկրի շարքում զբաղեցնում է 9-րդ հորիզոնականը, իսկ տարածաշրջանային երկրների շարքում՝ 1-ին հորիզոնականը:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի արդյունքներով Հայաստանում արձանագրվել է բարձր տնտեսական աճ և ցածր գնաճ: ՀՆԱ-ի բարձր աճը պայմանավորված է եղել աշխատանքի արտադրողականության, ներդրումների, զբաղվածության և արտաքին առևտրի զգալի աճով: 2023 թվականի բարձր աճը վկայում է ՀՆԱ-ի պոտենցիալի աճի արագացման մասին:

2023 թվականին ՀՆԱ-ն ընթացիկ գներով կազմել է 9 502 778,6 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 8,7%-ով:

2023 թվականին ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով կազմել է 3 205 849 ՀՀ դրամ կամ 8 168 ԱՄՆ դոլար, որը դոլարային արտահայտությամբ նախորդ տարվա համեմատ աճել է 22,6%-ով, իսկ 2017 թվականի համեմատ՝ 111,1%-ով: 2022 թվականին մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 2 901 910 ՀՀ դրամ կամ 6 661 ԱՄՆ դոլար, որը 2017 թվականի 3 869 ԱՄՆ դոլարի համեմատ աճել է 72,2%-ով:

Ապրանքների արտաքին առևտուրը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 46%-ով՝ կազմելով 20,7 մլրդ ԱՄՆ դոլար: Ներմուծումն աճել է

40,2%-ով, իսկ արտահանումը 55,3%-ով՝ կազմելով համապատասխանաբար 12,3 մլրդ ԱՄՆ դոլար և 8,4 մլրդ ԱՄՆ դոլար:

Հայաստան այցելած զբոսաշրջիկների թիվը կազմել է 2 316 666՝ 2022 թվականի համեմատ գրանցելով շուրջ 39% աճ, իսկ 2019 թվականի համեմատ 22,3% աճ:

Աշխատուժի արտադրողականությունը հասել է մեկ աշխատաժամի դիմաց 9,6 ԱՄՆ դոլարի՝ 2022 թվականի 8,2 ԱՄՆ դոլարի և 2021 թվականի 6,2 ԱՄՆ դոլարի համեմատ:

2023 թվականի դեկտեմբերի դրությամբ եկամուտ (հարկման բազա) ապահոված աշխատատեղերի քանակը կազմել է 741,726, ինչը 2018 թվականի մայիսի համեմատ ավելի է 193 737-ով կամ 35,4%-ով:

Եկամուտ (հարկման բազա) ապահոված աշխատատեղերի ամսական միջին թվաքանակը կազմել է շուրջ 716 000, ինչը 2022 թվականի նույն ցուցանիշից ավելի է շուրջ 41 000-ով, 2021 թվականի ցուցանիշից՝ շուրջ 80 000-ով, իսկ 2018 թվականի ցուցանիշից՝ շուրջ 156 000-ով կամ 27,8%-ով:

Ընդ որում՝ 2023 թվականի դեկտեմբերի դրությամբ.

- մինչև 150 000 ՀՀ դրամ վարձատրությամբ աշխատատեղերի թվաքանակը կազմել է ընդհանուր աշխատատեղերի 43,3%-ը՝ 2022 թվականի նույն ժամանակահատվածի 48,1%-ի, 2021 թվականի 51,4% և 2018 թվականի 60,4%-ի համեմատ,
- 150,001-500,000 ՀՀ դրամ վարձատրությամբ աշխատատեղերի թվաքանակը կազմել է ընդհանուր աշխատատեղերի 40,6%-ը՝ 2022 թվականի նույն ժամանակահատվածի 37%-ի, 2021 թվականի 36,4%-ի և 2018 թվականի 31,2%-ի համեմատ,
- 500,001 և ավելի ՀՀ դրամ վարձատրությամբ աշխատատեղերի թվաքանակը կազմել է ընդհանուր աշխատատեղերի 16,1%-ը՝ 2022 թվականի նույն ժամանակա-հատվածի 14,9%-ի, 2021 թվականի 12,2%-ի և 2018 թվականի 8,4%-ի համեմատ,
- միջին ամսական աշխատավարձի ֆոնդը (հարկման բազա) կազմել է շուրջ 206,6 մլրդ ՀՀ դրամ, ինչն ավելի է 2022 թվականի նույն ցուցանիշից շուրջ 36 մլրդ ՀՀ դրամով, 2021 թվականի նույն ցուցանիշից շուրջ 67 մլրդ ՀՀ դրամով, իսկ 2018 թվականի ցուցանիշից շուրջ 105,6 մլրդ ՀՀ դրամով կամ 104,6 %-ով,
- 2023 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին եկամուտ ստացող աշխատողների միջին հարկման բազան (եկամուտը) կազմել է 288 000 դրամ, ինչն ավելի է 2022 թվականի նույն ցուցանիշից շուրջ 36 000 ՀՀ դրամով, 2021 թվականի ցուցանիշից շուրջ 68 000 ՀՀ դրամով, իսկ 2018 թվականի ցուցանիշից 108 221 ՀՀ դրամով կամ 60,1%-ով:

2023 թվականի դեկտեմբերին՝ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ արձանագրվել է 0,6% գնանկում:

Գործազրկության մակարդակը 2023 թվականի 3-րդ եռամսյակում կազմել է 12%՝ 2022 թվականի նույն ժամանակահատվածի 11,6%-ի և 2018 թվականի 17,6%-ի համեմատ:

Հիմնական միջոցներում ներդրումների իրական աճը կազմել է շուրջ 14,4%՝ գերազանցելով ՀՆԱ-ի աճը: Ներդրումների՝ ՀՆԱ-ի նկատմամբ առաջանցիկ աճը վկայում է տնտեսության կառուցվածքային փոփոխության մասին, ըստ որի անցում է կատարվում էժան ռեսուրսի վրա հիմնված մոդելից դեպի արտադրողականության վրա հիմնված մոդելի: Հիմնական միջոցներում ներդրումների կշիռը ՀՆԱ-ում վերջին տարիներին շարունակաբար աճել է՝ 2018 թվականի 16,7%-ից 2021 թվականին հասնելով 21,2%-ի, ինչը 2022 թվականին մի փոքր նվազել է՝ կազմելով ՀՆԱ-ի 20,3%-ը, իսկ 2023 թվականին հասել է 20,7%-ի:

Արձանագրվել է ներդրումների ներհոսքի զգալի դիվերսիֆիկացում:

2023 թվականի արդյունքներով բանկային համակարգի ամփոփ ցուցանիշները հետևյալն են՝

- ակտիվները՝ շուրջ 9,2 տրլն ՀՀ դրամ,
- սեփական կապիտալը՝ շուրջ 1,4 տրլն ՀՀ դրամ,
- վարկային պորտֆելը՝ շուրջ 5,2 տրլն ՀՀ դրամ,
- ավանդները (ցպահանջ և ժամկետային)՝ շուրջ 5,7 տրլն ՀՀ դրամ:

Ըստ այդմ, նախորդ տարվա համեմատ՝

- ակտիվներն ավելացել են շուրջ 791 մլրդ ՀՀ դրամով կամ 9,4%-ով, իսկ 2018 թվականի համեմատ շուրջ 4,2 տրլն ՀՀ դրամով կամ 84%-ով,
- վարկային պորտֆելն աճել է շուրջ 941 մլրդ ՀՀ դրամով կամ 22,4%-ով, իսկ 2018 թվականի համեմատ շուրջ 2 տրլն ՀՀ դրամով կամ 64,6%-ով,
- ավանդները (ցպահանջ և ժամկետային) աճել են շուրջ 555 մլրդ ՀՀ դրամով կամ 10,8%-ով, իսկ 2018 թվականի համեմատ շուրջ 2,7 տրլն ՀՀ դրամով կամ 92%-ով,
- կապիտալն ավելացել է շուրջ 116 մլրդ ՀՀ դրամով կամ 9,3%-ով, իսկ 2018 թվականի համեմատ շուրջ 614 մլրդ ՀՀ դրամով կամ 82%-ով,
- ՀՀ կենտրոնական բանկի միջազգային պահուստները 2018 թվականի համեմատ ավելացել են շուրջ 1,4 մլրդ ԱՄՆ դոլարով կամ 59,4%-ով:

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքը 2023 թվականի վերջի դրությամբ կազմել է շուրջ 800 մլրդ ՀՀ դրամ՝ 2022 թվականի նույն ցուցանիշից ավելի 240 մլրդ ՀՀ դրամով կամ 43%-ով, իսկ 2017 թվականի ցուցանիշից՝ 690 մլրդ ՀՀ դրամով կամ 660%-ով: Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների թիվը 2023 թվականի վերջի դրությամբ կազմել է շուրջ 812 000 մարդ՝ 2022 թվականի նույն ցուցանիշից շուրջ 66 000-ով կամ 9%-ով ավելի, իսկ 2017 թվականի նույն ցուցանիշից

շուրջ 490 000-ով կամ 150%-ով ավելի: Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերն ունեցել են բարձր շահութաբերություն՝ եկամտաբերությունը կազմել է 12,3%-ից 16,5%:

Հաշվետու տարվա ընթացքում կապիտալի շուկայում արձանագրվել են որակապես նոր զարգացումներ: Պատմության մեջ առաջին անգամ բաժնետոմսերի հրապարակային առաջարկով է հանդես եկել հեռահաղորդակցության ոլորտի ընկերություն: Տարվա ընթացքում հայտարարվել է իրական հատվածի ընկերության պատմական ամենախոշոր ծավալով պարտատոմսերի թողարկման մասին:

Ֆիզիկական անձանց հիփոթեքային վարկի տոկոսների գծով վերադարձվել է շուրջ 52 մլրդ ՀՀ դրամ եկամտային հարկ՝ 2022 թվականի նույն ցուցանիշը գերազանցելով շուրջ 15,5 մլրդ ՀՀ դրամով, 2021 թվականինը շուրջ 29,3 մլրդ ՀՀ դրամով, 2020 թվականինը շուրջ 38,7 մլրդ ՀՀ դրամով, իսկ 2018 թվականինը՝ շուրջ 47,3 մլրդ ՀՀ դրամով կամ 1008%-ով: Ծրագրի շահառուների թիվը 2023 թվականի վերջի դրությամբ կազմել է 38 911 անձ՝ 2022 թվականի ցուցանիշը գերազանցելով 9 715 անձով կամ 33,3 %-ով, իսկ 2018 թվականի ցուցանիշը՝ 34 890 անձով կամ 867,7 %-ով: 2023 թվականի արդյունքներով հիփոթեքային վարկի տոկոսների վերադարձի ծրագրի շահառուների կողմից 2018 թվականից հետո ձեռք է բերվել 25 209 բնակարան և կառուցվել է 2 653 անհատական բնակելի տուն:

Նախորդ տարվա համեմատ Հայաստանում (ՀՀ և արտասահմանյան բանկերի կողմից թողարկված քարտերով) ավելի քան կրկնապատկվել է անկանխիկ (ՊՈՍ տերմինալներով) գործարքների քանակը՝ կազմելով 156,1 մլն հատ գործարք: Անկանխիկ (ՊՈՍ տերմինալներով) գնումների ծավալները 2023 թվականին նախորդ տարվա համեմատ աճել են 68,3%-ով՝ կազմելով շուրջ 1 182,4 մլրդ ՀՀ դրամ: Անկանխիկ (ՊՈՍ տերմինալներով) գնումների քանակը 2023 թվականին՝ 2017 թվականի համեմատ աճել է շուրջ 30 անգամ, իսկ ծավալը՝ շուրջ 8 անգամ:

Առաջատար երեք միջազգային վարկանիշային գործակալությունները բարելավել են Հայաստանի սուվերեն վարկանիշը: Մասնավորապես, «Ֆիթչ» և «Ստանդարտ ընդ Փուր'զ» գործակալությունները մեկ մակարդակով բարձրացրել են սուվերեն վարկանիշը՝ սահմանելով «BB-»՝ «կայուն» հեռանկարով, իսկ «Մուդի'զ» գործակալությունը վերահաստատել է Հայաստանի գործող «Ba3» սուվերեն վարկանիշը՝ վերանայելով վարկանիշի հեռանկարը «բացասական»-ից դեպի «կայուն»:

ՄԱԿ-ի Արդյունաբերության զարգացման հիմնադրամի CIP (Competitive Industrial Performance) Index-ի համաձայն Հայաստանը 2023 թվականի ինդեքսի ամենամեծ առաջընթաց գրանցած երկիրն է, որը 23 տեղով բարելավել է իր դիրքը և գրավում է 93–րդ հորիզոնականը: Ինդեքսը գնահատում է երկրների ապրանքներ արտադրելու և արտահանելու ունակությունը ոչ միայն կոնկրետ տարում, այլև երկարաժամկետ հատվածում:

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության «Գլոբալ ինովացիոն ցուցիչ»-ում 132 երկրից Հայաստանը զբաղեցնում է 72-րդ տեղը՝ 8 հորիզոնականով բարելավելով դիրքերը 2022 թվականի զեկույցի համեմատ: Հայաստանը միջինից բարձր եկամուտ ունեցող 33 տնտեսությունից 17-րդն է: Զեկույցում Հայաստանը ներառված է այն երկրների շարքում, որոնց նորարարության կատարողականը համահունչ է զարգացման մակարդակի հետ:

«The Heritage Foundation» վերլուծական կենտրոնի կողմից հրապարակվող Տնտեսական ազատության ցուցիչում 176 երկրի շարքում Հայաստանը զբաղեցնում է 50-րդ տեղը՝ 2022 թվականի զեկույցի (177 երկրից 58-րդը) համեմատ դիրքերը բարելավելով 8 հորիզոնականով: 2023 թվականի զեկույցի համաձայն՝ Հայաստանը Եվրոպա տարածաշրջանի 44 երկրից 28-րդն է:

Տնտեսական ակտիվության խթանման նպատակով իրականացվել են նաև հետևյալ աշխատանքները.

Կառավարությունը հաստատել է Հայաստանի տնտեսական քաղաքականության 2023-2030 թվականների և Արդյունաբերության զարգացման հինգ գերակա ոլորտների հայեցակարգերը:

Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Զբոսաշրջության մասին» և հարակից օրենքների նախագծերի փաթեթը:

Կառավարության կողմից մաքսատուրքից ազատման արտոնություն է տրամադրվել 90 ներդրումային ծրագրի մասով: Ծրագրերի շրջանակներում նախատեսվում է իրականացնել շուրջ 815 մլրդ ՀՀ դրամի ներդրում և ստեղծել 4 280 նոր աշխատատեղ:

Մի շարք ապրանքների (որոշ սև մետաղների, գունավոր մետաղի թափոնների, ջարդոնի և այլն) արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու արդյունքում կատարվել է շուրջ 240 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ներդրում, ստեղծվել է 944 աշխատատեղ:

Ապրիլի 1-ից ազատականացվել է ավտոմեքենաների պարտադիր ապահովագրության շուկան (ԱՊՊԱ համակարգը):

Արտադրողականության խթանման նպատակային ծրագրի շրջանակներում 2022 թվականի մարտից մինչև 2024 թվականի հունվարի 1-ը ձևավորվել է վարկային/լիզինգային ընդհանուր պորտֆել՝ շուրջ 207 մլրդ ՀՀ դրամ հանրագումարով, կնքվել է 3 591 վարկային/լիզինգային պայմանագիր, ընդ որում՝ պորտֆելի շուրջ 59%-ն ուղղվել է ՓՄՁ ֆինանսավորմանը: Այս ծրագրով 2023 թվականի սուբսիդավորման գծով ծախսը կազմել է շուրջ 7,9 մլրդ ՀՀ դրամ:

Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման միջոցառման շրջանակներում փոխհատուցում է ստացել 29 կազմակերպություն՝ 369 մասնագետի համար: Աջակցության ընդհանուր գումարը կազմել է շուրջ 798 մլն ՀՀ դրամ:

Նոյեմբերից մեկնարկել է մշակող արդյունաբերության ոլորտում աշխատակիցների ներգրավման միջոցառումը:

Մեկնարկել է թողարկման և վարկանիշավորման պետական աջակցության ծրագիրը, որի նպատակն է Հայաստանում կապիտալի շուկայի զարգացումը և իրական հատվածի համար ֆինանսների հասանելիության խթանումը:

ՀՀ փոխվարչապետի գլխավորությամբ տեղի է ունեցել ՓՄՁ զարգացման խորհրդի 5 նիստ, որոնց ընթացքում քննարկվել են 40-ից ավելի հարցեր:

Ներդրվել է առևտրային ցանցերից ՓՄՁ մատակարարների վճարային պարտավորությունների իրավական կարգավորման մեխանիզմը, որն արդար առևտրի իրականացմանը նպաստող օրենսդրական հիմքեր է ստեղծել առևտրային ցանց-մատակարարներ հարաբերությունների և գյուղատնտեսական արտադրանքների իրացման շուկայի համար:

Կառավարության կողմից հաստատվել են ներդրումների ներգրավման և տնտեսապես բարդ ապրանքների արտադրությամբ զբաղվող առևտրային ընկերություններին պետական աջակցություն տրամադրելու ծրագրերը:

Մարտին Կառավարության կողմից հավանության է արժանացել ամառային և ձմեռային զբոսաշրջային, լեռնադահուկային, էկո-գյուղատնտեսական արտադրության կենտրոնի ստեղծման և ջրամբարի կառուցման «Արագած» ներդրումային ծրագիրը (Արագածոտնի մարզի Ապարան համայնքի՝ Վարդենուտ, Արագած, Արայի և Շենավան բնակավայրերի տարածքում), որի իրականացումը մեկնարկել է:

Սեպտեմբերին Կառավարության կողմից հավանության է արժանացել Համաշխարհային առևտրի կենտրոն (World Trade Center) կառուցելու քաղաքաշինական կառուցապատման ծրագիրը և «Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» ՓԲԸ-ի հիմնադրմանը մասնակցելու մասին որոշումը:

Օգոստոսին Կառավարության հավանությանն է արժանացել ներդրումային ծրագիր, որի շրջանակներում նախատեսվում է կազմակերպել Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղի և Արտաշատի պատմական հուշարձան-համալիրի մոտակայքում գոլֆի ակումբի և ակադեմիայի, ինչպես նաև կից հանգստի և բնակելի գոտիների կառուցում: Ծրագրի կապիտալ ներդրումների ընդհանուր գումարը նախնական հաշվարկներով կկազմի շուրջ 172 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար:

«Ենթակառուցվածքներ ներդրումների դիմաց» օժանդակության ծրագրի շրջանակներում Կառավարության կողմից ընդունվել են 4 ընկերությանն օժանդակություն տրամադրելու վերաբերյալ որոշումներ, համաձայն որոնց՝ ընդհանուր 15,7 մլրդ ՀՀ դրամ ներդրումների դիմաց ենթակառուցվածքների կառուցման և ապահովման համար իրականացվելու է 1,3 մլրդ ՀՀ դրամի՝ ենթակառուցվածքների զարգացման գծով ծախս:

Հաստատվել է հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, գնահատման և առաջնահերթությունների որոշման կարգը:

2021-2023 թվականների ընթացքում ոլորտային գերատեսչություններից ստացվել և մշակվել են շուրջ 43 հանրային ներդրումային ծրագրերի նախագծեր, որոնցից 15-ը՝ 2023 թվականին:

ՀՀ տարածքից արտահանման և (կամ) ՀՀ տարածք ներմուծման նպատակով բեռների՝ լաստանավով և (կամ) բեռնարկղերով բեռնվող նավով տեղափոխման դեպքում առաջացած լրացուցիչ ծախսերի նվազեցմանն ուղղված միջոցառման շրջանակներում 2023 թվականի հունիսի 1-ից օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում Նովոռոսիյսկ-Բաթումի-Նովոռոսիյսկ ուղղությամբ կոնտեյներով բեռնվող նավով իրականացվել են 9 ամբողջական փոխադրման ծառայություններ, և առկա իրավակարգավորումների համաձայն՝ փոխադրման ծառայության մատուցման դիմաց տրվել է փոխհատուցում կատարված 4 չվերթի մասով:

Առևտրային հարաբերությունների զարգացման նպատակով իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Փարիզում՝ Ֆրանսիա-Հայաստան առաջին տնտեսական գագաթնաժողով,
- Պրահայում՝ Հայաստանի և Չեխիայի միջև առևտրի, ներդրումների և գործարար կապերի զարգացմանը նվիրված գործարար համաժողով,
- Տաշքենդում՝ Ուզբեկստան-Հայաստան գործարար համաժողով,
- Երևանում՝ Հայաստան-Կորեա տնտեսական համագործակցության համաժողով,
- Երևանում՝ Հայաստան-ԱՄԷ գործարար համաժողով,
- Լոնդոնում՝ Հայաստան-Մեծ Բրիտանիա գործարար համաժողով,
- Նյու Յորքում՝ «Ներդրումները տեղորոշում են Հայաստանը» խորագրով «Orion Summit 2023» ներդրումային համաժողով:

Միջազգային համագործակցության գերմանական միության (GIZ) և Վերականգնման վարկերի բանկի (KFW) հետ ստորագրվել և վավերացվել է 85 մլն եվրո արժեքով նոր աջակցության փաթեթ, որի շրջանակներում՝ 70 մլն եվրո արտոնյալ վարկ է տրամադրվել ՓՄՁ-ներին, իսկ 15 մլն եվրո դրամաշնորհային միջոցներ են տրամադրվել մասնագիտական կրթության և մասնավոր հատվածի զարգացման համար:

ԱՄՆ-ի կողմից Հայաստանին շուկայական տնտեսության կարգավիճակ տրամադրելու նպատակով մշակվել և կազմվել է զեկույց և դիմում-հայտի միջոցով պաշտոնապես ներկայացվել ամերիկյան կողմին:

Սեպտեմբերի 14-15-ը ԳԴՀ Ֆրանկֆուրտ քաղաքում տեղի է ունեցել Ներդրումների կառավարման ցուցահանդեսը (Investment Management Exhibition), որտեղ Հայաստանը ներկայացել է տիպային տաղավարով:

Հոկտեմբերի 16-20-ը ԱՄԷ Աբու Դաբի քաղաքում տեղի է ունեցել ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման կոնֆերանսի Համաշխարհային ներդրումային 8-րդ համաժողովը, որտեղ Հայաստանը ներկայացել է ազգային տաղավարով:

«Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2023 թվականի ծրագրի շրջանակում ապահովվել է մասնակցություն 4 միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսի, կազմակերպվել են 49 մեդիա ներկայացուցիչների, բլոգերների, ինֆլուենսերների ճանաչողական այցեր, Հայաստանի մասին հոդվածներ են տեղադրվել հայտնի ամսագրերում և պարբերականներում, կազմակերպվել են գովազդային արշավներ թիրախային երկրներում, 2022 թվականին մշակված «Armenia, The Hidden Track» (Հայաստան. թաքնված ուղի) կարգախոսով Հայաստանի նոր զբոսաշրջային բրենդը կիրառվել է Հայաստանի՝ համաշխարհային զբոսաշրջային շուկայում ներկայացման ընթացքում և կազմակերպվող բոլոր զբոսաշրջային միջոցառումներում: Աջակցություն է տրամադրվել 6 տեղեկատվական կենտրոնի գործունեությանը, 16 փառատոնի կազմակերպմանը:

2023 թվականին որակի ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները.

5 կարևոր սարքավորումների համալրմամբ վերազինվել է Հայաստանում գործող միակ նավթամթերքի փորձարկման լաբորատորիան՝ ապահովելով ավտոմոբիլային բենզինի, դիզելային վառելիքի և հեղուկացված ածխաջրային գազերի ցուցանիշների փորձարկումները՝ հաստատված տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան:

Ստեղծվել է ծխախոտային և նիկոտին պարունակող նորարարական արտադրանքի (տաքացվող ծխախոտ, ծխախոտային արտադրանքի փոխարինիչներ) փորձարկման լաբորատորիա:

Լավարկվել են «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքի կարգավորումները: Հավատարմագրման եվրոպական մարմնի հետ բազմակողմ ճանաչման համաձայնագիր կնքելու նպատակով «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը նախաձեռնել է միջազգային ճանաչման գործընթացը:

Հաստատվել է Պետական ստանդարտացման 2023 թվականի ծրագիրը և 2023 թվականի ստանդարտացման աշխատանքների ցանկը, որոնց հիման վրա մշակվել է 30 ազգային ստանդարտ:

Հիմնվել և հավատարմագրվել է տրամաչափարկման 2 լաբորատորիա և ընթացքի մեջ է նշյալ լաբորատորիաների միջազգային հավատարմագրման գործընթացը:

Մտավոր սեփականության պահպանության ոլորտում 2023 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Լավարկվել են «Ապրանքային նշանների մասին» օրենքի կարգավորումները:

Ազգային ընթացակարգով Մտավոր սեփականության գրասենյակն ստացել է 3 282 հայտ՝ 2022 թվականի 3 143 հայտի համեմատ: Միջազգային ընթացակարգով Հայաստանի նշմամբ ստացվել է 2 943 ծանուցում՝ 2022 թվականի 2 773-ի համեմատ: Հայաստանից ներկայացվել է միջազգային գրանցման 32 ապրանքային նշանի հայտ՝ 2022 թվականի 19 հայտի համեմատ:

Մտավոր սեփականության գրասենյակ է ներկայացվել 112 արտոնագիր ստանալու հայտ (22 գյուտի արտոնագիր և 90 գյուտի կարճաժամկետ արտոնագիր)՝ 2022 թվականի 118 հայտի համեմատ:

Մտավոր սեփականության գրասենյակը 11 հայտ է ներկայացրել Եվրասիական արտոնագրային գերատեսչություն:

Ազգային ընթացակարգով Մտավոր սեփականության գրասենյակ ներկայացվել է արդյունաբերական դիզայնի 37 հայտ՝ 2022 թվականի 46 հայտի համեմատ: Արդյունաբերական դիզայների միջազգային գրանցման մասին Հաագայի Համաձայնագրի Ժնևյան ակտի շրջանակներում Հայաստանի նշմամբ ստացվել է արդյունաբերական նմուշների միջազգային գրանցման մասին 138 ծանուցում՝ 2022 թվականի 97 ծանուցման համեմատ:

Բարձր տեխնոլոգիաներ, հեռահաղորդակցություն և կապ

ՏՏ ոլորտում, ըստ ՀՀ ՊԵԿ-ի տվյալների, 2023 թվականի դեկտեմբերի դրությամբ Հայաստանում գործունեություն է իրականացրել 7 825 գործող ընկերություն՝ 2022 թվականի դեկտեմբերի 5 477 գործող ընկերության համեմատ, իսկ ոլորտի գործող ընկերություններում աշխատակիցների թիվը կազմել է 41 386 մարդ՝ 2022 թվականի դեկտեմբերի 29 331 մարդու համեմատ:

Ըստ ՀՀ ՊԵԿ-ի տվյալների՝ ՏՏ ոլորտի շրջանառությունը 2023 թվականի ընթացքում կազմել է շուրջ 785 մլրդ ՀՀ դրամ՝ 2022 թվականի շուրջ 584 մլրդ ՀՀ դրամի համեմատ:

ՏՏ ոլորտի ընկերությունների արտահանումների ընդհանուր ծավալը կազմել է շուրջ 640 մլրդ ՀՀ դրամ՝ 2022 թվականի շուրջ 479 մլրդ ՀՀ դրամի համեմատ (34%-ով ավելի 2022 թվականի նույն ցուցանիշից):

2023 թվականի ընթացքում բարձր տեխնոլոգիաների, հեռահաղորդակցության և կապի ոլորտներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարկային արտոնություն է ստացել ոլորտի 1 633 կազմակերպություն: Ընդհանուր առմամբ, 2023 թվականի ընթացքում հարկային արտոնությունից օգտվել է ոլորտի 4 133 ընկերություն:

Նոր աշխատակիցների մասով վճարված եկամտային հարկի 50%-ի չափով պետական աջակցություն է տրամադրվել ոլորտի 46 կազմակերպության (ընդհանուր շուրջ 5,3 մլրդ ՀՀ դրամի չափով):

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի պետական աջակցության ծրագրի շրջանակներում կնքվել է 330 պայմանագիր՝ շուրջ 7,4 մլրդ ՀՀ դրամի չափով:

Օգոստոսի 23-28-ը Դիլիջանում իրականացվել է «Ներուժ 2023» սփյուռքի տեխնոլոգիա-կան ստարտափների աքսելերացիոն ծրագիրը, որի դրամաշնորհային ֆոնդը կազմել է 90 մլն ՀՀ դրամ:

«Գաղափարից մինչև բիզնես» ծրագրի շրջանակներում իրականացված «Գաղափարի փուլ» մրցույթի արդյունքում հաղթող 9-ը մասնակցից յուրաքանչյուրին տրամադրվել է շուրջ 5 մլն ՀՀ դրամ դրամաշնորհ, իսկ «Մուտք դեպի շուկա» մրցույթի արդյունքում հաղթող 17 կազմակերպության հետ կնքվել են պայմանագրեր և հաղթող ընկերություններից յուրաքանչյուրին տրամադրվել է շուրջ 10 մլն ՀՀ դրամ:

Տարեվերջի դրությամբ Հայաստանի բոլոր բնակավայրերն ապահովված են շարժական կապի 2G, 3G և 4G+ (LTE Advanced) տեխնոլոգիաների ծածկույթներով, իսկ Երևան և Գյումրի քաղաքներում մասամբ հասանելի է նաև 5G ցանցը, որի հետագա զարգացման և լիարժեք 5G տեխնոլոգիային բնորոշ տվյալների հաղորդման բարձր արագություններով և ցանցի փոքր ընդհատումներով ծառայությունների մատուցումն ապահովելու ուղղությամբ աշխատանքները շարունակվում են՝ ներառյալ անհրաժեշտ ռադիոհաճախականային ռեսուրսի տրամադրման մասով:

Հանրապետության 698 (69,7%) բնակավայրում հասանելի են ամրակցված կապի լայնաշերտ ինտերնետի լարային տեխնոլոգիաների ծառայությունները, այդ թվում՝ 666 բնակավայրում (66,5%)՝ օպտիկամանրաթելային ցանցերը, որոնք ընդգրկում են երկրի բնակչության ավելի քան 96%-ը, իսկ 996 (99,5%) բնակավայրում՝ ամրակցված

հեռախոսակապի և առնվազն 2 Մբիթ/վ արագությամբ լայնաշերտ ինտերնետի անլար տեխնոլոգիաների ծառայությունները:

2022 թվականի համեմատ ընդհանուր լայնաշերտ ինտերնետի բաժանորդների թվաքանակն աճել է 11,7%-ով՝ կազմելով 3,5 մլն, այդ թվում՝ ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդների քանակը 9,5%-ով՝ կազմելով 511 000 (գերակշռել են օպտիկամանրաթելային տեխնոլոգիայից օգտվող բաժանորդները, որոնց տեսակարար կշիռը կազմել է շուրջ 78% (402 000)՝ աճելով շուրջ 30%-ով): Հաշվետու տարում աճել են լայնաշերտ ինտերնետի օգտագործման ծավալները՝ ամրակցված (լարային) կապի մասով՝ 24,3%-ով, շարժական կապի մասով՝ 23,8%-ով:

700ՄՀց, 800ՄՀց և 1800ՄՀց տիրույթների տրամադրման մրցութային գործընթացների կազմակերպման արդյունքում 2 տարվա ընթացքում կիրականացվեն հետևյալ բարեփոխումները.

- բնակավայրերի առնվազն 80%-ում հասանելի կլինի բոլոր երեք օպերատորի փոխադարձ ներթափանցելի 4G+ (LTE Advanced) ծածկույթ,
- Երևանում և 3 տարվա ընթացքում Գյումրիում և Վանաձորում կներդրվի շարժական լայնաշերտ կապի 5G ցանց,
- կբարձրացվեն կապի ցանցերի հուսալիության և անվտանգության մակարդակները,
- շուրջ 1,5 մլրդ ՀՀ դրամի կապիտալ ներդրումների իրականացմամբ կընդլայնվեն կապի առկա ենթակառուցվածքները,
- մասնագիտացված ՀՀ պետական բուհում կհիմնվի շարժական կապի ծառայություններ մատուցելու հնարավորությամբ ուսումնական լաբորատորիա:

Նշված ռադիոհաճախականությունների տրամադրմամբ ապահովվել են շուրջ 2,2 մլրդ ՀՀ դրամի միանվագ, իսկ հետագայում շուրջ 1,2 մլրդ ՀՀ դրամ տարեկան լրացուցիչ մուտքեր պետական բյուջե:

10 կազմակերպության տրամադրվել է փոստային կապի գործունեության լիցենզիա. արդյունքում պետական բյուջե մուտքերը կազմել են շուրջ 147 մլն ՀՀ դրամ:

Համաշխարհային փոստային միության 2023 թվականի Փոստային զարգացվածության ցուցանիշով Հայաստանը բարելավել է իր դիրքերը՝ զբաղեցնելով 40-րդ տեղը՝ 2022 թվականի 48-րդ տեղի համեմատ:

Գյուղատնտեսություն

2023 թվականին գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է շուրջ 948 մլրդ ՀՀ դրամ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 0,3%-ով), որից՝

- բուսաբուծությունը շուրջ 447,6 մլրդ ՀՀ դրամ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճը՝ 2,7%),
- անասնաբուծությունը շուրջ 500,4 մլրդ ՀՀ դրամ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազումը՝ 3,4%):

2023 թվականի ընթացքում գյուղատնտեսության ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ինտենսիվ այգեգործության ծրագրի շրջանակներում հաստատվել է շուրջ 2 350 հեկտար այգեհիմնման հայտ:

Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ծրագրի շրջանակներում 11 662 հեկտար հողատարածք ապահովագրելու համար կնքվել է շուրջ 10 192 ապահովագրական պայմանագիր: 2022 թվականի համեմատ ապահովագրված տարածքների մակերեսը գրեթե կրկնապատկվել է:

Վճարվել է 3 864 ապահովագրական հատուցում՝ շուրջ 2,7 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով:

Գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի ծրագրի շրջանակում ձեռք է բերվել 719 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 213 միավոր տրակտոր և 5 միավոր կոմբայն:

Ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի ծրագրի շրջանակում հաստատվել է 142 լիզինգի հայտ՝ շուրջ 6,2 մլրդ ՀՀ դրամ ծավալով, ձեռք է բերվել 495 միավոր սարքավորում:

Ջերմատնային տնտեսությունների հիմնման նպատակով պետության կողմից իրականացվող ծրագրերի շրջանակում շուրջ 9 հեկտար ջերմատնային տնտեսության հիմնման պայմանագրեր են կնքվել:

Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) ծրագրով հաստատվել է 221 հայտ՝ շուրջ 15,5 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, որի արդյունքում կնքվել է 9 068 բերքի գնման պայմանագիր:

Մթերվել է շուրջ 86 000 տոննա պտուղբանջարեղեն և շուրջ 160 000 տոննա խաղող: Խաղողի գնման նպատակով տրամադրվել է շուրջ 870 մլն ՀՀ դրամ հանրագումարի չափով գների սուբսիդավորում: Ձեռք է բերվել շուրջ 700 000 լիտր կոնյակի սպիրտ՝ համապատասխան քանակի խաղող մթերելու պայմանով:

Աշնանացան ցորենի 2022 թվականի ծրագրի շրջանակներում 2023 թվականին տրամադրվել է շուրջ 4,6 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր գումարի փոխհատուցում: Ծրագրի իրականացման արդյունքում ցանքատարածություններն ավելացել են շուրջ 15 000 հեկտարով:

ՀՀ-ում անասնաբուծության ճյուղում խոշոր ներդրումային ծրագրերին աջակցություն տրամադրելու նպատակով 6 կազմակերպության հետ կնքվել են պայմանագրեր (թռչնաբուծության, խոզաբուծության և տավարաբուծության ոլորտներում)՝ շուրջ 32 մլրդ ՀՀ դրամի ներդրումներ կատարելու նպատակով: Ընդ որում՝ 2022 թվականին կնքված 1 պայմանագիր՝ 11,7 մլրդ դրամ ծավալով ներդրումային ծրագիր իրականացնելու համար, գտնվում է ավարտական փուլում:

«ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալում և հաշվառում» ծրագրի շրջանակում իրականացվել է 410 505 խոշոր եղջերավոր կենդանու համարակալում:

Ընդունվել են պարենային անվտանգության և սննդամթերքի անվտանգության ռազմավարությունները, ինչպես նաև գյուղատնտեսության ռազմավարության կատարմանն ուղղված 2023-2026 թվականների միջոցառումների ծրագիրը:

Ընդունվել է «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների մասին» օրենքը, ինչպես նաև լավարկվել են «Բույսերի սորտերի պահպանության մասին» և «Օրգանական գյուղատնտեսության մասին» օրենքների կարգավորումները:

Քաղաքաշինություն

2023 թվականի տարեսկզբի դրությամբ Հայաստանում շինարարության ընթացքում է գտնվել շուրջ 55 000 բնակելի միավոր (բնակարան և բնակելի տուն), որոնցից շուրջ 10 000-ը տարվա ընթացքում հանձնվել է շահագործման: 2024 թվականի տարեսկզբի դրությամբ կառուցման տարբեր փուլերում է գտնվել առնվազն 87 000 բնակելի միավոր, որից շուրջ 42 000-ը՝ նոր մեկնարկած:

ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գրանցվել է 25 872 նոր անշարժ գույք, որից 10 121-ը բնակելի: 2023 թվականին գրանցված նոր բնակելի գույքերի թիվը 2018 թվականի ցուցանիշը գերազանցում է 4,4 անգամ: 2018-2023 թվականների ընթացքում նոր գրանցված բնակելի գույքերի 31%-ը գրանցվել է 2023 թվականին: 2018-2023 թվականների ընթացքում ՀՀ-ում նոր կառուցված և ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գրանցված գույքերի թիվը կազմել է 132 042, որից 32 714-ը՝ բնակելի:

2023 թվականին քաղաքաշինության ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

«Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակում» ծրագրի շրջանակներում մշակվել է 150 բնակավայրի ընդգրկմամբ միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման 14 փաստաթուղթ: 2023 թվականի վերջի դրությամբ մշակվել է 839 բնակավայրի ընդգրկմամբ 74 փաստաթուղթ: Արդյունքում Հայաստանի տարածքի շուրջ 80%-ն արդեն իսկ ապահովված է տարածական պլանավորման փաստաթղթերով:

2022 թվականից մեկնարկած պիլոտային ծրագրի շրջանակներում Նաիրի, Էջմիածին, Մասիս և Վանաձոր խոշորացված համայնքներում նախագծման և շինարարության թույլտվությունները տրամադրվում են բացառապես էլեկտրոնային եղանակով՝ «e-Permits» միասնական համակարգի միջոցով: Վերոնշյալ համայնքներում ընդհանուր ստացվել է 7 965 դիմում և տրամադրվել է 6 086 թույլտվություն (դիմումների 76%-ը դրական ընթացք են ստացել)՝ 2022 թվականի 5 280 դիմումի և տրամադրված 4 130 թույլտվության համեմատ: Համակարգի ներդրումից ի վեր գրանցվել է շուրջ 4 129 օգտատեր, որից 1 629-ը գրանցվել է 2023 թվականի ընթացքում:

Մշակվել և արդիականացվել է քաղաքաշինության բնագավառի 20 նորմատիվատեխ-նիկական փաստաթուղթ, որոնց կարգավորումները վերաբերում են բնակելի, հասա-րակական և արտադրական շենքերի ու շինությունների կառուցման ու վերակառուցման, դրանց անվտանգության, շահագործման մատչելիության, էներգաարդյունավետության, քաղաքացիական պաշտպանության, տարածքների համալիր բարեկարգման ու կանաչապատման, կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության նախագծման պահանջներին:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար մի շարք կարևորագույն նշանակության օբյեկտների շահագործման մատչելիությունն ապահովելու նպատակով հետազննվել և անձնագրավորվել են 16 օբյեկտների 28 շենքեր և շինություններ, որոնց նախագծման աշխատանքները կմեկնարկեն 2024 թվականին: Ծրագիրը 2024 թվականին կհամալրվի ևս 25 օբյեկտով:

Հաստատվել է աղետի գոտու բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինություններից ազատելու կարգը, որի համաձայն՝ համայնքների կողմից հաստատվել են 4 068 տնակի և դրանցում բնակվող ընտանիքների ցուցակները, որոնց հիման վրա կատարվել է խնդրի լուծման համար անհրաժեշտ ֆինանսական պլանավորում: 2024 թվականին կմեկնարկի տնակների ապամոնտաժման և դրանցում բնակվող ընտանիքների վերաբնակեցման գործընթացը:

2022 թվականին մեկնարկած ինքնակամ կառուցած շինությունների հաշվառման գործընթացի շրջանակներում 2023 թվականի դրությամբ հաշվառվել է շուրջ 63 000 ինքնակամ կառույց, որից անշարժ գույքի տեղեկատվական համակարգ մուտքագրվել է 34 854 գույքային միավոր: Արդյունքում այդ գույքերի համար գանձվող անշարժ գույքի հարկը կազմել է շուրջ 255 մլն ՀՀ դրամ:

Քաղաքաշինության բնագավառի լիցենզավորման գործընթացի բարելավման նպատակով ներդրվել է շարունակական մասնագիտական զարգացման ինստիտուտը և քաղաքաշինության բնագավառում գործունեություն իրականացնող լիցենզավորված կազմակերպությունների վարկանիշավորման համակարգը, որոնց

կապակցությամբ մշակվել և ավարտվել են քաղաքաշինության բնագավառի լիցենզիա ստանալու առցանց եղանակով հայտերի ներկայացման և լիցենզավորող հանձնաժողովի էլեկտրոնային եղանակով նիստերի վարման գործառույթները, իսկ քաղաքաշինության բնագավառի լիցենզավորման և հավաստագրման հայտերն առցանց եղանակով լրացման համար արդեն հասանելի են «urban.e-gov.am» քաղաքաշինության բնագավառի պետական ծառայությունների միասնական հարթակից:

Բնական ռեսուրսների կառավարում

2023 թվականին հանքարդյունաբերության ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Կառավարության կողմից հաստատվել է Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների պլանը:

Հունվարի 1-ից ուժի մեջ է մտել ընդերքօգտագործողների կողմից վճարվող ռոյալթիների հաշվարկման նոր բանաձևը, որն ապահովելու է եկամուտների արդարացի բաշխումն ընդերքօգտագործողի և պետության միջև:

Հունվարի 1-ից ուժի մեջ է մտել ՀՀ բյուջե վճարված ռոյալթիներից ազդակիր համայնքներին մասհանումների մասին կարգավորումը, որի արդյունքում արդեն 2024 թվականին համայնքները կստանան ընդհանուր առմամբ շուրջ 1 մլրդ ՀՀ դրամ:

2023 թվականի արդյունքներով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի ակնկալվող զուտ շահույթը կազմելու է շուրջ 215 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար՝ 2022 թվականի շուրջ 221 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի, 2021 թվականի շուրջ 188 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի, 2020 թվականի շուրջ 2 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի, 2019 թվականի շուրջ 30 մլն ԱՄՆ դոլարին համարժեք վնասի և 2018 թվականի շուրջ 32 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի համեմատ: 2023 թվականի արդյունքներով ընկերության կողմից վճարված հարկերի և տուրքերի հանրագումարը կազմել է շուրջ 181 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար՝ 2022 թվականի շուրջ 336 մլն ԱՄՆ դոլարին համարժեք (որից պետական տուրքի գումար՝ շուրջ 80 մլն ԱՄՆ դոլարին համարժեք և նախորդ տարիների ընթացքում պակաս վճարված հարկերի գումար՝ շուրջ 35 մլն ԱՄՆ դոլարին համարժեք) գումարի, 2021 թվականի շուրջ 123 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի, 2020 թվականի շուրջ 88 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի, 2019 թվականի շուրջ 107 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի և 2018 թվականի շուրջ 104 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի համեմատ:

Հունիս ամսից վերագործարկվել են Թեղուտի հանքի աշխատանքները, որոնք խտանյութի վաճառքի հետ կապված խնդիրներով պայմանավորված դադարեցվել էին դեռևս 2022 թվականի մարտ ամսին:

Երկրում շինարարության աճի տեմպերին զուգահեռ աճում է նաև շինանյութերի՝ ավազի և քարի հանդեպ պահանջարկը, որոնց հետ կապված ավելանում էր ապօրինի ընդերքօգտագործման դեպքերի քանակը: Նման դեպքերի հայտնաբերման և կանխարգելման աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, և արձանագրվել է 95 ապօրինի ընդերքօգտագործման դեպք:

Ընդերքօգտագործման պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով դադարեցվել է 20 ընդերքօգտագործման իրավունք:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Տրանսպորտ

Ավտոմոբիլային տրանսպորտ

2023 թվականին ավտոմոբիլային տրանսպորտի ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Երևան քաղաքում կանոնավոր ուղևորափոխադրումների լավարկման նպատակով ներկրվել են նոր 15 «YOUTONG» մակնիշի տրոլեյբուս, 87 «MAN» մակնիշի և 150 «ZHONG TONG» մակնիշի ավտոբուս, իսկ Դիլիջան համայնքում՝ նոր 2 «ANKAI» մակնիշի ավտոբուս:

Հաշվառվել է նոր գնված 1 136 ճանապարհաշինարարական, շինարարական և այլ մեքենամեխանիզմ, որոնցից 535-ը՝ լիզինգի մեխանիզմով: Մասնավորապես, հաշվառվել է 772 էքսկավատոր (նախորդ տարվա 548-ի համեմատ), 58 տրակտոր/բուլդոզեր (նախորդ տարվա 31-ի համեմատ) և 24 գրեյդեր (նախորդ տարվա 14-ի համեմատ): Հաշվառված տեխնիկայի ընդհանուր թիվը 2022 թվականի համեմատ աճել է 36%-ով, 2021 թվականի համեմատ՝ 111%-ով, 2020 թվականի համեմատ՝ 114%-ով, 2019 թվականի համեմատ՝ 186%-ով, 2018 թվականի համեմատ՝ 174%-ով, իսկ լիզինգի մեխանիզմով 2022 թվականի համեմատ՝ 91%-ով, 2021 թվականի համեմատ՝ 308%, 2020 թվականի համեմատ՝ 482%-ով, 2019 թվականի համեմատ՝ 749%-ով, 2018 թվականի համեմատ՝ 792%-ով:

Լիցենզավորվել է 17 տեխնիկական զննության և 36 գազաբալոնային սարքավորումների տեղադրման և պարբերական վկայագրման կայան:

Երրորդ երկրներից ՀՀ ներկրվել է 3 586 բեռնատար և 86 531 մարդատար տրանսպորտային միջոց, այդ թվում՝ 6 441 էլեկտրոմոբիլ: 2022 թվականի համեմատ 2023 թվականին ներկրված բեռնատար տրանսպորտային միջոցների թիվն աճել է 63%-ով, մարդատար տրանսպորտային միջոցներինը՝ 91%-ով, այդ թվում՝ էլեկտրոմոբիլներինը՝ 84%-ով:

Էլեկտրոմոբիլների համար նախատեսված լիցքավորման կետերի թիվը ՀՀ-ում գերազանցել է 200-ը:

Երևանի «Զվարթնոց» օդանավակայանի տարածքից 24 նոր էլեկտրոմոբիլներով սկսվել է տաքսոմոտորային փոխադրումների կազմակերպումը:

Օդային տրանսպորտ

2023 թվականին օդային տրանսպորտի ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

ՀՀ օդանավակայանների կողմից սպասարկվել է 5,425,076 ուղևոր, որը մոտ 47%-ով ավելի է 2022 թվականի ցուցանիշից (3,698,256) և մոտ 90%-ով ավելի է 2018 թվականի ցուցանիշից (2 856 673): Նշված ուղևորահոսքից 2023 թվականին 1,817,321 ուղևոր օգտվել է հայկական ավիաընկերություններից, ինչը կազմում է ընդհանուր ուղևորահոսքի մոտ 33,5% և մոտ 91%-ով ավելի է 2022 թվականի ցուցանիշից (951 100 ուղևոր): 2018 թվականի ցուցանիշի (76 600 ուղևոր) նկատմամբ ուղևորահոսքը աճել է մոտ 2272%-ով:

Օդային ճանապարհով փոխադրվել է 33 850 տոննա բեռ, որը 45%-ով ավելի է 2022 թվականի ցուցանիշից (23 341 տոննա) և 87%-ով ավելի է 2018 թվականի ցուցանիշից (18 100 տոննա):

Իրականացվել են կանոնավոր չվերթեր 49 ուղղություններով՝ 41 ավիաընկերության կողմից: Բացի դրանից, զբոսաշրջային բարձր սեզոնի ընթացքում հավելյալ չվերթեր են իրականացրել 12 ավիաընկերություն՝ 13 ուղղություններով:

Հայաստանյան շուկա մուտք է գործել 8 նոր ավիաընկերություն՝ «Վիզ էյր Մալթա», «Ասաջեթ Էյրլայնզ», «ԲիԷյչԷյր», «Ֆլայնաս», «Վառեշ Էյրլայնզ», «Ֆիթս Ավիէյշն», «Ռեդ Սի Էյրլայնզ», «Սեպեհրան Էյրլայնզ»:

Հայաստանում գործել է միջազգային թռիչքներ իրականացնող 6 հայկական ավիաընկերություն՝ 2022 թվականի 5 և 2018 թվականի 2 ավիաընկերության համեմատ:

Օգոստոսի 21-ից տրվել է Երևան-Կապան-Երևան ավիաչվերթների մեկնարկը: Մինչև տարեվերջ իրականացվել է 23 չվերթ, որոնցով տեղափոխվել է 207 ուղևոր:

Օտարերկրյա օդանավ շահագործողների տրամադրվել է ընդհանուր առմամբ կանոնավոր և ոչ կանոնավոր փոխադրումների 3 369 թույլտվություն, ինչը 2,2%-ով ավելի է 2022 թվականի նույն ցուցանիշից (3 296 թույլտվություն):

ՀՀ միջազգային պայմանագրերի և միջազգային ստանդարտների համապատասխանությունն ապահովելու նպատակով ընդունվել են մի շարք նորմատիվ-իրավական ակտեր: Մասնավորապես, սահմանվել են ավիաընկերություններում մասնակցություն ունեցող անձանց հեղինակությանը վերաբերելի դրույթներ, փոփոխվել է թռիչքների իրականացման թույլտվությունների տրամադրման գործընթացը, կարգավորվել է ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության լիազոր մարմնի նշանակման հարցը, ինչպես նաև փոփոխվել է ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կառուցվածքը:

ԵՄ պատվիրակության տարեվերջյան այցի արդյունքներով Եվրոպական ավիացիայի անվտանգության գործակալության (EASA) ամփոփիչ նիստում նշվել է, որ ՀՀ ավիացիոն իշխանությունների կողմից նկատվում է զգալի առաջընթաց այն ուղղություններով, որոնցով EASA-ի կողմից 2020 թվականին արձանագրվել էին թերություններ: 2024 թվականին անցկացվել է Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ICAO) կողմից ՀՀ-ում ավիացիոն ոլորտի միջազգային ստանդարտներին և պահանջներին համապատասխանության աուդիտ:

Երկաթուղային տրանսպորտ

2023 թվականին երկաթուղային տրանսպորտի ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ոլորտում ներդրումային ծախսերը կազմել են շուրջ 1,75 մլրդ ՀՀ դրամ, որից՝ ենթակառուցվածքում շուրջ 1,67 մլրդ ՀՀ դրամ, իսկ շարժակազմում շուրջ 76,8 մլն ՀՀ դրամ:

Իրականացվել է 14,3 կմ երկաթուղային գծի հիմնանորոգում, վերանորոգվել են 6 միավոր գծային տեխնիկա, 2 գծանց, 3 միավոր լոկոմոտիվ՝ 23 միավոր գծային սարքավորումների փոխարինմամբ, հիմնանորոգվել է 2 կմ հպակային ցանց և փոխարինվել է 2 կմ կոնտակտային հաղորդալար:

Սեպտեմբերի 1-ից պիլոտային եղանակով մեկնարկել են Գյումրի-Վանաձոր-Գյումրի կանոնավոր ուղևորափոխադրումները, և 1,5 ամսվա ընթացքում տեղափոխվել է 1 503 ուղևոր:

Գրանցվել է ուղևորափոխադրումների 7,5% աճ, ուղևորաշրջանառության՝ 10,4% աճ, իսկ կոնտեյներներով առաքվող բեռների գծով՝ 28,8% աճ:

Ներդրվել է ուղևորափոխադրումների էլեկտրոնային տոմսավորման համակարգ:

Ճանապարհաշինություն

2023 թվականին ճանապարհաշինության ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ճանապարհաշինարարական ծրագրերով ընդհանուր առմամբ հիմնանորոգվել, միջին նորոգվել, վերակառուցվել, կառուցվել և սալարկվել են շուրջ 800 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածներ:

501 կմ ճանապարհների գծով աշխատանքներն ամբողջությամբ ավարտված են, իսկ 55 կմ գծով ամբողջությամբ կատարված են ներքին շերտով ասֆալտբետոնային աշխատանքները:

Մասնավորապես, 501 կմ ավարտված աշխատանքների շրջանակներում իրակա-նացվել են՝

- շուրջ 321,3 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածների հիմնանորոգման աշխատանքներ,
- 148,7 կմ ընդհանուր երկարությամբ միջպետական և հանրապետական նշա-նակության ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգման աշխատանքներ,
- 31 կմ վերակառուցման աշխատանքներ՝ Հյուսիս–հարավ ծրագրի շրջանակներում:

ՀՀ համայնքներում սուբվենցիոն ծրագրի շրջանակներում ասֆալտապատվել է շուրջ 210 կմ և սալարկվել շուրջ 38 կմ ներհամայնքային ճանապարհ:

Հիմնանորոգված և վերակառուցված ճանապարհներից առանձնահատուկ կարևորություն և ռազմավարական նշանակություն ունեն հատկապես՝

- Մ-1, Երևան-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի Աշոցքից Բավրա 11,5 կմ հատվածի հիմնանորոգումը, որն ապահովում է կապը դեպի Վրաստան և Վրաստանի տարածքով ելքը դեպի այլ երկրներ,
- Հ-38 հանրապետական նշանակության ավտոճանապարհի Թթուջուր –Նավուր 26,2 կմ հատվածի հիմնանորոգումը, որն ապահովում է Բերդի տարածաշրջանի այլընտրանքային կապը Երևանի հետ՝ կրճատելով գոյություն ունեցող ճանապարհը շուրջ 20 կմ–ով,
- Տաթև - Լծեն – Շամբ – Նորավան ավտոճանապարհի 13,6 կմ հատվածների վերակառուցումը, որով բարելավվել է Հայաստանի և Իրանի միջև տրանսպոր-տային կապը՝ շրջանցելով Մ-2 միջպետական ավտոճանապարհի Տաթևի ոլորանների դժվարանցանելի հատվածը,
- Մ-12 - Կոռնիձոր - ՀՀ սահման 11,8 կմ հատվածի վերակառուցումը:

Տրանսպորտային օբյեկտների վերականգնման շրջանակներում հիմնանորոգվել և կառուցվել են 4 կամուրջ, 1 վերգետնյա հետիոտնային անցում, 2 տրանսպորտային հանգույց, որոնցից հատկապես կարևոր նշանակություն ունի Մ-4 միջպետական նշանակության ճանապարհին գտնվող Թեղուտ գյուղի հատվածի կամրջի և Մ-3 միջպետական նշանակության ճանապարհին գտնվող Ջրարբի գյուղի հատվածի կամրջի հիմնանորոգումը:

Կառուցվել է Մ-10, Սևան-Մարտունի-Գետափ ճանապարհի՝ Գետափ բնակավայրի դպրոցի մոտ վերգետնյա հետիոտնային անցումը:

Ճանապարհների հիմնանորոգման և վերակառուցման աշխատանքների շրջանակներում վերականգնվել է նաև 57 կամրջային անցում:

Ճանապարհների հիմնանորոգման, վերակառուցման աշխատանքների շրջանակներում տեղադրվել են 9 739 ճանապարհային նշան և 173 430 գծ/մ մետաղական արգելափակոց:

Ճանապարհների անվտանգության տարրերի վերականգնման ուղղությամբ՝ ճանապարհների սպասարկման շրջանակներում միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին վերականգնվել և տեղադրվել են 3 792 ճանապարհային նշան և 23 162 գծ/մ մետաղական արգելափակոց, տեղադրվել են շուրջ 13 զբոսաշրջային օբյեկտ ցույց տվող նշաններ:

Կատարվել են միջպետական և հանրապետական ճանապարհների 434 050 քմ գծանշման աշխատանքներ, որից 48 670 քմ ջերմաթաղանթով:

Վթարների կանխարգելման նպատակով վերացվել է 25 «սև կետ»:

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում Աշտարակ – Թալին, շուրջ 42 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհի վերակառուցման նպատակով իրականացվել է երկու միջազգային մրցութային գործընթաց, որի արդյունքում կնքված պայմանագրերի շրջանակներում արդեն իսկ մեկնարկել են ճանապարհի վերակառուցման աշխատանքները՝ Ագարակի հնագիտական վայրը շրջանցող 8 կմ և անավարտ 34 կմ հատվածում:

Ընթացել են Լանջիկ-Գյումրի հատվածի շինարարական աշխատանքները՝ 26 կմ հիմնական և 5 կմ մոտեցնող ճանապարհներին ու հանգույցներում իրականացվել են երկու ուղղությամբ եռաշերտ ասֆալտբետոնային ծածկի տեղադրման աշխատանքները:

Ավարտվել է Քաջարան-Ագարակ (Իրանի սահման) 32 կմ ճանապարհահատվածի վերակառուցման աշխատանքների միջազգային մրցութային գործընթացը, որի արդյունքում ճանապարհի վերակառուցման պայմանագիր է կնքվել իրանական շինարարական կազմակերպության հետ:

Ճանապարհների պահպանման աշխատանքների հսկողություն իրականացնելու նպատակով ճանապարհային ցանցի կառավարման համակարգում ներդրվել է բջջային հավելված, որի շնորհիվ ապահովվում է առցանց ռեժիմով հսկողությունը: Հավելվածի գործարկման արդյունքում արձանագրվել է 3 510 խախտում, իսկ ժամանակին չվերացված շուրջ 900 թերության համար կիրառված տույժերը կազմել են 194 մլն ՀՀ դրամ՝ նախորդ երեք տարիների համար կիրառված համապատասխանաբար 10,5 մլն, 19,5 մլն և 28 մլն ՀՀ դրամի չափով տույժերի համեմատ:

Ջրային տնտեսություն

2023 թվականին ջրային ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Խմելու ջրի կորուստները կազմել են 63,1%՝ 2022 թվականի 65,3%-ի, 2021 թվականի 73,7%-ի, 2020 թվականի 75,2%-ի, 2019 թվականի 76,6%-ի և 2018 թվականի 79,1%-ի համեմատ:

Մատակարարված ոռոգման ջրի կորուստները կազմել են 44,9%՝ 2022 թվականի 46,4%-ի, 2021 թվականի 46,2%-ի, 2020 թվականի 46,3%, 2019 թվականի 46,2%-ի և 2018 թվականի 46,2%-ի համեմատ:

Իրականացվել են ընդհանուր շուրջ 229 կմ ջրատարի և բաշխիչ ցանցի կառուցման և վերակառուցման, շուրջ 58 կմ անհատական տնային մուտքագծերի կառուցման, շուրջ 6,5 կմ կոյուղու ցանցի վերակառուցման, 4 852 տնային միացումների և 7 583 անհատական ջրաչափական հորերի տեղադրման աշխատանքներ:

Իրականացվել են շուրջ 65 կմ ոռոգման համակարգի վերակառուցման աշխատանք-ներ, այդ թվում՝ զարգացման գործընկերների հետ համագործակցության արդյունքում:

ՀՀ համայնքներում սուբվենցիոն ծրագրի շրջանակներում կառուցվել և նորոգվել են շուրջ 287 կմ ջրամատակարարման և ջրահեռացման ջրագիծ և շուրջ 229 կմ ոռոգման համակարգ:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկման տարածքում ջրամատակարարման շարունակականությունը կազմել է՝ Երևան քաղաքում՝ 23,2 ժամ/օր, այլ քաղաքային բնակավայրերում՝ 20,5 ժամ/օր, իսկ գյուղական բնակավայրերում՝ 20,2 ժամ/օր: Ջրի որակը կազմել է 98,6%՝ 2022 թվականի 98,4% համեմատ:

Շարունակվել է Սյունիքի, Արարատի և Գեղարքունիքի մարզերի 26 բնակավայրի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման և վերականգնման նպատակով՝ 2022 թվականին մեկնարկած «Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգում» եռամյա ծրագրի իրականացումը, որի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 5,7 մլրդ ՀՀ դրամ:

Իրականացվել են 80,9 կմ ջրատար ճյուղերի և 4 852 տնային միացումների հանգույցների կառուցման, ինչպես նաև շարունակվել են 2022 թվականին մեկնարկած Մեղրի քաղաքի ջրամաքրման կայանի կառուցման աշխատանքները:

13 համայնքներում շահագործման են հանձնվել ջրամատակարարման վերակառուցված համակարգերը, որոնց գծով ներդրումները կազմել են 1,7 մլրդ ՀՀ դրամ:

Շարունակվել են KFW-ի, ԵՆԲ-ի և ԵՄ-ի ֆինանսավորմամբ իրականացվող 6 մարզի 11 քաղաքում և 45 գյուղական բնակավայրում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման աշխատանքները:

Շիրակի, Լոռու, Արմավիրի, Գեղարքունիքի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում իրականացվել են նաև հետևյալ աշխատանքները՝

- ջրատարի կառուցում՝ 12,3 կմ,
- բաշխիչ ցանցի վերակառուցում՝ 118 կմ,
- տնային մուտքագծեր՝ 55,7 կմ,
- անհատական ջրաչափական հորերի տեղադրում՝ 7 107 հատ,
- կոյուղու ցանցի վերակառուցում՝ 6,5 կմ:

Այս մասով ներդրումների ընդհանուր ծավալը կազմել է 3,7 մլրդ ՀՀ դրամ:

ՎԶԵԲ, ԵՆԲ և ԵՄ ֆինանսավորմամբ Երևան քաղաքի ջրամատակարարման համակարգերում կառուցվել են՝

- բաշխիչ ցանց՝ 17,6 կմ,
- անհատական տնային մուտքագծեր՝ 2,36 կմ,
- անհատական ջրաչափական հորեր՝ 476 հատ:

Այս մասով ներդրումների ընդհանուր ծավալը կազմել է 1,4 մլրդ ՀՀ դրամ:

Շարունակվել են Վեդիի ջրամբարի պատվարի և օժանդակ կառուցվածքների կառուցման աշխատանքները, մասնավորապես, Վեդիի ջրամբարի հիմնական 85 մ բարձրությամբ պատվարից արդեն կառուցված է ընդհանուր 81 մ բարձրությամբ հատվածը, շարունակվել է ջրամբարի հիդրոմեխանիկական սարքավորումների տեղադրման գործընթացը (տարեվերջի դրությամբ կատարվել է ջրամբարի կառուցման աշխատանքների 96%-ը): Մեկնարկել են Վեդիի ջրամբարի և Վեդի գետի իշխման տակ գտնվող փորձնական հողատարածքներում (շուրջ 580 հա) ոռոգման ներտնտեսային ցանցի կառուցման աշխատանքները: Այս մասով ներդրումների ընդհանուր ծավալը կազմել է 1,2 մլրդ ՀՀ դրամ:

Ապրիլի 21-ին կնքվել է Կապսի ջրամբարի և օժանդակ կառուցվածքների կառուցման պայմանագիրը, և հունիսի 9-ին մեկնարկել են շինարարական աշխատանքներ, այդ թվում՝ իրականացվել են մոբիլիզացիոն և գետի ջրի հեռացման համակարգի

կառուցման աշխատանքները: Այս մասով ներդրումների ընդհանուր ծավալը կազմել է 5,3 մլրդ ՀՀ դրամ:

Մշակվել են 5 ջրամբարի (Աստղաձորի, Ելփինի, Քասախի, Լիճքի և Արթիկի) և 28 օրվա կարգավորման ջրավազանների նախագծանախահաշվային փաստաթղթերը:

Ոռոգման համակարգերի վերականգնմանն ուղղված միջոցառման շրջանակներում Արմավիրի և Արարատի մարզերում հիմնանորոգման աշխատանքներ են իրականացվել «Արմավիր», «Երևան», «Արտաշատ» և «Արարատ» ՋՕԸ-երի սպասարկման տարածքներում գտնվող 5 օբյեկտում: Նշված աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են: Կառուցվել է 2520 գծ.մ ջրանցք, 795 գծ.մ խողովակաշար, և Մասիսի տարածաշրջանի 70 ինքնաշատրվանող խորքային հոր կահավորվել է իմպուլսային ելքով ջրաչափական սարքավորումներով և փականներով: Ջրօգտագործողների ընկերությունների կողմից ջրօգտագործման թույլտվություն ունեցող բոլոր ջրառի կետերը ջրաչափական սարքավորումներով կահավորելու համար ձեռք է բերվել և ՋՕԸ-երին տեղադրման համար տրամադրվել է 781 հատ հոսքաչափ:

Շարունակվել են 2022 թվականի սեպտեմբերից մեկնարկած երկրորդ կարգի 27 ջրանցքի շուրջ 65,8 կմ ընդհանուր երկարությամբ վթարային հատվածների և շուրջ 16,1 կմ ընդհանուր երկարությամբ ներտնտեսային ոռոգման 3 համակարգի վերականգնման աշխատանքները, և մինչև տարեվերջ վերականգնվել են երկրորդ կարգի ջրանցքների շուրջ 53,5 կմ ընդհանուր երկարությամբ հատվածներ և 15,4 կմ ներտնտեսային ոռոգման ցանց: Այս մասով 2023 թվականի ընթացքում ներդրումների ընդհանուր ծավալը կազմել է 4 մլրդ ՀՀ դրամ:

«Կոլեկտորադրենաժային ցանցերի պահպանում և շահագործում» ծրագրի շրջանակներում իրականացվել են շուրջ 200,5 կմ ընդհանուր երկարությամբ հատվածների մաքրման և նորոգման աշխատանքներ, ինչպես նաև Արարատյան դաշտում տեղադրված 455 դիտողական հորատանցքերում գրունտային ջրերի մշտադիտարկումներ:

2022 թվականից մեկնարկած 10 հակահեղեղային առաջնահերթ միջոցառումներից 8-ի գծով աշխատանքներն ավարտվել են:

Էներգետիկա

2023 թվականին էներգետիկայի ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Արտադրվել է շուրջ 8,8 մլրդ կՎտժ էլեկտրաէներգիա, այդ թվում՝

- ԱԷԿ՝ շուրջ 2,7 մլրդ կՎտժ կամ 30,6%,
- ՋԷԿ-եր՝ շուրջ 3,7 մլրդ կՎտժ կամ 42%,
- ՀԷԿ-եր՝ շուրջ 1,6 մլրդ կՎտժ կամ 18,6%,

- արևային կայաններ (ներառյալ՝ ինքնավար էներգաարտադրությունը)՝ շուրջ 0,78 մլրդ կՎտժ կամ 8,8%,
- այլ աղբյուրներ՝ շուրջ 0,002 մլրդ կՎտժ կամ 0,1%:

Հայաստանում գործել է 17 112 ինքնավար էներգաարտադրող՝ ընդհանուր 268 ՄՎտ հզորությամբ, որը 2019 թվականի հունվարի 1-ի համեմատ քանակային առումով աճել է շուրջ 22 անգամ և հզորության առումով՝ շուրջ 30 անգամ:

Արտահանվել է շուրջ 1,2 մլրդ կՎտժ, ներմուծվել է շուրջ 97,6 մլն կՎտժ:

2022 թվականի համեմատ արտադրությունը նվազել է 344,6 մլն կՎտժ-ով (3,75%-ով), արտահանումը նվազել է 303 մլն կՎտժ-ով (19,6%-ով), ներմուծումը նվազել է 26,2 մլն կՎտժ–ով (21,2%-ով):

Արևային կայանների արտադրությունն աճել է 248,7 մլն կՎտժ-ով կամ 47,5 %–ով:

Սպառվել է շուրջ 6,5 մլրդ կՎտժ էլեկտրաէներգիա, որը 2022 թվականի նույն ցուցանիշից ավելի է 91,6 մլն կՎտժ-ով կամ 1,43%-ով:

Ընդհանուր սպառվող էլեկտրաէներգիայի շուրջ 20%-ը վաճառվել է ազատականացված շուկայում՝ չկարգավորվող մրցակցային գներով (տարվա ընթացքում 10 տոկոսային կետով աճ): Ազատ առևտրի մասնակիցների թիվը կազմել է 171 (այդ թվում՝ մատակարարները՝ 16, մեծածախ առևտրի լիցենզիա ունեցողները՝ 5, որակավորված սպառողները՝ 9 և մանրածախ սպառողները՝ 141), իսկ կնքված գործարքները՝ 6 923:

Հայաստանում գործել են 473 ՄՎտ գումարային հզորության արևային կայաններ, այդ թվում՝ 61 արդյունաբերական և 17 112 ինքնավար կայաններ: Տարեվերջին 2023 թվականի հունվարի 1-ի համեմատ ինքնավար էներգաարտադրողների ընդհանուր թիվն աճել է 6 830–ով կամ 66,4 %–ով, իսկ ընդհանուր հզորությունը՝ 36%-ով:

Բնակելի տների և բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետ վերանորոգման պետական աջակցության ծրագրի շահառուների թիվը կազմել է 7 638՝ 2022 թվականի 1 265 թվի համեմատ աճելով 504%-ով: Ծրագրով տրամադրված վարկերի հանրագումարը կազմել է շուրջ 16 մլրդ ՀՀ դրամ՝ 2022 թվականի 2,5 մլրդ ՀՀ դրամ հանրագումարի համեմատ աճելով 540%-ով: Սուբսիդավորման գծով ծախսը կազմել է ավելի քան 860 մլն ՀՀ դրամ՝ 2022 թվականի 40 մլն ՀՀ դրամ ծախսի համեմատ:

Հաստատվել է Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի նախագծային շահագործման ժամկետի կրկնակի 2026-2036 թվականների երկարաձգման (ՇԺԵ-2) ծրագիրը, որով նախատեսվում են շուրջ 160 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ներդրումներ:

Ավարտվել են հաղորդման ցանցի բարձրավոլտ 220 կՎ լարման Լիճք, Աշնակ և Վանաձոր-1 ենթակայանների վերակառուցման աշխատանքները:

«ՀԷՑ» ՓԲԸ-ի մասով շարունակվել է խթանիչ սակագնային քաղաքականության իրականացումը, որի վերջնական արդյունքում՝ 2028 թվականին բաշխիչ ցանցում կորուստները կկազմեն 6,4% (2023 թվականին փաստացի արդեն իսկ կազմել են շուրջ 6,6%), աշխատողների թվաքանակը կօպտիմալացվի 1 660-ով, նորոգման և նյութական ծախսերը կկրճատվեն շուրջ 50%-ով, այլ ծախսերը՝ շուրջ 20%-ով:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի մասով շարունակվել է խթանիչ սակագնային քաղաքականության իրականացումը, որի վերջնական արդյունքում՝ 2030 թվականին համակարգի կորուստները կկազմեն 3,4% (2023 թվականին փաստացի արդեն իսկ կազմել են շուրջ 5,1%), աշխատողների թվաքանակը կօպտիմալացվի 500-ով, շահագործման ու պահպանման ծախսերը՝ շուրջ 20%-ով:

Հաստատվել և մեկնարկել է Երևան քաղաքը գազամատակարարման լրացուցիչ նոր հզորություններով ապահովելու ծրագիրը, որի համար անհրաժեշտ գումարը՝ շուրջ 20 մլրդ ՀՀ դրամ, սպառողների համար գործող սակագների պահպանմամբ նախատեսվել է գազամատակարարման համակարգի կարգավորվող սակագների հաշվարկներում, ինչը հնարավորություն է տալիս իրականացնել նշված ծրագիրը՝ բավարարելով խոշորամասշտաբ կառուցապատմամբ պայմանավորված աճող սպառման ծավալները և տնտեսապես արդյունավետ կերպով կազմակերպելով նոր գազամատակարարման համակարգերի կառուցումը: Ծրագրի իրականացման արդյունքում Երևան քաղաքի գազամատակարարման ցանցի հզորությունը կավելանա շուրջ 244 000 խմ/ժ-ով:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ժողովրդագրություն

Ժողովրդագրական պատկերը նկարագրող վերջին տարիների ցուցանիշները գրանցել են դրական տեղաշարժեր, մասնավորապես.

- **Մշտական բնակչություն.** սկսած 1992 թվականից բնակչության միջին տարեկան թվաքանակի ամենամեծ աճը գրանցվել է 2023 թվականին. նախորդ տարվա համեմատ բնակչության թվաքանակն աճել է 53 400–ով, որից 12 000-ը՝ ի հաշիվ բնական հավելաճի (2023 թվականին մշտական բնակչության միջին տարեկան թվաքանակը՝ 2 964 200 մարդ):
- 2014 թվականից սկսած տարեցտարի նվազում էր ծնված երեխաների թիվը, սակայն 2020 թվականից տեղի է ունեցել ծնունդների թվի կայունացում, և վերջին 4 տարվա ընթացքում տարեկան ծնված երեխաների թիվը շուրջ 36 500 է եղել, իսկ 2022 թվականին ծնելիության ցուցանիշն ամենաբարձրն է եղել (2023 թվականի արդյունքները Վիճակագրական կոմիտեի կողմից ամփոփված կներկայացվեն 2024 թվականի կեսին):

- 2018 թվականին նոր ծնված՝ 3-րդ և հաջորդ երեխաների թիվը կազմել է 8 271, իսկ 2022 թվականին՝ 11 956 (5 տարիների ընթացքում աճը կազմել է շուրջ 45%), որին նպաստել է նաև Ընտանիքում ծնված 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխային աջակցության ծրագիրը, որի շրջանակում ընտանիքում կարգաթվով 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխայի ծննդյան կապակցությամբ երեխային տրամադրվում է աջակցություն՝ ամսական 50 000 դրամի չափով՝ մինչև երեխայի 6 տարին լրանալը:
- **Մահացություն.** 2023 թվականին գրանցվել է վերջին 20 տարվա մահացության ամենացածր գործակիցը՝ 1000 բնակչի հաշվով մահացության ընդհանուր գործակիցը կազմել է 8,2 պրոմիլ:

Ժողովրդագրության բարելավման նպատակով 2023 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Հունվարի 1-ից ներդրվել է մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի նոր համակարգ: Արդյունքում, նպաստի իրավունք են ստացել նաև չաշխատող քաղաքաբնակ (31 600 ՀՀ դրամի չափով) և գյուղաբնակ (69 100 ՀՀ դրամի չափով) մայրերը:

Երեխա ունեցող ընտանիքներին բնակարանային ապահովության պետական աջակցության 2020-2023 թվականների ծրագրով աջակցություն է ստացել 3 617 շահառու (աջակցության գծով ծախսը կազմել է շուրջ 2,7 մլրդ ՀՀ դրամ):

2022 թվականի հունվարի 1-ից գործող՝ ծնված 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան կապակցությամբ դրամական աջակցության ծրագրի շրջանակում միջին ամսական կտրվածքով աջակցություն է վճարվել 16 074 երեխայի համար, իսկ միայն 2023 թվականի դեկտեմբեր ամսին՝ 21 804 երեխայի համար: Տվյալ աջակցության գծով ընդհանուր ծախսը կազմել է շուրջ 10,4 մլրդ ՀՀ դրամ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում ընդլայնվել են երեխա ունեցող աշխատողների իրավունքները:

Միգրացիա

ՀՀ պետական սահմանի անցակետերով 2023 թվականին սահմանային մուտքերի թիվը կազմել է 4 764 274 (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիներ 1 972 135), իսկ սահմանային ելքերինը՝ 4 793 768 (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիներ 2 008 647): 2022 թվականի նույն ժամանակահատվածում մուտքերի թիվը կազմել 3 394 371 (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիներ 1 479 798), ելքերինը՝ 3 355 639 (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիներ 1 507 739): 2022 թվականի համեմատ 2023 թվականին ՀՀ սահմանային անցակետերով մուտքերի թիվն աճել է 40,4%-ով, իսկ ելքերինը՝ 42,9%-ով, այդ թվում՝ ՀՀ քաղաքացիների մուտքերի թիվն աճել է 33,3%-ով, իսկ ելքերինը՝ 33,2%-ով:

2023 թվականին միգրացիայի ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը վերակազմակերպվել է ՀՀ ներքին գործերի նախարարության ենթակա մարմնի, հաստատվել է ծառայության նոր կանոնադրությունը, անձնագրերի և վիզաների վարչությունը ներառվել է ծառայության կազմում:

Գործարկվել է migration.e-gov.am էլեկտրոնային հարթակը՝ քաղաքացիների համար ավելի մատչելի և հարմարավետ դարձնելով ոլորտի հիմնական ծառայությունները:

Ապաստանի հայցեր են ստացվել 817 օտարերկրյա քաղաքացուց (2022 թվականին թիվը կազմել է 976):

Մեկնարկել է 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնի տեղահանված և ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքներին բնակարանների գնման վկայագրերի տրամադրման ծրագրի իրականացումը ՀՀ մարզերում, վկայագրեր են տրամադրվել 134 փախստական ընտանիքի (շուրջ 1,4 մլրդ ՀՀ դրամի չափով):

Ստացվել է ՀՀ քաղաքացիության շնորհման վերաբերյալ 19 185 դիմում, քաղաքացիություն է շնորհվել 20 884 անձի: Ստացվել է ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ 3 687 դիմում, դադարեցվել է 3 321 անձի քաղաքացիությունը:

Կրթություն

2023 թվականին հաստատվել է «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքից բխող գործողությունների ծրագիրը՝ կրթության բոլոր մակարդակներում հստակ թիրախներով և ժամանակացույցով: Իրականացվել է դրա շրջանակում նախատեսված ավելի քան 45 ռազմավարական ծրագիր:

2023 թվականին հանրակրթության ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Սեպտեմբերից բոլոր դպրոցների 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում ներդրվել է հանրակրթության նոր պետական չափորոշիչը. պարտադիր են դարձել նախագծային ուսուցումը, խմբակներն ու հետազոտական աշխատանքը: Տարրական դասարաններում միավորային գնահատում այլևս չի իրականացվում, հանվել է անբավարար գնահատականային շեմը, ներդրվել է պարտադիր երկարօրյա ուսուցում ցածր առաջադիմությամբ երեխաների համար:

Նոր ձևաչափով դասագրքերի ստեղծման և տպագրության մրցույթների շնորհիվ ապահովվել է մրցակցային դաշտ, և մեկ դասագրքի արժեքը միջինում նվազել է 23-26%-ով:

Մարզերի և Երևանի 293 դպրոց (218 դպրոց և 75 կրթահամալիր) ընդգրկվել է մինչև 2026 թվականը 300 դպրոցի վերակառուցման, կառուցման և հիմնանորոգման և նոր գույքով ամբողջական հագեցման ծրագրի ցանկում: Հաստատությունները սպասարկելու են շուրջ 108 000 սովորողի (սովորողների ընդհանուր թվի ավելի քան 25%-ը): 2021-2023 թվականներին շահագործման է հանձնվել 28 դպրոց: Գույքով ապահովվել են 24 դպրոց և 29 մարզադահլիճ:

ՏՀՏ և բնագիտական լաբորատորիաներ են ստեղծվել Արմավիրի մարզի 88 և այլ մարզերի ու Երևանի 12 նորակառույց դպրոցներում: 38 ավագ դպրոցում գործարկվել են ֆաբլաբեր:

Սեպտեմբերից ներդրվել է դպրոցների ֆինանսավորման նոր կարգը. սովորողների թվով ֆինանսավորումից անցում է կատարվել դասարանների թվով ֆինանսավորման, էապես ավելացել է կրթության ներառականության ֆինանսավորումը, առանձին ֆինանսավորում է նախատեսվել լաբորատորիաների պահպանման համար:

Դպրոցներում բովանդակային և վարչատնտեսական կառավարման տարանջատման արդյունքում նշանակվել են 50 տնօրեն և 97 վարչատնտեսական համակարգող: Տնօրենները նշանակվում են զարգացման ծրագրի անկախ փորձաքննության (դրական փորձաքննություն է ստացել ծրագրերի 15,5%-ը) և մասնագիտական հանձնաժողովի հարցազրույցի արդյունքում:

Կամավոր ատեստավորման հնարավորություն են ստացել 1-12-րդ դասարաններում դասավանդող բոլոր ուսուցիչները, ինչպես նաև ուսուցչի պահանջներին բավարարող, բայց ուսուցիչ չաշխատող անձինք, քոլեջներում և ուսումնարաններում դասավանդող հանրակրթական առարկաների ուսուցիչները: 2023 թվականին ատեստավորման դրական արդյունք է գրանցել 2 976 ուսուցիչ: Երեք տարիների ատեստավորման արդյունքում վարձատրության բարձրացում ունի ընդհանուր առմամբ 3 830 ուսուցիչ, որոնց վարձատրությունն առնվազն կրկնապատկվել է:

Ուսուցիչների տարակարգի մեխանիզմը կապակցվել է ուսուցչի դասավանդման հմտություններին, նոր մեխանիզմով տարակարգ է ստացել 101 մանկավարժ, այդ թվում՝ առաջին անգամ ամենաբարձր (չորրորդ աստիճանի տարակարգ)՝ 50% հավելավճարով: Տարակարգի և կամավոր ատեստավորման համակարգերի միջոցով առկա են 400 000-ից մինչև 600 000 ՀՀ դրամ վարձատրություն ստացող ուսուցիչներ: 400 000 ՀՀ դրամ և ավելի աշխատավարձ է արդեն ստանում շուրջ 220 ուսուցիչ:

Սեպտեմբերից 25%-ով բարձրացել է բնագիտական առարկաների և ինֆորմատիկայի ուսուցիչների աշխատավարձը. ծրագրի շահառու է 8 420 ուսուցիչ՝ աշխատավարձի շուրջ 32 000 դրամ աճով: Սեպտեմբերից բարձրացել է նաև մինչև 100 սովորող ունեցող

գյուղական դպրոցների 2 975 ուսուցչի վարձատրությունը, ում դրույքաչափն ավելացել է՝ միջինում 71 700 ՀՀ դրամից հասնելով 115 300 ՀՀ դրամի:

Արվեստի և սպորտի ոլորտներում արտադպրոցական հաստատությունների մանկավարժների համար ներդրվել է կամավոր ատեստավորման մեխանիզմ՝ 60 000, 80 000 և 100 000 ՀՀ դրամ հավելավճարի չափերով: Ատեստավորվել և հավելավճար է ստանում 42 մանկավարժ:

Ավագ դասարաններում փորձնական կարգով ներդրվել է կրեդիտային համակարգը, որի շրջանակներում դպրոցների կրեդիտները ճանաչվում են բուհերի կողմից: Այս շրջանակներում մասնավորի հետ համագործակցությամբ 16 դպրոցում ներդրվել է Արհեստական բանականության դասընթացը:

Այլևս ամբողջությամբ պետական ֆինանսավորմամբ է իրականացվում ՀՀ մարզերի 1-4-րդ դասարանների 100 000-ից ավելի երեխաների առողջ սննդի ծրագիրը: Հայաստանը միացել է Դպրոցական սննդի համաշխարհային կոալիցիային և տարբեր հարթակներում ներկայացրել ծրագրի իրականացման փորձը՝ որպես հաջողված:

2023 թվականին նախադպրոցական կրթության ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Լավարկումներ են իրականացվել նախադպրոցական կրթության մասին օրենքում, ինչի շնորհիվ պարզեցվել է վարչարարությունը տնօրենների հավաստագրման և կառավարման գործընթացներում, բարելավվել են ներառականության ապահովման հնարավորությունները, հստակեցվել են նախադպրոցական ծառայությունների լիցենզավորման պայմանները:

29 բնակավայրում ստեղծվել են նախակրթարաններ: Նախադպրոցական այլընտրանքային ծառայություններ են ներդրվել 27 բնակավայրում:

Շարունակվել է նախադպրոցական ուսումնական հաստատություններում համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացը: Ներկայում մանկապարտեզ է հաճախում և անհրաժեշտ մանկավարժահոգեբանական աջակցություն է ստանում հատուկ կարիք ունեցող 1 255 երեխա. նախորդ տարվա համեմատ երեխաների թիվն աճել է ավելի քան 5 անգամ: Պետական բյուջեից ֆինանսավորվում է նաև զինծառայողների երեխաների կրթությունը:

Շարունակվել են նախադպրոցական մանկավարժների մասնագիտական զարգացման ծրագրերը, վերապատրաստվել է շուրջ 1 500 մասնագետ: Ներդրվել է մանկապարտեզների մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման և վարձատրության բարձրացման փոխկապակցված համակարգը՝ տարակարգի տեսքով, որի արդյունքում արդեն կան տարակարգ ունեցող 10 մանկավարժներ: Տարակարգի շնորհիվ աշխատակիցները ստանում են 30-50% հավելավճար՝ պետական բյուջեի միջոցներից:

Կառավարության ծրագրով ամրագրված՝ նախադպրոցահասակ երեխաների 85% ընդգրկվածության թիրախն ապահովելու նպատակով շարունակվում է 500 մանկապարտեզի կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման ծրագիրը: 145 հաստատությունում շինարարական աշխատանքներն ավարտվել են, 90-ում՝ ընթացքի մեջ են: Նախադպրոցական ծառայություններ կգործեն նաև բոլոր կրթահամալիրներում:

2023 թվականին արհեստագործական և միջին մասնագիտական կրթության ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Դուալ ուսուցման մոդելը ներդրված է գյուղատնտեսության, ՏՏ, գինեգործության, զբոսաշրջության, ճշգրիտ ճարտարագիտության, լոգիստիկայի ոլորտների 24 մասնագիտությամբ: Այս մոդելով իրականացվող մասնագիտությունների մաս-նաբաժինը հասել է 15%-ի, իսկ ուսումնական հաստատություններինը՝ 18,3%-ի:

Վերանայվել է ոլորտում կրթաթոշակային քաղաքականությունը. տնտեսության համար գերակա ճյուղերի մասնագիտությունների նկատմամբ երիտասարդների հետաքրքրության բարձրացման նպատակով գյուղատնտեսության, արդյունաբերության և շինարարության ուղղություններով կրթություն ստացող ուսանողների համար սահմանվել է 50 000 ՀՀ դրամ կրթաթոշակ՝ արդեն իսկ բերելով ընդունելության աճի:

13 քոլեջում ընթանում են շենքային պայմանների բարելավման աշխատանքներ: 7 քոլեջ համալրվել է նոր գույքով, 5 հաստատություն միավորվել է:

2023 թվականին բարձրագույն կրթության ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

«Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակներում՝

- մշակվել և հաստատվել է ծրագրի հայեցակարգը,
- մեկնարկել են գլխավոր հատակագծի մշակման աշխատանքները՝ գերմանական ճարտարապետական ընկերության կողմից:

Հուշագիր է կնքվել Լոնդոնի արվեստների համալսարանի հետ՝ ակադեմիական քաղաքի արվեստների կլաստերի կառավարման համակարգի և ծրագրային բովանդակության ձևավորման հարցում համագործակցության նպատակով և Մյունխենի տեխնիկական համալսարանի հետ՝ տեխնոլոգիական կլաստերի շուրջ համագործակցության համար:

Մեկնարկել է բուհերի խոշորացման և գիտահետազոտական կազմակեր-պությունների միավորման հայեցակարգերի մշակումը:

Առաջին անգամ ընդունելության քննություններն անցկացվել են երկու փուլով՝ նվազեցնելով քննական սթրեսը և լարվածությունը, ինչպես նաև հնարավորություն ընձեռելով դիմորդներին լավագույնս դրսևորել իրենց կարողությունները:

2023-2024 ուստարում գրանցվել է ՀՀ բուհերում սովորող օտարերկրյա ուսանողների թվի շուրջ 8,4% աճ. 8 333 ուսանողից 4 229-ը՝ սփյուռքահայ (որից պետպատվերով սովորող՝ 330): Մշակվել է ՀՀ բուհեր օտարերկրյա քաղաքացիների փաստաթղթերի ընդունելության և հաշվառման էլեկտրոնային հարթակը, որի շահագործումը նախատեսվում է 2024-2025 ուստարում:

2023-2024 ուստարում գործարկվել են բուհերում կրթաթոշակի նոր մոտեցումները. պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող մասնագիտություն-ների համար սահմանվել է 70 000–77 000 ՀՀ դրամ կրթաթոշակ՝ նախկինում գործող 5 000-6 500 ՀՀ դրամի փոխարեն: Կրթաթոշակի նոր մոտեցումը ներդրվել է ԲՏՃՄ մանկավարժական ծրագրերով սովորողների համար՝ արդեն իսկ բերելով մագիստրատուրայում սովորողների թվի գրեթե կրկնապատկման:

ԲՏՃՄ մասնագիտությունների գծով 2023-2024 ուստարվա համար լրացուցիչ 100 տեղով ավելացվել է բակալավրի կրթական ծրագրով ընդունելության համար նախատեսվող պետության կողմից ֆինանսավորվող տեղերի թիվը՝ կազմելով պետական ֆինանսավորմամբ տեղերի ավելի քան 55%-ը:

Ներդրվել է ԲՏՃՄ ուղղությամբ ՀՀ բուհերում սովորող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման համակարգը, որի շրջանակ-ներում տարկետում է ստացել 105 ուսանող: Այդ ուղղություններով պետական պատվերով ընդունելությունն աճել է 17,3%-ով, այն պարագայում, երբ նախկինում տեղերը չէին համալրվում:

5 բուհում ֆինանսավորվել են կրթական և հետազոտական ենթակառուցվածքների և կարողությունների զարգացման ծրագրեր՝ ընդհանուր շուրջ 838 մլն ՀՀ դրամ արժողությամբ:

Գիտություն

2023 թվականին գիտության ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Մշակվել և ներդրվել է գիտաշխատողների ատեստավորման նոր կարգը, որով սահմանվել են որակական և քանակական նոր պահանջներ՝ համադրելի միջազգային չափորոշիչների հետ:

Գիտության ոլորտի (ներառյալ ռազմարդյունաբերությունը) ֆինանսավորումը կազմել է շուրջ 36 մլրդ ՀՀ դրամ, ինչն ավելի է 2022 թվականի ֆինանսավորման չափից 6,2 մլրդ ՀՀ դրամով կամ 20,8%-ով: 2018 թվականի 14,3 մլրդ ՀՀ դրամի համեմատ 2024 թվականին ոլորտի ֆինանսավորումն ավելացել է 25,9 մլրդ ՀՀ դրամով կամ շուրջ 2,8 անգամ:

Իրականացվել է երկակի նշանակության ծրագրերի աջակցության ամենամյա մրցույթը, որն ամփոփվել է 2 անգամ: Ֆինանսավորում տրամադրվել է 15 կարևոր պաշտպանական ծրագրերի՝ 215 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

Հետազոտական ենթակառուցվածքները ժամանակակից գիտական սարքավորումներով համալրելու նպատակով առաջին անգամ պետական բյուջեից միջոցներ են հատկացվել կապիտալ բնույթի ծախսային ծրագրերով՝ շուրջ 4,2 մլրդ ՀՀ դրամի չափով: Հարկ է նշել, որ 2013-2017 թվականների ընթացքում նույն նպատակով տրամադրվել է ընդամենը 961,4 մլն ՀՀ դրամ, իսկ 2018-2022 թվականների ընթացքում՝ շուրջ 5 մլրդ ՀՀ դրամ՝ որպես ընթացիկ դրամաշնորհներ:

Առաջին անգամ իրականացվել է մրցունակ գիտական ստորաբաժանումների հագեցվածությանն ուղղված մրցութային ծրագիր, որի բյուջեն ամբողջությամբ ուղղվել է փոքր և ամենօրյա կիրառություն ունեցող գիտական սարքավորումների և նյութերի ձեռքբերմանը: Մրցույթի արդյունքում ֆինանսավորման է երաշխավորվել 60 հայտ՝ ընդհանուր 932 մլն ՀՀ դրամ հանրագումարով:

Շարունակվել է նաև գիտական աշխատողների աշխատավարձերի բարձրացման գործընթացը, ինչի արդյունքում 2018-2021 թվականներին գիտական աշխատողների յուրաքանչյուր տարակարգի միջին աշխատավարձի նկատմամբ արդեն իսկ գրանցվել է աշխատավարձի ավելացում 75%-ից մինչև 226%: Մասնավորապես.

- լաբորանտի կամ ճարտարագետի աշխատավարձը կազմել է 110 000 ՀՀ դրամ՝ 2022 թվականի 102 500 ՀՀ դրամի համեմատ,
- ավագ լաբորանտի կամ ավագ ճարտարագետի աշխատավարձը կազմել է 130 000 ՀՀ դրամ՝ 2022 թվականի 110 000 ՀՀ դրամի համեմատ,
- կրտսեր գիտաշխատողի աշխատավարձը կազմել է 150 000 ՀՀ դրամ՝ 2022 թվականի 120 000 ՀՀ դրամի համեմատ,
- գիտաշխատողի աշխատավարձը կազմել է 200 000 ՀՀ դրամ՝ 2022 թվականի 150 000 ՀՀ դրամի համեմատ,
- ավագ գիտաշխատողի աշխատավարձը կազմել է 250 000 ՀՀ դրամ՝ 2022 թվականի 200 000 ՀՀ դրամի համեմատ,
- առաջատար գիտաշխատողի աշխատավարձը կազմել է 350 000 ՀՀ դրամ՝ 2022 թվականի 250 000 ՀՀ դրամի համեմատ,
- գլխավոր գիտաշխատողի աշխատավարձը կազմել է 450 000 ՀՀ դրամ՝ 2022 թվականի 367 000 ՀՀ դրամի համեմատ,
- գիտական խմբի ղեկավարի աշխատավարձը կազմել է 280 000 ՀՀ դրամ՝ 2022 թվականի 230 000 ՀՀ դրամի համեմատ,
- գիտական ստորաբաժանման ղեկավարի աշխատավարձը կազմել է 400 000 ՀՀ դրամ՝ 2022 թվականի 350 000 ՀՀ դրամի համեմատ:

Էապես ավելացել է ոլորտում մրցութային հիմունքներով տրամադրվող ֆինանսավորման մասնաբաժինը. 2018 թվականին գիտական գործունեության մրցութային ծրագրերով ֆինանսավորման մասնաբաժինը կազմում էր 30%, իսկ 2023-2024 թվականներին այդ ցուցանիշը կազմել է շուրջ 60%:

Արտերկրի գիտնականների հետ կապերի սերտացման շրջանակներում ֆինանսավորման է երաշխավորվել ԲՏՃՄ ոլորտի 6 նախագիծ՝ 247 մլն ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Հեռավար լաբորատորիաների ստեղծման ծրագրի շրջանակում 21 տարբեր երկրից ղեկավարների ներգրավմամբ ֆինանսավորման է երաշխավորվել ԲՏՃՄ 11 և հասարակագիտական 4 նախագիծ՝ 506 մլն ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Երիտասարդ գիտնականներին խրախուսելու նպատակով ֆինանսավորման է երաշխավորվել ասպիրանտների և երիտասարդ հայցորդների 42 ծրագիր՝ 35,5 մլն ՀՀ դրամ ընդհանուր արժեքով: Կազմակերպվել է 10 ասպիրանտի և հայցորդի նպատակային ուսուցում արտերկրի լավագույն կենտրոններում՝ շուրջ 56 մլն ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Առողջապահություն

Հաշվետու ժամանակաշրջանում բարձրացել է բժշկական ծառայությունների հասանելիությունը և բարելավվել է որակը, արձանագրվել է մահացության ցուցանիշի նվազում, այդ թվում՝ մայրական մահացության, բարելավվել է հիվանդությունների կանխարգելման գործընթացը:

2023 թվականին առողջապահության ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ավելացել են պետական պատվերի շրջանակներում հիվանդանոցային, դժվարամատչելի բժշկական օգնության և սպասարկման ծավալները, մասնավորապես, մատուցված ծառայությունների թիվը կազմել է 861 845, ինչը 74 981-ով ավելի է 2022 թվականին և շուրջ 2,5 անգամ ավելի է 2017 թվականին մատուցված 349 260 ծառայության համեմատ:

Ներդրվել է հերթագրման էլեկտրոնային միասնական ավտոմատ համակարգ:

Պետպատվերի շրջանակներում բնակչությանը մատուցվել են հետևյալ հիմնական ծառայությունները.

- չարորակ նորագոյացություններով պացիենտներին վիրահատական և ոչ վիրահատական (քիմիաթերապևտիկ և ճառագայթային բուժման) բժշկական օգնության և սպասարկման շուրջ 50 000 ծառայություն (1,5%-ով ավելի է նախորդ տարվա ցուցանիշից): Կոլոռեկտալ քաղցկեղի վաղ հայտնաբերման սքրինինգային փորձարարական ծրագրի շրջանակներում իրականացվել է

2 149 հետազոտություն, որի արդյունքում 111 անձի մոտ իմունաքիմիական թեստերն ունեցել են դրական արդյունքներ, 79 քաղաքացի պետական պատվերի շրջանակներում ուղեգրվել է կոլոնոսկոպիկ հետազոտության: Կրծքագեղձի քաղցկեղի կանխարգելման նպատակով ծրագրի մեկնարկից ի վեր իրականացվել է 26 979 մամոգրաֆիկ անվճար սքրինինգային հետազոտություն, որոնցից 9 681-ը՝ 2023 թվականին: 2021 թվականի համեմատ՝ 2022 թվականին կյանքում առաջին անգամ ախտորոշված չարորակ նորագոյացությունների դեպքերն աճել էին 6,6%-ով, իսկ մահացության դեպքերը՝ նվազել 3,4%-ով. մատուցված ծառայությունների արդյունքում այս դինամիկան շարունակվել է նաև 2023 թվականի 8 ամսվա ընթացքում նախորդ տարվա համեմատ՝ կյանքում առաջին անգամ ախտորոշված դեպքերն աճել են ևս 3,3%-ով, իսկ նորագոյացություններից մահացությունը 2023 թվականին նվազել է շուրջ 1%-ով,

- սիրտ-անոթային հիվանդությունների բժշկական օգնության և սպասարկման շուրջ 42 000 ծառայություն, ինչը շուրջ 7%-ով ավելի է նախորդ տարվա նույն ցուցանիշից: Մատուցվել է սրտի անհետաձգելի վիրահատական (Stent for Life) 2 530 ծառայություն՝ 2022 թվականի 2 443 ծառայության համեմատ: Ընդլայնվել է գլխուղեղի կաթվածների ծրագիրը. տրամադրվել է 770 ծառայություն՝ 2022 թվականի 714 ծառայության համեմատ: Նոր ներդրված աորտայի շերտազատված անևրիզմայի վիրահատական բուժման ծրագրի շրջանակներում մատուցվել է 67 ծառայություն: 2022 թվականին նախորդ տարվա համեմատ, այդ թվում՝ նշված ծրագրերի իրականացման արդյունքում, արյան շրջանառության համակարգի հիվանդություններով պայմանավորված մահացության դեպքերը նվազել են 14,1%-ով, ինչը շարունակվել է նաև 2023 թվականին՝ 12 ամիսների ընթացքում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ նշված պատճառով պայմանավորված մահվան դեպքերը նվազել են ևս 10,2%-ով,
- ավելացել է օրգանների փոխպատվաստման ծառայությունների թիվը՝ կազմելով 68 (երիկամի փոխպատվաստում 20 վիրահատություն, լյարդի փոխպատվաստման 5 վիրահատություն, ոսկրածուծի/ցողունային բջիջների աուտոփոխպատվաստման 43 վիրահատություն):

Հասանելի և որակյալ ծառայությունների ապահովման ուղղությամբ իրականացվել են նաև հետևյալ միջոցառումները.

- առողջության համապարփակ ապահովագրության ներդրման նպատակով մշակվել է «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծը,
- ԱԱՊ համակարգում հիվանդությունների կանխարգելման, վաղաժամ հայտնաբերման և հոսպիտալացման նվազեցման նպատակով ներդրվել է նոր բոնուսային համակարգ, ինչի արդյունքում բուժաշխատողներին փաստացի հանրագումարային վճարվել է 1,1 մլրդ ՀՀ դրամ: Նշված համակարգում ներառվել

են նաև բուժակ-մանկաբարձական կետի բուժքույրեր, իսկ ԱԱՊ օղակի տեղամասային բժշկի միջին աշխատավարձն աճել է 33%-ով,

- մշակվել են բժշկական օգնության և սպասարկման գործող տեսակների ավելի քան 60% ծառայությունների մասով բժշկական հաստատությունների լիցենզավորման պահանջները և պայմանները, ինչպես նաև օրենքով հաստատվել է լիցենզավորման 5 տարվա պահանջը, մշակվել է նաև 374 ախտորոշման գործելակարգ,
- ավարտվել են Մարտունու բժշկական կենտրոնի և Վայոց ձորի բժշկական կենտրոնի արդիականացման աշխատանքները,
- մեկնարկել են Լոռու մարզի Վանաձորի ԲԿ ինֆեկցիոն ծառայության նոր մասնաշենքի կառուցման աշխատանքները, որոնք կավարտվեն 2024 թվականի ընթացքում,
- մեկնարկել են «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի Արարատի և Արմավիրի մասնաճյուղերի վերակառուցման աշխատանքները, որոնք կավարտվեն 2024 թվականի ընթացքում,
- մեկնարկել են Արտաշատի ԲԿ պոլիկլինիկական մասնաճյուղի վերակառուցման աշխատանքները, որոնք կավարտվեն 2024 թվականի ընթացքում,
- շարունակվել են Թալինի ԲԿ-ի, Ծաղկահովիտի ԱԿ-ի և Չարենցավանի ԲԿ-ի շինարարական՝ կառուցման և վերակառուցման աշխատանքները, որոնք կավարտվեն 2024 թվականի ընթացքում,
- շարունակվել են «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի, «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի, Սիսիանի ԲԿ-ի, Մասիսի ԲԿ-ի, Եղվարդի ԲԿ-ի և Տաշիրի ԲԿ-ի շինարարական՝ կառուցման և վերակառուցման աշխատանքները, որոնք կավարտվեն 2025 թվականի ընթացքում,
- շարունակվել են Աշտարակի ԲԿ-ի և Վաղարշապատի ԲԿ-ի վերակառուցման շինարարական աշխատանքները, որոնք կավարտվեն 2026 թվականի ընթացքում:

Մոր և մանկան առողջության պահպանման ուղղությամբ.

- ընդլայնվել է վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեցող շահառուների ցանկը. նախկին սահմանափակ խմբերի փոխարեն շահառու են դարձել 20-35 (ներառյալ) տարեկան, 2 տարվա անպտղություն ախտորոշում ունեցող ՀՀ քաղաքացի անզավակ բոլոր կանայք, անպտղություն ախտորոշում չունեցող անզավակ կանանց համար տարիքային շեմը 36-ից իջել է 28, կատարվել են 5 441 շահառուի ախտորոշում և բուժում. արդյունքում գրանցվել է 736 հղիություն, և ծնվել է 159 երեխա, որոնցից 28-ը՝ զոհված զինծառայողների ընտանիքներում,

- վերարտադրողական առողջության հետ կապված խնդիրների վաղաժամ հայտնաբերման և բուժօգնության տրամադրման նպատակով 15 տարեկան 8 341 աղջիկ անցել է հետազոտություններ,
- հղիության ելքերը բարելավելու նպատակով ռիսկի խմբի հղիների շրջանում իրականացվել է 9 921 խորացված հետազոտություն,
- «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ում հիմնադրվել է պտղի բժշկության կենտրոն, «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում ներդրվել է պրենատալ սքրինինգի պիլոտային ծրագիր,
- մայրական մահացության դեպքերի թիվը եղել է 4, ինչը կրկնակի նվազել է 2022 թվականի 8 դեպքի համեմատ,
- մինչև 1 տարեկան երեխաների մահացության ցուցանիշը 2023 թվականին կազմել է 6,8 պրոմիլ (1000 կենդանի ծնվածի հաշվով), 2022 թվականին նույն ցուցանիշը կազմել էր 6,7 պրոմիլ,
- մինչև 5 տարեկան երեխաների մահացության ցուցանիշը 2023 թվականին կազմել է 7,9 պրոմիլ, 2022 թվականին այն կազմել է 7,5 պրոմիլ,
- մեռելածնության ցուցանիշը 2023 թվականին կազմել է 11,4 պրոմիլ՝ 1000 կենդանի ծնվածի և մեռելածնի հաշվով՝ նվազելով 2022 թվականի 11,6 պրոմիլի համեմատ:

Դեղերի հասանելիության ընդլայնման ուղղությամբ.

- 2023 թվականի պետական բյուջեի հաշվին կենտրոնացված կարգով ձեռք է բերվել 12 հիվանդության համար 74 անվանում դեղ, որի համար փաստացի ծախսվել է շուրջ 3,7 մլրդ ՀՀ դրամ, իսկ շահառուների թիվը կազմել է 189 029: 2021 թվականին պետական բյուջեից կենտրոնացված կարգով ձեռք է բերվել 12 հիվանդության համար 58 անվանում դեղ, որի համար հատկացվել է 3,6 մլրդ ՀՀ դրամ, շահառուների թիվը կազմել է 152 463: 2022 թվականին պետական բյուջեից կենտրոնացված կարգով ձեռք է բերվել 12 հիվանդության համար 65 անվանում դեղ, որի համար հատկացվել է 3,7 մլրդ ՀՀ դրամ, շահառուների թիվը կազմել է 170 786 շահառու,
- ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության օղակում սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված շահառուների դեղապահովման ծրագրով նախկին 435 անվանման փոխարեն ներառվել է 530 անվանում դեղ,
- ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումներ ունեցող կամ 3-րդ խմբի հաշմանդամ անձի կարգավիճակ ունեցող անձանց առողջության առաջնային պահպանման օղակի միջոցով տրամադրվում են ամբողջությամբ անվճար դեղեր՝ նախկին 50% զեղչի փոխարեն:

Վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների շրջանակ-ներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- մեկ տարեկան երեխաների պատվաստումներում ամբողջական ընդգրկվածությունը կազմել է 92%՝ 2022 թվականի 90%-ի համեմատ,
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ՄԻԱՎ-ի, հեպատիտ Ց-ի, սիֆիլիսի հայտնաբերման նպատակով առողջության առաջնային պահպանման օղակի միջոցով միգրանտների և նրանց զուգընկերների շրջանում իրականացվել է շուրջ 24 000 հետազոտություն (հայտնաբերվել են ՄԻԱՎ-ի դրական 122 դեպք, հեպատիտ Ց-ի 254 դեպք, սիֆիլիսի 124 դեպք):

Առողջ ապրելակերպի խթանման ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- 10 մարզի քաղաքներում ընտանեկան ձևաչափով իրականացվել են առողջ կենսաձևի քարոզչության արշավներ,
- առողջ և ակտիվ ծերացման գաղափարը խթանելու, մեծահասակ բնակչությանն առողջ ապրելակերպի մասին իրազեկելու և ֆիզիկական ակտիվությունը խրախուսելու նպատակով Երևան քաղաքում ստեղծվել են «Առողջ ծերացման» խմբակներ:

Էլեկտրոնային առողջապահության համակարգի զարգացման ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- թվայնացվել և բժշկական հաստատություններում ամբողջովին ներդրվել են 14 գրանցամատյան, անաշխատունակության թերթիկի լրացման գործիքը և էլեկտրոնային հաշվառման մատյանը,
- ԱԱՊ օղակում ներդրվել է անվճար և արտոնյալ պայմաններով դուրս գրվող դեղերի համար էլեկտրոնային դեղատոմսի համակարգ,
- ներդրվել է 3 հիվանդությունների ռեգիստր՝ քաղցկեղի, շաքարային դիաբետի և հոգեբուժության,
- ընդլայնվել է հավելվածի ֆունկցիոնալությունը, մասնավորապես, բժշկի մոտ հերթագրումը և անկանխիկ վճարումների գործիքը:

Ոլորտում մարդկային ներուժի զարգացման ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ձևավորվել է էթիկայի հանձնաժողովը, որի նպատակն է բուժաշխատողների կողմից էթիկայի խախտումների արձանագրման դեպքում օբյեկտիվ և արդյունավետ որոշումներ կայացնելը,
- շուրջ 1 137 բուժաշխատողի, որից 762 ԼՂ-ից բռնի տեղահանված, տրամադրվել են շարունակական մասնագիտական զարգացման միջոցառումների մասնակցության միջնորդագրեր (ֆինանսավորվել է պետական բյուջեի միջոցներից),
- ստեղծվել է բուժաշխատողների ռեգիստր:

Աշխատանք և սոցիալական պաշտպանություն

Կառավարության 2021-2026 թթ. ծրագրով նախատեսված է կենսաթոշակի նվազագույն չափը մինչև 2026 թվականը համապատասխանեցնել պարենային զամբյուղին, իսկ միջին կենսաթոշակը՝ նվազագույն սպառողական զամբյուղին: Լրացուցիչ հատկացումների շնորհիվ պարենային զամբյուղի համար նախանշված թիրախը 2023 թվականին գերազանցվել է: 2023 թվականի 4-րդ եռամսյակի ցուցանիշով՝ նվազագույն կենսաթոշակը պարենային զամբյուղը գերազանցել է 11%-ով: Երրորդ հանրապետության պատմության մեջ նվազագույն կենսաթոշակի և պարենային զամբյուղի հարաբերակցության ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է 2023 թվականին:

2023 թվականին աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Հունվարի 1-ից ՀՀ-ում նվազագույն ամսական աշխատավարձը բարձրացել է 10,3%-ով՝ 68 000 ՀՀ դրամի փոխարեն կազմելով 75 000 ՀՀ դրամ:

Հուլիսի 1-ից բարձրացել են՝

- նվազագույն կենսաթոշակը՝ 36 000 ՀՀ դրամ (31 600 ՀՀ դրամի փոխարեն),
- զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը՝ 1 750 ՀՀ դրամ (1 600 ՀՀ դրամի փոխարեն),
- պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի չափը՝
  - ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձի համար՝ 50 600 ՀՀ դրամ (46 000 ՀՀ դրամի փոխարեն),
  - ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձի համար՝ 41 400 ՀՀ դրամ (36 000 ՀՀ դրամի փոխարեն),
  - ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձի համար՝ 38 000 ՀՀ դրամ (33 000 ՀՀ դրամի փոխարեն),
- պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի մահացած (զոհված) զինծառայողի ընտանիքի անդամի կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը՝ 38 000 ՀՀ դրամ (33 000 ՀՀ դրամի փոխարեն), իսկ երկու ծնողին կորցրած՝ 18 տարին չլրացած երեխայի (կամ առկա ցերեկային ուսուցմամբ սովորող զավակի) դեպքում՝ 120 000 ՀՀ դրամ (90 000 ՀՀ դրամի փոխարեն),
- ծերության նպաստի չափը՝ 36 000 ՀՀ դրամ (31 600 ՀՀ դրամի փոխարեն),

- 2023 թվականին տարբերակում է սահմանվել հաշմանդամության տարբեր խմբերի հիմնական կենսաթոշակի և հաշմանդամության նպաստների համար, մասնավորապես.
  - ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով (1-ին խմբի հաշմանդամություն) հաշմանդամություն ունեցող անձի համար՝ 39 000 ՀՀ դրամ (31 600 ՀՀ դրամի փոխարեն),
  - ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով (2-րդ խմբի հաշմանդամություն) հաշմանդամություն ունեցող անձի համար՝ 37 500 ՀՀ դրամ (31 600 ՀՀ դրամի փոխարեն),
  - ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումով (3-րդ խմբի հաշմանդամություն) հաշմանդամություն ունեցող անձի համար՝ 36 000 ՀՀ դրամ (31 600 ՀՀ դրամի փոխարեն):

Կենսաթոշակային ապահովության ոլորտում լավարկվել են մի շարք կարգավորումներ, մասնավորապես.

Կենսաթոշակներն անկանխիկ եղանակով վճարման համակարգի ներդրման շրջանակներում հունվարի 1-ից կենսաթոշակների և նպաստների վճարման անկանխիկ եղանակը ներդրվել է նաև 1000 և ավելի բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերում:

Աշխատող կենսաթոշակառուի կենսաթոշակն այլևս վերահաշվարկվում է առցանց եղանակով:

Կենսաթոշակառուն վճարող բանկն ընտրում է առցանց եղանակով (մինչ այդ այս հնարավորությունը տրված էր միայն աշխատող կենսաթոշակառուներին):

2022 թվականի հուլիսի 1-ից և 2023 թվականի ողջ ընթացքում իրականացվել է անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուներին և նպաստառու-ներին հետվճար տրամադրելու պետություն-մասնավոր սոցիալական փոխգործակցու-թյան միջոցառումը. 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

- ծրագրով անկանխիկ գործարքների ծավալը կազմել է շուրջ 60 մլրդ ՀՀ դրամ (2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ այն կազմել է շուրջ 9,5 մլրդ ՀՀ դրամ),
- ծրագրով անկանխիկ գործարքներ իրականացնողների թիվը կազմել է 173 827 (2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ այն կազմել է 66 797),
- հետվճարների ծավալը կազմել է շուրջ 5 մլրդ ՀՀ դրամ (2022 թվականի ընթացքում այն կազմել է շուրջ 790 մլն ՀՀ դրամ): Ծրագրին մասնակցող մեկ կենսաթոշակառուին միջինում վերադարձվել է ամսական շուրջ 3 500 դրամ,
- անկանխիկ գործարքների քանակը կազմել է շուրջ 15 մլն հատ (2022 թվականի ընթացքում այն կազմել է շուրջ 2 մլն հատ):

ՀՀ սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության (16 մլն դրամի) ծրագրի շրջանակում սահմանամերձ 80 գյուղական բնակավայրում բազմաթիվ ընտանիքներ սկսել են կառուցել իրենց սեփական տունը: Տարեվերջի դրությամբ հաստատված հայտերի թիվը կազմել է 280, փաստացի մեկնարկել են 153 տան կառուցման աշխատանքները, մասնավորապես, Տավուշում՝ 152, Սյունիքում՝ 41, Արարատում՝ 34, Վայոց ձորում՝ 32 և Գեղարքունիքում՝ 21:

«Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի շրջանակներում տարեվերջի դրությամբ սուբսիդավորվել է շուրջ 9 070 վարկ, ընդհանուր շուրջ 6,4 մլրդ ՀՀ դրամ ծավալով:

Միջին աղքատությունը շարունակել է նվազել, մասնավորապես, 2022 թվականի ցուցանիշը 2021 թվականի նկատմամբ նվազել է 1,7 տոկոսային կետով, 2021 թվականի ցուցանիշը 2020 թվականի նկատմամբ 0,5 տոկոսային կետով:

Նվազել է նաև ծայրահեղ աղքատությունը, մասնավորապես, 2022 թվականի ցուցանիշը 2021 թվականի նկատմամբ նվազել է 0,3 տոկոսային կետով՝ կազմելով 1,2%:

Ծայրահեղ աղքատության վերացման նպատակով շարունակվել է ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների տրամադրումը և դրան ուղեկցող ծառայությունների ներդրման «Հայաստանում սոցիալական ներառման և ինքնաբավ կենսապահովման միջոցառումների խթանում» պիլոտային ծրագիրը, որի շրջանակում տարեվերջի դրությամբ բիզնես դրամաշնորհ ստացած 306 ընտանիքից բիզնեսը շարունակում է 283 ընտանիք, իսկ ընտանեկան նպաստի համակարգից դուրս է եկել 177 ընտանիք:

Ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստառու ընտանիքների թիվը 2023 թվականի վերջին կազմել է 68 023՝ 2022 թվականի տարեվերջի համեմատ նվազելով 4 725-ով: Նվազման միտումը պայմանավորված է ոչ միայն տնտեսական աճի արդյունքում ընտանիքների կենսամակարդակի բարձրացման կամ կյանքի դժվարին իրավիճակների թվի նվազմամբ, այլև Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների առավել թիրախային և մասնագիտական աշխատանքով: Ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստառու ընտանիքների թվի նվազում արձանագրվել է սկսած 2018 թվականից (բացառությամբ 2020 թվականի), մասնավորապես, 2019 թվականին նպաստառու ընտանիքների թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է 6 367-ով, 2020 թվականին ավելացել է 730-ով (պայմանավորված է Քովիդ-19 համավարակի հակազդմանն ուղղված միջոցառումներով), 2021 թվականին նվազել է 4 599-ով, իսկ 2022 թվականին՝ 9 580-ով:

Իրականացվել է սոցիալական շտապօգնության համակարգի ծրագիրը, որի նպատակն է արագ արձագանքել արտակարգ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, անհետաձգելի օգնության կարիք ունեցող անձանց՝ սոցիալական առաջնային կարիքների բավարարման նպատակով: Այս ծրագրով արդեն աջակցություն է տրամադրվել շուրջ 800 ընտանիքի:

Պիլոտային ծրագրի շրջանակներում 9 703 անձի տրամադրվել է սննդի քարտ՝ յուրաքանչյուր շահառուին 9 180 ՀՀ դրամի չափով:

Կարգավորվել են վարժական հավաքների կանչված և աշխատող պահեստազորայինների աշխատանքի վայրում աշխատավարձի պահպանման հետ կապված իրավահարաբերությունները, մասնավորապես, օրենսդրությամբ սահմանվել է, որ աշխատողին վարժական հավաքների ներգրավելիս գործատուն առաջին 30 օրացուցային օրերի ընթացքում շարունակում է վճարել հիմնական աշխատավարձի և որպես զինծառայող հաշվարկված դրամական ապահովության առնվազն դրական տարբերությունը:

Վերացվել է կենսաթոշակի անցնելու դեպքում գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքը:

Աշխատանքային օրենսդրությամբ սահմանվել է գործատուի կողմից աշխատանքային պրակտիկա կազմակերպելու կարգը (այդ թվում՝ փորձնակի հասկացությունը, աշխատանքային փորձառություն ձեռք բերելու մասին փորձնակի պայմանագրի վերաբերյալ կարգավորումները):

Սահմանվել են կամավոր աշխատանքի ամբողջական և միասնական կարգավորումներ, հեռավար աշխատանքների կազմակերպմանը և իրականացմանը վերաբերող առավել ճկուն և արդի մեխանիզմներ:

Գործազուրկների զբաղվածության ապահովման փորձնական ծրագրից օգտվել է 191 շահառու, որոնցից 133-ը՝ նպաստառու: Ծրագրի շրջանակում, եթե գործատուն աշխատանքի ընդունի գործազուրկին կամ գործազուրկ նպաստառուին 1 տարի ժամկետով, ժամկետի ավարտից հետո գործատուին տրվում է միանվագ փոխհատուցում՝ 350 000 ՀՀ դրամ, իսկ ոչ նպաստառու ընտանիքի 35 տարեկանից բարձր գործազուրկ անդամի դեպքում՝ 250 000 ՀՀ դրամ:

Միասնական սոցիալական ծառայության միջնորդությամբ աշխատանքով է ապահովվել 10 878 աշխատանք փնտրող, որոնցից 2 961-ը՝ նպաստառու:

Ցերեկային խնամքի բաղադրիչի շրջանակներում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված շուրջ 4 100 երեխա ստացել է սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական և կարիքահենք այլ ծառայություններ:

Երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա խնամքի հաստատություններից ընտանիք է վերադարձել 13 երեխա, իսկ ժամանակավոր խնամք իրականացնող ճգնաժամային կենտրոններից վերամիավորվել է 80 երեխա: 155 երեխա խնամք է ստացել 96 խնամատար ընտանիքում:

Վերապատրաստվել են խնամատար ծնող դառնալ ցանկացող 83 անձ, ինչպես նաև՝ 146 որդեգրել ցանկացող անձ: Խնամք ստացող երեխաների 4 269 ծնողների համար կազմակերպվել են ծնողավարման, կենցաղավարման դասընթացներ:

Վերապատրաստվել է շուրջօրյա և ցերեկային խնամք տրամադրող հաստատությունների շուրջ 2 000 մասնագետ:

Որդեգրվել է 20 երեխա (երկուսը՝ միջազգային որդեգրում), 2022 թվականի ընթացքում որդեգրվել է 20 երեխա (չորսը՝ միջազգային որդեգրում), իսկ 2021 թվականի ընթացքում 23 երեխա (հինգը՝ միջազգային որդեգրում):

Հաստատվել է Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2022-2027 թթ. համալիր ծրագիրը: Հաշմանդամություն ունեցող անձանց պետական հավաստագրի հիման վրա տրամադրվել է 25 867 աջակցող միջոց:

Ընտանիքում բռնության ենթարկված 60 կին տնտեսական հզորացման բաղադրիչի շնորհիվ վերակրթվել և վերամասնագիտացել է:

25 անձ նույնացվել է որպես մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհ և վերասոցիալականացման ծրագրի շրջանակներում ստացել է աջակցություն:

Համաշխարհային տնտեսական ֆորումի «Գլոբալ գենդերային ճեղքվածք» զեկույցում 146 երկրի շարքում Հայաստանը զբաղեցնում է 61-րդ տեղը՝ 2022 թվականի զեկույցի համեմատ դիրքերը բարելավելով միանգամից 28 հորիզոնականով: Նախորդ տարվա համեմատ շոշափելի առաջընթաց է արձանագրվել տնտեսական մասնակցության և հնարավորության, ինչպես նաև քաղաքական ներգրավվածության ցուցիչներով:

«UN Sustainable Development Solutions Network» կազմակերպության «Երջանկության համաշխարհային զեկույց»-ում 137 երկրից Հայաստանը զբաղեցրել է 79-րդ տեղը (2020-2022 թթ. միջինացված արդյունքն է): 2022 թվականի զեկույցում Հայաստանը 82-րդն էր 146 երկրից: Ըստ զեկույցի մեթոդաբանության՝ երջանկության աստիճանը տվյալ երկրում գնահատվում է այն փաստով, թե որքան երջանիկ են իրենց համարում տվյալ երկրի քաղաքացիները:

Երիտասարդություն

2023 թվականին երիտասարդության ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Մեկնարկել են երկու երիտասարդական կենտրոններ Իջևանի և Մեղրի համայնքներում: Իջևանի, Մեղրիի և Վանաձորի կենտրոնները միասին ունեցել են ավելի քան 16 000 այցելու:

Տարեվերջին ստեղծվել են ևս երկու երիտասարդական կենտրոններ՝ Դիլիջան և Ապարան համայնքներում, որոնք կգործեն 2024 թվականից:

Մշակվել է 10 մարզի 10 բնակավայրում մասնավորի հետ համագործակցությամբ ժամանակակից մշակութային և երիտասարդական կենտրոնների ձևավորման նախագիծը: Կենտրոնները կներառեն նաև համայնքային գրադարանների գործառույթը: Նախագիծը կմեկնարկի 2024 թվականից:

Տարվա երիտասարդական մայրաքաղաք Մեծամորում իրականացվել են երիտասարդների կարողությունների զարգացման, իրազեկման, ինտելեկտուալ ժամանցի կազմակերպման մի շարք միջոցառումներ:

Երիտասարդների կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրերին մասնակցության ցուցանիշը 23%-ով գերազանցել է 2022 թվականի նույն ցուցանիշը:

Սպորտ

2023 թվականին Հայաստանի մարզիկները նվաճել են 445 մեդալ (2022 թվականի ցուցանիշից 44,9%-ով ավելի), այդ թվում՝ 125 ոսկե, 127 արծաթե և 193 բրոնզե: Մեդալներից 25-ը նվաճել են կանայք: Պատանիների, երիտասարդների և մեծահասակների աշխարհի ու Եվրոպայի առաջնություններում մեր մարզիկները նվաճել են 106 ոսկե մեդալ, որից 77-ը՝ Եվրոպայի, 29-ը՝ աշխարհի: Հայաստանի հաշմանդամություն ունեցող մարզիկները միջազգային մրցաշարերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում նվաճել են 38 մեդալ, այդ թվում՝ 15 ոսկե, 8 արծաթե և 15 բրոնզե:

Հաստատվել է «Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտների 2024-2030 թվականների զարգացման ռազմավարությունը և ռազմավարության գործողությունների պլանը հաստատելու մասին» որոշումը, որով առաջին անգամ և երկարաժամկետ կտրվածքով նախանշվել են ոլորտի ֆիզիկական ենթակառուցվածքների քարտեզը, կառավարման մոդելները, հաշվետվողականության կանոնները, բովանդակային չափորոշիչները և հսկողական մեխանիզմները:

Սպորտի ոլորտում շուրջ 10,3 մլրդ ՀՀ դրամի պետական ներդրումներ են իրականացվել, ինչը շուրջ 5 անգամ ավելի է 2018 թվականի նույն ցուցանիշից:

Մշակվել է ֆեդերացիաների ֆինանսավորման նոր կարգ՝ ֆինանսավորումը փոխկապակցելով մարզաձևերում զարգացման հեռանկարների և գրանցած արդյունքների հետ:

Երևանում անցկացվել են 5 խոշոր միջազգային առաջնություններ (նախորդ 30 տարիների հանրագումարի չափ), մասնավորապես.

- ծանրամարտի մեծահասակների Եվրոպայի առաջնությունը, որին մասնակցել է 40 երկրի 600 ներկայացուցիչ (Հայաստանի հավաքականը նվաճել է 13 մեդալ՝ 4 ոսկե, 4 արծաթե և 5 բրոնզե),
- բռնցքամարտի երիտասարդների Եվրոպայի առաջնությունը, որին մասնակցել է 39 երկրի 350 ներկայացուցիչ (Հայաստանի երիտասարդների հավաքականը նվաճել է 13 մեդալ՝ 1 ոսկե, 2 արծաթե և 10 բրոնզե),
- սամբոյի մեծահասակների աշխարհի առաջնությունը, որին մասնակցել է 71 երկրի 700 ներկայացուցիչ (Հայաստանի հավաքականը նվաճել է 10 մեդալ՝ 5 արծաթե և 5 բրոնզե),
- լատինաամերիկյան պարերի աշխարհի երիտասարդական առաջնությունը, որին մասնակցել է 33 երկրի 120 ներկայացուցիչ,
- բռնցքամարտի պատանիների աշխարհի առաջնությունը, որին մասնակցել է 52 երկրի 450 ներկայացուցիչ (Հայաստանի հավաքականը նվաճել է 10 մեդալ՝ 4 ոսկե, 5 արծաթե և 1 բրոնզե մեդալ):

Շարունակվել են բարձր նվաճումներ ունեցող մարզիկների խրախուսման ծրագրերը: Տարվա ընթացքում 64 մարզիկ և մարզիչ ստացել են ամսական 100 000-500 000 ՀՀ դրամ, 24 մարզիկ և մարզիչ՝ ամսական 500 000-1 մլն ՀՀ դրամ, 2 մարզիկ՝ ամսական 1 մլն ՀՀ դրամից ավելի՝ որպես գրանցած արդյունքների խրախուսում:

Միանվագ տարեվերջյան պարգևատրում է ստացել 206 մարզիկ, մասնավորապես, 70 մարզիկ ստացել է մինչև 500 000 ՀՀ դրամ, 45 մարզիկ՝ մինչև 1 մլն ՀՀ դրամ և 91 մարզիկ՝ 1 մլն ՀՀ դրամից ավելի գումար՝ տարվա ընթացքում իրենց գրանցած հաղթանակների համար:

Մարզական լրագրողների և մարզիչների քվեարկության արդյունքում տարվա լավագույնը ճանաչված 10 մարզիկ պարգևատրվել է 5 մլն ՀՀ դրամով:

Փարիզ-2024 օլիմպիական խաղերին լավագույնս նախապատրաստվելու նպատակով բարձր արդյունքներ ցուցաբերած մարզիկներին, մարզիչներին, բժիշկներին և մերսողներին տրամադրվել է սպորտային նպաստ, մասնավորապես, նպաստ են ստացել 94 մարզիկ, 72 անձնական մարզիչ, 32 գլխավոր և ավագ մարզիչ, 13 բժիշկ և մերսող:

Իրականացվել է ՀՀ վարչապետի գավաթի 5 խոշոր մրցաշար, որոնց մասնակցել է 6 496 մարդ (24%-ով ավելի, քան նախորդ տարի): ՀՀ վարչապետի հովանու ներքո առաջին անգամ անցկացվել են ուժային կառույցների միջև բանակային խաղեր, որին թիմերով մասնակցել է 184 աշխատակից:

Անցկացվել է մարզական մասսայական 3 միջոցառում, որոնց մասնակցել է 40 228 մարդ: 4 փուլով իրականացվել է «Սպորտլանդիա» մարզական միջոցառումը, որին մասնակցել է շուրջ 12 000 աշակերտ:

Անցկացվել են ուսանողական խաղեր, որոնց մասնակցել է 25 բուհերի 1 520 ուսանող:

Ավարտվել են՝

- Սիմոն Մարտիրոսյանի անվան ծանրամարտի մարզադահլիճի կառուցման և կահավորման աշխատանքները,
- Խորեն Հովհաննիսյանի անվան ֆուտբոլի դպրոցի կառուցման և կահավորման աշխատանքները,
- «Երևանի թենիսի և բադմինթոնի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի «Կիլիկիա» մարզադահլիճի վերակառուցման աշխատանքները,
- Բերդի և Դիլիջանի մարզադպրոցների, Արաբկիրի մենապայքարային մարզաձևերի մարզադպրոցի, Շենգավիթի համալիր մարզադպրոցի և Շենգավիթի կոխ ազգային ըմբշամարտի համալիր մարզադպրոցի հիմնանորոգման աշխատանքները:

Շարունակվել են՝

- Երևանի հեծանվային սպորտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի կառուցման աշխատանքները,
- Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի կառուցման աշխատանքները,
- Գյումրիում Արթուր Ալեքսանյանի անվան մարզահամալիրի կառուցման աշխատանքները,
- օլիմպիական հերթափոխի քոլեջի մարզադահլիճների կառուցման և վերակառուցման աշխատանքները,
- Երևանում, Արտաշատում, Իջևանում և Մարտունիում ֆուտբոլային չորս դպրոցների կառուցման աշխատանքները:

Մշակույթ

2023 թվականին մշակույթի ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Հաստատվել է Հայաստանի Հանրապետության մշակույթի պահպանության, զարգացման և հանրահռչակման 2023-2027 թվականների ռազմավարությունը և դրա կատարումն ապահովող գործողությունների ծրագիրը, որը սահմանում է ոլորտի կառավարման և զարգացման նոր մոտեցումներ և նոր բանաձևեր:

Վերականգնվել է 8 հուշարձան, մշակվել են ևս 3 հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման գիտանախագծային փաստաթղթեր և հատկացվել են 3 տեղեկատվական կենտրոնների կառուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ: Այս նպատակներով պետական բյուջեից հատկացվել է 563,3 մլն ՀՀ դրամ (շուրջ 368 մլն ՀՀ դրամով ավելի, քան 2022 թվականին):

Շարունակվել են պետականության խորհրդանիշ հանդիսացող հուշարձանների՝ Լոռու և Տավուշի բերդերի, Ամբերդի ամրոցի, Տափի բերդի, Սմբատաբերդի և այլ հուշարձանների վերականգնման գիտանախագծային փաստաթղթերի կազմման աշխատանքները:

Ստեղծվել է «Արտաշատ մայրաքաղաք» պատմամշակութային արգելոցը:

Սահմանվել են թանգարանների, արգելոց-թանգարանների մշտական ցուցադրության այցելության և էքսկուրսիոն տոմսերի նոր սակագներ՝ նվազագույնը 1000 դրամ շեմով, մինչև 12 տարեկան երեխաների մուտքը դարձել է անվճար: Թանգարանների՝ տոմսերի վաճառքից ստացված եկամուտները նախորդ տարվա համեմատ աճել են շուրջ 50%-ով:

Մշակվել է թանգարանների էլեկտրոնային տոմսային միասնական համակարգը:

Վերականգնվել է թանգարանները մշակութային արժեքներով համալրելու պետական ծրագիրը, որը չէր գործում ավելի քան 13 տարի: 6 թանգարան համալրվել է նոր 15 մշակութային արժեքով, Կառավարության կողմից Մատենադարանին է փոխանցվել 1 405 թվականի մեծարժեք Ավետարանը, իսկ Ազգային պատկերասրահին՝ Իսաբեկյանի դիմանկարը:

Ձևավորվել է Հայաստանի համայնքներում կիրառվող 250 ազգային ուտեստի շտեմարանը:

Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման 11 ծրագրին մասնակցել է 2 200 այցելու Երևանում և մարզերում (10%-ով ավելի, քան նախորդ տարի):

Բարելավվել է «Դպրոցական բաժանորդային համակարգ» ծրագիրը. այցելությունը թանգարաններ և թատրոններ իրականացվում է դպրոցական ուսումնական ծրագրի շրջանակում (սահմանվել է նաև տրանսպորտային փոխհատուցում): Ծրագրի մասնակիցների թիվը կազմել է ավելի քան 205 000:

Գրադարաններում և թանգարաններում իրականացվել է ավելի քան 1 400 կրթամշակութային միջոցառում, որին մասնակցել է ավելի քան 30 000 այցելու:

Ներդրվել է թատերահամերգային կազմակերպությունների ֆինանսավորման փորձնական մոդելը, համաձայն որի՝ պետությունը թատերահամերգային կազմակերպությանը յուրաքանչյուր տարի տրամադրում է կազմակերպության կանխատեսվող սեփական եկամուտների կրկնապատիկի չափով գումար, որի

արդյունքում, օրինակ՝ Օպերայի և բալետի պետական թատրոնն արդեն իսկ գրանցել է սեփական եկամուտների աճ շուրջ 17%-ով, ինչպես նաև աշխատավարձերի աճ՝ մինչև 40%:

Չեղարկվել են դերասանական կարգերը, ներդրվել է ոլորտում ստեղծագործական անձնակազմերի ատեստավորման և ելույթավճարների հիման վրա վարձատրության նոր մոդելը:

Մշակութային հաստատություններում շարունակվել են կապիտալ աշխատանքները. շուրջ մեկ տասնյակ հաստատության տրամադրվել է ավելի քան 500 մլն ՀՀ դրամ՝ անհրաժեշտ հիմնանորոգումներն ու հագեցվածությունն ապահովելու նպատակով:

Մշակվել է մշակույթի ոլորտում միջազգային հեղինակավոր մրցույթներում և փառատոներում նվաճումներ ունեցող արվեստագետներին և ստեղծագործողներին անվանական թոշակ տրամադրելու կարգը, որով նախատեսվում է նրանց համար սահմանել ամսական 300 000-ից 600 000 ՀՀ դրամ խրախուսման հնարավորություն:

Մշակույթի ապակենտրոնացման, մարզերում և սահմանամերձ շրջաններում մշակութային կյանքի ակտիվացման նպատակով իրականացված միջոցառումներին մասնակցել է ավելի քան 70 000 մարդ:

Անհատ ստեղծագործողներին և ինքնազբաղ արվեստագետներին օժանդակելու նպատակով Հայաստանում կազմակերպվել է 161 համերգ: 137 անհատ կատարողի և 22 խմբի 15 երկրում միջազգային փառատոների, մրցույթների, բիենալեների և վարպետության դասերի մասնակցելու հնարավորություն է ընձեռվել:

Հայաստանում և արտերկրում մեծ հանդիսավորությամբ նշվել է Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակը, որի շրջանակներում 12 երկրում կազմակերպվել է 65 համերգային ծրագիր:

Իրականացվել է 18 կրթամշակութային ծրագիր: Ներառականության ապահովման շրջանակներում իրականացվել է 5 թիրախային ծրագիր՝ 1 800 շահառուի մասնակցությամբ:

Կազմակերպվել է Գրքի երևանյան միջազգային փառատոնը՝ շուրջ 40 հրատարակչության, գրավաճառի և մշակութային կազմակերպության մասնակցությամբ, որն ունեցել է շուրջ 15 000 այցելու, վաճառվել է շուրջ 10 000 գիրք:

Կազմակերպվել է 25 միջոցառում՝ 6 երկրից 50-ից ավելի գրողի, քննադատի և թարգմանչի մասնակցությամբ: Աջակցություն է տրամադրվել 9 լեզվով 17 գրքի թարգմանությանը:

Փոփոխություն է կատարվել «Կինեմատոգրաֆիայի մասին» ՀՀ օրենքում, որի արդյունքում Հայաստանում այսուհետ կիրառվելու է ներդրումների մասնակի վերադարձի (cash rebate) համակարգը:

Շուրջ 74%-ով աճել է հայկական արտադրության ֆիլմերի մասնակցությունը միջազգային կինոփառատոներին: 10 ֆիլմ մասնակցել է 110 կինոփառատոնի և շահել 28 մրցանակ:

Շողակաթ Վարդանյանի «1 489» վավերագրական ֆիլմը Ամստերդամի IDFA փառատոնին ճանաչվել է «Լավագույն ֆիլմ», ինչպես նաև արժանացել FIPRESCI կինոքննադատների և կինոմամուլի մրցանակի:

Առաջին անգամ պետական աջակցությամբ նկարահանված «Ամերիկացին» լիամետրաժ կինոնկարն ընդգրկվել է «Օսկարի» կարճ ցուցակում (ռեժիսոր՝ Միքայել Գուրջյան):

Շրջակա միջավայր

2023 թվականին շրջակա միջավայրի ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ընդունվել է «Էկոպարեկային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է 2024 թվականից: Օրենքով լավարկվել և հստակեցվել են ոլորտի կարևոր կարգավորումները: Էկոպարեկային ծառայությունը ՀՀ ամբողջ պահպանվող տարածքում հիմնադրված կլինի և օրենքով վերապահված լիազորությունների ամբողջ ծավալով կսկսի գործել մինչև 2025 թվականի հունվարի 1-ը:

Հունիսի 9-ից ուժի մեջ է մտել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ նոր օրենքը, որով հստակեցվել են ոլորտի բոլոր կարգավորումները, ավելացվել են պետական տուրքի դրույքաչափերը, տուգանքի չափերը, հստակ սահմանվել են պատասխանատվության բոլոր դեպքերը:

Կառավարության որոշմամբ հաստատվել են ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) կարգը և ՌԷԳ հաշվետվությանը ներկայացվող պահանջները, ինչպես նաև սահմանվել են ՇՄԱԳ գործընթացում հանրության իրազեկման և հանրային լսումների հետ կապված ընթացակարգերը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կարողությունների հզորացման նպատակով շուրջ 56 մլն ՀՀ դրամով ավելացվել են պետական բյուջեից ֆինանսավորման ծավալները՝ տարեկան ավելացումների արդյունքում 2024 թվականին հասցնելով շուրջ 250 մլն ՀՀ դրամի:

Ջրային օրենսգրքում փոփոխություններ են կատարվել, և ընդունվել են դրանցից բխող մի շարք իրավական ակտեր: Արդյունքում լավարկվել են ոլորտի մի շարք կարևոր կարգավորումներ, սահմանվել է «հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում փակ շրջանառու համակարգ» հասկացությունը և վերջինիս ներդրման կարգը, ինչպես նաև սահմանվել են վարչական պատասխանատվություն ձկնաբուծարանների կողմից

առանց փակ շրջանառու համակարգի հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերից ջրօգտագործում իրականացնելու և ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքեր չտեղադրելու համար, կանոնակարգվել են ջրային ռեսուրսների պահպանության դրամագլխի ձևավորման, օգտագործման, հատկացումների հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները:

Հաստատվել է ջերմոցային գազերի ցածր արտանետումների երկարաժամկետ ռազմավարությունը:

Ոլորտի կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեությունից մուտքերը 2022 թվականի համեմատ աճել են շուրջ 805 մլն ՀՀ դրամով կամ շուրջ 24%-ով՝ կազմելով շուրջ 4,2 մլրդ ՀՀ դրամ:

Սևանա լիճ բաց է թողնվել 231 732 հատ գեղարքունի իշխանի մանրաձուկ:

Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման հիմնադրամին պետական բյուջեից հատկացվել է շուրջ 495 մլն ՀՀ դրամ՝ Սևանի իշխանի գենետիկ ռեսուրսների պահպանման նպատակով:

2023 թվականին սահմանվել է սիգի արդյունագործական որսի 600 տոննա չափաքանակ, փաստացի որսվել է 366,1 տոննա: Հաշվարկվել է 25,3 մլն ՀՀ դրամ բնօգտագործման վճար, որը մոտ 11,4 մլն ՀՀ դրամով պակաս է նախորդ տարվա ցուցանիշից:

Մշակվել է սիգի ապօրինի որսի և վաճառքի վարչական և քրեական պատասխանատվությունը խստացնող իրավական ակտ:

Երկարաձգվել է սիգի ձկնկիթի արտահանման արգելքը:

Սևանա լճից դուրս է բերվել 919 խեցգետնորսիչ:

«Սևան» ԱՊ-ի տարածքում ևս 4 նոր հանրային լողափի կազմակերպման համար առանձնացվել են հողամասեր՝ հետագա շահագործման նպատակով: Առկա 12 հանրային լողափից 7-ի կառավարումը մրցութային կարգով պատվիրակվել է: Գործող լողափերը տրամադրվել են վարձակալական հիմունքներով՝ սահմանելով բարձր բնապահպանական պահանջներ, մնացած 5-ի համար հայտարարվել են մրցույթներ:

«Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ի տեխնիկական միջոցներով իրականացվել են շուրջ 24 հա անտառմաքրման աշխատանքներ՝ Սևանա լճի ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում: 2022 թվականին իրականացվել են շուրջ 47 հա անտառմաքրման աշխատանքներ:

Իրականացվել են 436 հա անտառվերականգնման ու անտառապատման աշխատանքներ՝ նախորդ տարվանից մոտ 200 հա ավելի: Աճեցվել է 250 000 հատ փակ արմատային համակարգով տնկանյութ, հիմնադրվել 8 հա տնկարան:

Առաջին անգամ 4 120 հա անտառածածկ տարածքներում իրականացվել են վնասատուների դեմ կենսաբանական պայքարի աշխատանքներ:

Անտառամերձ բնակչությանն անվճար տրամադրվել է շուրջ 79 000 խմ պահեստային թափուկ վառելափայտ:

Հաստատվել են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 7 մասնաճյուղի անտառակառավարման պլանները, մշակվել է ևս 4-ը: Արդյունքում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի բոլոր 17 մասնաճյուղը կունենա կառավարման պլան:

Աճել են անտառային հողերի վարձակալության տրամադրման և վարձակալված տարածքներում բիզնես ծրագրերով նախատեսվող ներդրումների ցուցանիշները՝ կնքվել է 75 պայմանագիր (2022 թվականին կնքվել էր 15 պայմանագիր), որոնց ներդրումային ընդհանուր արժեքը կազմել է շուրջ 9 մլրդ ՀՀ դրամ (2022 թվականի ցուցանիշը՝ շուրջ 3,5 մլրդ ՀՀ դրամ): Վարձակալական պայմանագրերի տարեկան վճարների հանրագումարը կազմել է շուրջ 43 մլն ՀՀ դրամ (2022 թվականին կազմել էր շուրջ 18 մլն դրամ):

Ճապոնիայի կառավարության օժանդակությամբ ձեռք է բերվել 11 ավտոմատ օդերևութաբանական կայան, որոնցից 5–ը տեղադրվել է Սևանա լճի ավազանում: Պետական բյուջեից հատկացված 200 մլն ՀՀ դրամի հաշվին ձեռք են բերվել 9 ավտոմատ օդերևութաբանական կայան և 20 հողի խորքային ջերմաստիճանի և ձյան բարձրության չափման տվիչ:

Արդիականացվել և ավտոմատացվել է Քասախի և Հրազդանի գետավազանների 7 հիդրոլոգիական դիտակետ:

«Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ծրագրի և համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի տրամադրման գործընթացի շրջանակներում ջերմաարդիականացվել է շուրջ 105 շենք (67 բազմաբնակարան և 38 հասարակական նշանակության): Հարկ է նշել, որ ծրագրի շրջանակներում 2018-2023 թթ. 18 համայնքում ջերմաարդիականացվել է շուրջ 200 շենք: Ըստ կատարված հետազոտության՝ ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների արդյունքում բնակիչները խնայելու են ջեռուցման և հովացման ծախսերի 40-60%-ը, իսկ որպես լրացուցիչ արդյունք՝ շենքում բնակարանների շուկայական արժեքն ավելանալու է 10-15%-ով (հետազոտվել են Արարատի մարզի Վեդի համայնքի Վեդի քաղաքի Կասյան 26/1 բազմաբնակարան բնակելի շենքում իրականացված աշխատանքների արդյունքները):

Մեկնարկել է Գերմանիայի վերականգնման վարկերի բանկի (KfW) 26 մլն եվրո բյուջեով դրամաշնորհային ծրագիրը, որն ուղղված է Լոռու, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Տավուշի և Սյունիքի մարզերում կենսաբազմազանության պահպանությանը,

անտառների կառավարմանը և հարակից համայնքներում սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

Շուրջ 495 մլն ՀՀ դրամ բնապահպանական սուբվենցիայի շրջանակներում 9 համայնքում իրականացվել են բնապահպանական և առողջապահական միջոցառումներ: Հարկ է նշել, որ 2022 թվականին բնապահպանական և առողջապահական միջոցառումներ իրականացվել էին 7 համայնքում՝ շուրջ 91 մլն ՀՀ դրամ ծավալով:

Առաջին անգամ պետական բյուջեի հաշվին ձեռք են բերվել փակված պոչամբարների ռեկուլտիվացիոն աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը (Նազիկ և Փխրուտ փակված պոչամբարների մասով):

«Շիրակ» օդանավակայանում շահագործվող օդերևութաբանական համակարգերն ամբողջությամբ, իսկ «Զվարթնոց» օդանավակայանում մասնակի փոխարինվել են նորերով, և տեղադրվել են վերջին սերնդի օդերևութաբանական կայաններ: «Շիրակ» և «Զվարթնոց» օդանավակայաններում շահագործման են հանձնվել ամպրոպ տեղորոշիչ տվիչներ, ներդրվել է նոր ծրագրային ապահովման MESSIR-SADIS միջոցը, որը թույլ է տալիս հաշված րոպեների ընթացքում ստանալ ցանկացած օդանավակայանի փաստացի և կանխատեսվող եղանակային պայմանները:

ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ընտրական իրավունք և ինստիտուցիոնալ ժողովրդավարություն

«Gallup» ընկերության կողմից հրապարակվող «Օրենք և կարգ» զեկույցում 141 երկրից/տարածքից Հայաստանի ցուցանիշը 84% է հնարավոր 100-ից՝ 1%-ով ավելի 2022 թվականի զեկույցի համեմատ: Զեկույցը նպատակ ունի ցույց տալու, թե մարդիկ որքան անվտանգ են զգում իրենց տվյալ երկրում, և թե որքան է իրավապահ մարմինների նկատմամբ վստահության աստիճանը:

«Freedom House» հետազոտական կազմակերպության «Անցումային շրջանի երկրներ» զեկույցում Հայաստանին տրվել է 3,11 միավոր, և 2022 թվականի զեկույցի համեմատ արձանագրվել է առաջընթաց 0,07 միավորով. բարելավվել են դիրքերը քաղաքացիական հասարակության և անկախ մեդիայի ցուցանիշներում: Հայաստանը շարունակել է մնալ համացանցային ազատության ցուցիչով «ազատ» երկրների ցանկում: Ըստ այդմ՝ Հայաստանն ունի 35% ժողովրդավարություն՝ նախորդ տարվա 34%-ի համեմատ: Այս ցուցանիշով ՀՀ-ն առաջատարն է հարավկովկասյան տարածաշրջանում:

«Human Rights Watch» կազմակերպության համաշխարհային զեկույցում, որը չի համեմատում երկրները դասակարգման միջոցով, այլ գնահատում է բարեփոխումների իրականացումը, նշվում է, որ ՀՀ իշխանությունները շարունակել են իրականացնել դատական, ոստիկանական և սահմանադրական հավակնոտ բարեփոխումներ:

«Լրագրողներ առանց սահմանների» միջազգային իրավապաշտպան կազմակերպության մամուլի ազատության ցուցչում Հայաստանը 180 երկրի շարքում զբաղեցնում է 49-րդ հորիզոնականը՝ 2022 թվականի զեկույցի համեմատ դիրքերը բարելավելով 2 հորիզոնականով: Այս ցուցանիշով Հայաստանն առաջատարն է հարավկովկասյան տարածաշրջանում:

2023 թվականին մարդու իրավունքների պաշտպանության, ընտրական գործընթացների բարելավման և սահմանադրական բարեփոխումների ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ընդունվել է մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թթ. գործողությունների ծրագիրը, որով նախատեսվում է կատա-րելագործել օրենսդրությունը՝ բռնության, ատելության խոսքի, թշնամանքի դեպքերը կանխելու և հանրային համերաշխություն ապահովելու նպատակով, ինչպես նաև ապահովել խոշտանգման, անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխարգելմանն ու հետապնդմանն ուղղված գործուն մեխանիզմներ:

Կառավարությունը շարունակել է իրականացնել ընտրական իրավունքի արդյունավետ իրացմանն ու ընտրական գործընթացի բարելավմանն ուղղված բարեփոխումները, մասնավորապես, 2023 թվականի ընթացքում մշակվել է և շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության ու Վենետիկի հանձնաժողովի հետ քննարկվել է Ընտրական օրենսգրքի փոփոխության լայնածավալ փաթեթը, որով նախատեսվում է բարեփոխումների իրականացում ընտրական օրենսդրության մի շարք ուղղություններով:

Դատաիրավական բարեփոխումներ

Արևելյան գործընկերության երկրների (ԱլԳ) 2023 թվականի համար արված ուսումնասիրությունների արդյունքում Հայաստանի դատական իշխանության անկախության ինդեքսը վարկանիշային աղյուսակում գրանցել է աճ՝ 2021 թվականի 0,71-ից հասնելով 0,89-ի: Արդյունքում Հայաստանը շատ չնչին՝ ընդամենը 0,01 միավորով զիջել է ամենաբարձր վարկանիշ ունեցող Մոլդովային, որի դատական իշխանության անկախության ինդեքսը գնահատվել է 0,90:

2023 թվականին դատաիրավական ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Մի շարք միջոցներ են ձեռնարկվել դատարանների բեռնաթափման ուղղությամբ: 2 մլն ՀՀ դրամը չգերազանցող գումարի բռնագանձման որոշ գործեր վերապահվել են նոտարներին, ինչի արդյունքում նախատեսվում է ընդհանուր իրավասության դատարանների՝ քաղաքացիական գործերով ծանրաբեռնվածության թեթևացում աննախադեպ՝ շուրջ 80 %-ի չափով:

Քաղաքացիական, վարչական և սնանկության վարույթներում ընդլայնվել է գրավոր կարգով քննարկվող հարցերի շրջանակը: Տեխնիկական թերությունների պատճառով հայցադիմումը վերադարձնելու գործառույթը վերապահվել է դատարանի աշխատակազմին՝ դյուրացնելով փաստաթղթերի շտկման գործընթացը:

Բարձրացվել են դատավորների աշխատավարձերը: Մասնավորապես, 2024 թվականի հունվարի 1-ից առաջին ատյանի դատարանների դատավորների համար սահմանվել է հավելում 60%-ի չափով, իսկ Վերաքննիչ դատարանների դատավորների համար՝ 55%-ի չափով: Սրանով ամբողջացվել է դատավորների աշխատավարձերի բարձրացումը բոլոր ատյաններում՝ հաշվի առնելով, որ 2022 թվականի ընթացքում արդեն իսկ բարձրացվել էին Վճռաբեկ դատարանի և Սահմանադրական դատարանի դատավորների աշխատավարձերը:

Ստեղծվել և գործում են նոր դատարաններ: Երևան քաղաքում ընդհանուր իրավասության դատարանի փոխարեն ձևավորվել են առաջին ատյանի քրեական և քաղաքացիական դատարանները, որի արդյունքում վերաբաշխվել է ծանրաբեռնվա-ծությունը, և ներդրվել են դատարանների ներքին կառավարման առավել արդյունավետ հիմքեր: Հունիսի 15-ից գործում է Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը՝ ապահովելով հակակոռուպցիոն գործերի եռաստիճան մասնագիտացված քննությունը Հակակոռուպցիոն առաջին ատյանի դատարանի և Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի հետ մեկտեղ:

Մշակվել և ընդունվել է քաղաքացիական գործերով էլեկտրոնային դատարանի համակարգը, որը պաշտոնապես գործարկվել է 2024 թվականի փետրվարից: Իրականացվել են աշխատանքներ վարչական գործերով ևս նույն համակարգը ներդնելու ուղղությամբ: Մշակվել և պատրաստ է գործարկման նաև սնանկության վարույթի էլեկտրոնային մոդուլը, որով թվայնացվում է ողջ սնանկության վարույթը, այդ թվում՝ աճուրդները: Փաստաբաններ, իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերեր, սնանկության կառավարիչներ և այլք պարտավոր են քաղաքացիական դատավարությանն իրենց մասնակցությունն ամբողջությամբ իրականացնել այս հարթակի միջոցով՝ դիմում, հայց, պատասխան, ապացույց կցել, միջնորդություն ներկայացնել, վճիռ ստանալ և այլն: Համակարգը հնարավորություն է տալիս նիստերը անցկացնելու ինչպես առցանց, այնպես էլ դահլիճում՝ դատավորի ընտրությամբ: Ֆիզիկական անձինք հարթակից կարող են օգտվել կամավորության

սկզբունքով: Մեկ անգամ հարթակն ընտրելուց հետո մնացած դեպքերով էլ պետք է պարտադիր կիրառեն հարթակը:

Կատարելագործվել է դատական գործերի մակագրության համակարգը՝ համապատասխանեցվելով գործերի բաշխման վերաբերյալ առկա պահանջներին և կարգավորումներին, մասնավորապես, մակագրության ժամանակ հիմք է ընդունվում նաև գործերի բարդությունը:

Ամբողջությամբ մշակվել և ընդունման փուլում է գտնվում հաշտարարության էլեկտրոնային հարթակը, որի գործարկմամբ հաշտարարության ողջ գործընթացը՝ հաշտարարի օգնությանը դիմելուց և հաշտարարի ընտրությունից մինչև գործի հանգուցալուծում կիրականացվի էլեկտրոնային եղանակով:

Քրեական դատավարության նոր օրենսգրքով նախատեսված քննչական գործողությունների տեսաձայնագրման համար ձեռք են բերվել անհրաժեշտ քանակի տեսախցիկներ և սերվերային տնտեսություններ, որոնցում այժմ կարող են պահպանվել վերը նշված քննչական գործողությունների նյութերը: Բոլոր հարցաքննությունները տեղի են ունենում տեսախցիկի առաջ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ տեխնիկապես հնարավոր չէ ապահովել հարցաքննության տեսաձայնագրությունը (օրինակ՝ երբ քննիչն է գնում հեռավոր վայր հարցաքննություն կատարելու):

«Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի, Հայկական բարեգործական ընդհանուր միության և Ամերիկայի հայ իրավաբանական միության կողմից հիմնադրվել է և արդեն գործում է Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան նոր կենտրոնը: Կենտրոնում գործի քննության կանոնները հաստատվել են միջազգային և ազգային հեղինակավոր մասնագետների կողմից: 2023 թվականի վերջի դրությամբ՝ Արբիտրաժի և հաշտարարության կենտրոնը շուրջ 1000 պայմանագրում արդեն նշվել է որպես վեճը լուծող մարմին:

Օրենսդրորեն նախատեսվել է հնարավորություն բողոքարկելու Բարձրագույն դատական խորհրդի՝ կարգապահական գործերով կայացված որոշումները:

Հայաստանի 40-ից ավելի դատարանների շենքերի նախնական ուսումնասիրության և խնդիրների վերհանման արդյունքում ստեղծվել է դատարանների ստանդարտների մշակման միջազգային ճարտարապետական ուղեցույց, և նոր ստանդարտներով արդեն իրականացվել է Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դահլիճների կահավորումը:

Ամբողջությամբ թվայնացվել է հարկադիր կատարման վարույթը, և քաղաքացին առցանց հասանելիություն է ստացել իր բոլոր կատարողական վարույթներին: Համակարգը հասանելի է ինչպես համակարգչով, այնպես էլ բջջային հեռախոսի (android համակարգի) հավելվածի տեսքով: Ծառայության բոլոր աշխատակիցներն

իրենց գործառույթներն իրականացնում են բացառապես էլեկտրոնային եղանակով, ապահովվել է ծառայության և մյուս պետական մարմինների ու համապատասխան մասնավոր կազմակերպությունների ծրագրերի համակցումը: Կատարողական վարույթներն ինքնաշխատ կարճվում և արգելանքները վերացվում են վարչական ակտերը կատարելուց հետո, պարտապաններին հնարավորություն է տրվում անկանխիկ վճարումներ իրականացնելու իրենց պարտավորությունների դիմաց, իսկ կատարված վճարումների մշակման գործընթացն ամբողջ ծավալով ավտոմատացվել և իրականացվում է 24/7 ռեժիմով: Արդեն գրանցվել է շուրջ 13 000 անձ, գրասենյակով կամ բջջային հավելվածով կատարվել է ի սկզբանե նույնականացված տարբերակով (108 ֆորմատ) շուրջ 19,9 մլն ՀՀ դրամի 932 վճարում, արդյունքում նույն պահին ավտոմատ կարճվել է 878 վարույթ, վճարային տերմինալներով և բանկերով կատարվել է ընդհանուր շուրջ 436,4 մլն ՀՀ դրամի 30 101 վճարում, արդյունքում նույն պահին ավտոմատ կարճվել է 26 782 վարույթ:

Վերացվել է նոտարների ռեզերվային ցուցակների ինստիտուտը: Այսուհետ նոտարի որակավորման ստուգումն անցկացվելու է կոնկրետ նոտարական նստավայրի թափուր մնացած կամ նոր ստեղծված հաստիքների համար:

Մեծացվելու է քաղաքացիներին անվճար իրավաբանական օգնության տրամադրման ֆոնդը, մասնավորապես, Հանրային պաշտպանի գրասենյակի աշխատավարձային ֆոնդն ավելացվելու է 15%-ով, իսկ ավելացվող միջոցներն ուղղվելու են հանրային պաշտպանների կատարած արտաժամյա աշխատանքի դիմաց վարձատրությանը:

Կոռուպցիայի դեմ պայքար

2023 թվականին Հայաստանում իրականացված հակակոռուպցիոն ոլորտի բարեփոխումներն արժանացել են միջազգային բարձր գնահատականի: ՏՀԶԿ մոնիթորինգի 5-րդ փուլի ՀՀ-ի վերաբերյալ զեկույցում կատարողական 9 ոլորտից ամենաբարձր միավորները տրվել են հակակոռուպցիոն քաղաքականության մշակմանը: Հայաստանը դուրս է եկել ԳՐԵԿՈ-ի գնահատման անհամապատասխանության գործընթացից և այլևս չի համարվում «համընդհանուր անբավարար» կատարողական ունեցող երկիր:

«Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» միջազգային հեղինակավոր կազմակերպության հրապարակած՝ «Կոռուպցիայի ընկալումների» 2023 թվականի վարկանիշի համաձայն՝ Հայաստանը 180 երկրի շարքում 47 միավորով զբաղեցրել է 62-րդ տեղը՝ նախորդ տարվա համեմատ բարելավելով իր դիրքը մեկ հորիզոնականով: Վերլուծությունների շրջանակներում հիմնական գնահատվող ցուցիչը եղել է կոռուպցիայի հարաբերակցությունն արդարադատության համակարգի՝ դատական համակարգի և իրավապահ մարմինների կայացվածության հետ:

2023 թվականին կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ընդունվել է նոր հակակոռուպցիոն ռազմավարություն՝ ոլորտի մասնագետների և քաղաքացիական հասարակության հետ բացառիկ կոնսենսուսի պայմաններում: 2023-2026 թթ. Հակակոռուպցիոն ռազմավարությունն ուղղված է 5 հիմնական ռազմա-վարական նպատակների իրականացմանը՝

- կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքության համակարգերի ամրապնդում,
- կոռուպցիայի հակազդման իրավական և ինստիտուցիոնալ համակարգերի կատարելագործում,
- հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման կառուցակարգերի կատարելագործում,
- գործարար բարեվարքություն, գործարար իրավունքների պաշտպանություն և պետություն-բիզնես վարչարարության դյուրացում,
- հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման համակարգի կատարելագործում:

Հստակ ամրագրվել է պաշտոնեական պարտականությունների հետ կապված նվերներ ընդունելու արգելքը, սահմանվել է «նվեր» հասկացությունը, ամրագրվել են պետական սեփականություն դարձող նվերների տնօրինման հետ կապված կարգավորումներ:

Կատարելագործվել են ազդարարման համակարգի իրավական մեխանիզմները, ընդլայնվել են ազդարարման տեսակները, սահմանվել է ազդարարման նոր տեսակ՝ «ազդարարում հանրությանը», հստակեցվել են ազդարարներին տրվող պաշտպանության մեխանիզմները: Ազդարարման հետ կապված կարգավորումները տարածվել են նաև մասնավոր ոլորտի առևտրային և ոչ առևտրային, ինչպես նաև համայնքային կազմակերպությունների վրա:

Ընդլայնվել է հայտարարատու պաշտոնատար անձանց շրջանակը: 2024 թվականի հունվարի 1-ից պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետության կողմից հիմնադրված հիմնադրամների, 50 և ավելի տոկոս ՀՀ-ի և համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարները պարտավոր կլինեն ներկայացնելու իրավիճակային հայտարարագիր՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով: Հստակեցվել են նաև շահերի բախման անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորումները:

ՀՀ ԱԱԾ-ի կողմից բացահայտվել է կոռուպցիոն բնույթի 204 հանցագործություն, որոնք հիմնականում առնչվել են մաքսային, առողջապահական, էկոնոմիկայի և իրավապահ համակարգի, ինչպես նաև փողերի լվացման դեմ պայքարի ոլորտներին:

ՀՀ ՊԵԿ-ի հետ համատեղ՝ ՀՀ ԱԱԾ-ի կողմից իրականացված միջոցառումների արդյունքում բացահայտվել են ՀՀ-ում տնտեսական գործունեություն ծավալող մի շարք կազմակերպությունների կողմից ընդհանուր առմամբ շուրջ 9,3 մլրդ ՀՀ դրամի չափով հարկային պարտավորություններ չկատարվելու դեպքեր: Բացահայտվել են նաև կանխամտածված սնանկության սխեմաներ, որոնցով ի հայտ է բերվել պետությանը պատճառված շուրջ 1,8 մլրդ դրամի վնաս:

ՀՀ զինված ուժերի նյութատեխնիկական մատակարարման, սպառազինության և թիկունքային ապահովման գործընթացներում հնարավոր չարաշահումների, խախտումների, յուրացման ու վատնման դեպքերի, ինչպես նաև այլ կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերման և բացահայտման նպատակով 2023 թվականի ընթացքում ՀՀ ԱԱԾ-ի կողմից իրականացված միջոցառումների արդյունքներով ՀՀ քննչական մարմիններում նախաձեռնվել է ավելի քան 70 քրեական վարույթ, որոնց շրջանակներում, ըստ նախնական գնահատման, ՀՀ պետական բյուջեին պատճառվել է ավելի քան 10 մլրդ ՀՀ դրամ նյութական վնաս, որից մոտ 6,6 մլրդ ՀՀ դրամի չափով վնասը վերականգնվել է, միաժամանակ կանխվել է 4,7 մլրդ ՀՀ դրամ ոչ նպատակային ծախսերի իրականացումը: Նախաձեռնվել է 82 քրեական վարույթ՝ զորակոչից և զորահավաքից ապօրինի ազատվելու դեպքերով:

Ընդհանուր առմամբ՝ կոռուպցիայի հակազդման և հանցագործությունների դեմ պայքարի համատեքստում ՀՀ ԱԱԾ-ում նախաձեռնված քրեական վարույթների շրջանակներում բացահայտվել է պետությանը պատճառված շուրջ 16 մլրդ ՀՀ դրամի չափով վնաս, որից նախաքննության ընթացքում վերականգնվել է շուրջ 395 մլն ՀՀ դրամ, ինչպես նաև համայնքներին պատճառված շուրջ 860 մլն ՀՀ դրամի չափով վնաս: Բացահայտվել է նաև ֆիզիկական անձանց՝ շուրջ 3 մլրդ ՀՀ դրամի չափով և իրավաբանական անձանց՝ շուրջ 1,6 մլրդ ՀՀ դրամի չափով պատճառված վնաս:

ՀՀ դատախազության Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը ձևավորումից ի վեր նախաձեռնել է 438 ուսումնասիրություն, որից 82–ը 2023 թվականի ընթացքում: Արդեն դատարան է ներկայացվել 94 հայցադիմում, որից 71–ը՝ 2023 թվականի ընթացքում, որոնցով հօգուտ ՀՀ-ի պահանջվում է բռնագանձել ապօրինի ծագում ունեցող շուրջ 1 050 անշարժ գույք, 210 շարժական գույք և 280 իրավաբանական անձում բաժնեմասեր: Ընդհանուր հայցագինը գերազանցում է 510 մլրդ ՀՀ դրամը:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործառույթի շրջանակներում կնքել է հաշտության 4 համաձայնություն, որոնցով պետության սեփականությանն է փոխանցվել 6 անշարժ և 1 շարժական գույք՝ ընդհանուր շուրջ 2,1 մլրդ ՀՀ դրամ արժեքով, ինչպես նաև շուրջ 79 մլն ՀՀ դրամ: Պետական շահերի պաշտպանության

գծով դատախազության կողմից իրականացված աշխատանքների արդյունքում պետությանը վերադարձվել է շուրջ 5 մլրդ ՀՀ դրամ շուկայական արժեքով գույք:

ՀՀ քննչական կոմիտեի կողմից քննվել է կոռուպցիոն բնույթի 1 326 վարույթ: Կոռուպցիոն բնույթի հանցագործություններով պետությանը պատճառված վնասի չափը կազմել է շուրջ 4 մլրդ ՀՀ դրամ, որից վերականգնվել է 776 մլն ՀՀ դրամ: Համայնքներին պատճառված վնասը կազմել է 157 մլն ՀՀ դրամ, որից վերականգնվել է շուրջ 40 մլն ՀՀ դրամ: Իրավաբանական անձանց պատճառվել է շուրջ 4 մլրդ ՀՀ դրամի վնաս, վերականգնվել է 106 մլն ՀՀ դրամ:

Քննչական կոմիտեի կողմից քննվել է փողերի լվացման 71 վարույթ, որից 12-ն ուղարկվել է դատարան:

2023 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում պետությանը և համայնքներին պատճառված վնասից վերականգնվել է շուրջ 34,3 մլրդ ՀՀ դրամ, որից՝

- շուրջ 410 մլն ՀՀ դրամը՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատավարական ղեկավարման ներքո իրականացվող քրեական վարույթներով,
- շուրջ 426,6 մլն ՀՀ դրամը՝ ՀՀ ԱԱԾ-ում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատավարական ղեկավարման ներքո իրականացվող քրեական վարույթներով,
- շուրջ 33,5 մլրդ ՀՀ դրամը՝ ՀՀ քննչական կոմիտեում իրականացվող քրեական վարույթներով:

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի բարեփոխումներ

2023 թվականին քրեակատարողական և պրոբացիայի ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Քրեակատարողական հիմնարկներում բարելավվել են դատապարտյալներին պահելու պայմանները: Հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար կառուցվել են թեքահարթակներ, հենաբազրիքներ, սանհանգույցներում և լոգարաններում տեղադրվել են հատուկ բռնակներ, «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում տեղադրվել է հատուկ վերելակ: «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում տեղադրվել է շուրջ 400 տեսախցիկից բաղկացած տեսահսկման նորագույն սերնդի համակարգ, կառուցվել են ամբողջովին նոր և ժամանակակից օդափոխության, ջեռուցման հետ համատեղված օդորակման համակարգեր: «Սևան» քրեակատարողական հիմնարկի մասնաշենքերից մեկը վերակառուցվել է, իսկ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում հիմնանորոգվել է կանանց տեղամասը, այդ թվում՝ մինչև երեք տարեկան երեխա ունեցող կանանց պահման պայմանները և վերասոցիալականացման կենտրոնը:

Միջին օրական հաշվարկով քրեակատարողական հիմնարկներում պահվել է 2453 անձ, որոնցից՝ 1112-ը եղել է դատապարտյալ, իսկ 1341-ը՝ կալանավորված: 2022 թվականի համեմատությամբ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց թիվն ավելացել է 188-ով:

Հունվարի 1-ից տնային կալանք և վարչական հսկողություն, ինչպես նաև ազատության սահմանափակում պատժատեսակի նկատմամբ հսկողությունն իրականացվում է հատուկ էլեկտրոնային սարքերի միջոցով: Ձեռք է բերվել 661 հսկողության սարք, որոնք կիրառվել են 866 շահառուի նկատմամբ:

Ներդրվել է քրեակատարողական ծառայողների համար ատեստավորման նոր կարգ:

Ազատազրկման ձևով պատիժ կրող և կալանավորված անձանց համար իրականացվել են կրթական ծրագրեր: Սովորելու իրավունքից օգտվել է մինչև 19 տարեկան 10 անձ, իսկ 19 տարեկանից բարձր՝ 138 անձ: Իրականացվել են նաև մի շարք դասընթացներ՝ լեզուներ, համակարգչային հմտություններ, արհեստագործություն և այլ թեմաներով, որոնց մասնակցել է 185 անձ:

Ընդլայնվել են պրոբացիայի ծառայողների սոցիալական երաշխիքները, ներդրվել է ծառայողների ատեստավորման նոր համակարգ:

Պրոբացիայի ծառայության մարզային գրասենյակների օպտիմալացման, ինչպես նաև պրոբացիայի շահառուների հետ տարվող աշխատանքներն առավել արագ և արդյունավետ դարձնելու նպատակով ձեռք է բերվել կահավորված 2 հատուկ տրանսպորտային միջոց՝ որպես շարժական գրասենյակ շահագործելու նպատակով:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ռազմավարական պլանավորում և քաղաքականությունների մշակում, պետության կողմից հանրությանը մատուցվող ծառայություններ

2021-2023 թվականների համար ծրագրված 57 ռազմավարական փաստաթղթից 2023 թվականի վերջի դրությամբ ընդունվել է 25-ը, շրջանառության մեջ է գտնվում 16-ը, մշակման փուլում՝ 18-ը: Ռազմավարական փաստաթղթերը վերաբերում են տնտեսական զարգացման, հանրային կառավարման, մարդկային կապիտալի զարգացման, շրջակա միջավայրի պահպանության և ջրային ռեսուրսների կառավարման, ազգային անվտանգության, օրենքի գերակայության, տրանսպորտի, տարածական պլանավորման և էներգետիկայի ոլորտներին:

2023 թվականին մեկնարկել են ռազմավարական կառավարման, ինչպես նաև ռազմավարությունների մշտադիտարկման ու գնահատման նոր համակարգերի ներդրման աշխատանքները:

Տարեվերջի դրությամբ ՀՀ-ի 55 համայնքի 75 բնակավայրի վարչական գրասենյակ-ներում գործում են քաղաքացիների սպասարկման գրասենյակներ (ՔՍԳ), որոնցում

ՏԻՄ-երի կողմից «մեկ պատուհան» սկզբունքով տրամադրվում է համայնքային շուրջ 30 ծառայություն: ՔՍԳ-ներից 12-ում ձևավորվել են կարողություններ, որոնք համայնքի աշխատակազմին թույլ են տալիս բնակիչներին մատուցել նաև կադաստրին, ՔԿԱԳ-ին, պետական ռեգիստրի գործակալությանը և ճանապարհային ոստիկանությանը վերապահված շուրջ 20 պետական ծառայություն:

Կադաստրի կոմիտեի կողմից իրականացվել է 841 532 սուբյեկտի նույնականացում, ինչը նպաստել է ինքնաշխատ և առցանց ծառայությունների ընդլայնմանը:

Թվայնացում, ազգային տարածական տվյալների ենթակառուցվածք

2023 թվականին թվայնացման ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Կայացել է Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի 15 նիստ, որոնց շրջանակներում կայացվել են որոշումներ ավելի քան 55 հարցի ու ծրագրի վերաբերյալ:

Սկսել է լիարժեք գործել 2022 թվականին ստեղծված՝ Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալությունը, որի ներքո ձևավորվել է նաև կիբեռմիջադեպերի արձագանքման ազգային կենտրոնի (CERT) թիմը:

Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհուրդը հաստատել է Հայաստանի թվային ճարտարապետության հայեցակարգային մոտեցումները, որոնք հիմք են հանդիսացել տվյալների քաղաքականության օրենսդրական հիմքերի մշակման ու քաղաքացիակենտրոն թվային ծառայությունների նախագծման համար:

Հաստատվել է ՀՀ քաղաքացու կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի թողարկման ծառայությունների ՊՄԳ ծրագիրը, որի հիման վրա 2024 թվականի հունվարին հայտարարվել է ՊՄԳ մասնավոր գործընկերոջ ընտրության միջազգային մրցույթի որակավորման փուլը:

Գործարկվել է «Ես եմ» թվային նույնականացման ազգային հարթակը, որն ինքնության հավաստման միասնական և անվտանգ պատուհան է բոլոր թվային ծառայությունների համար:

Միջազգային լավագույն ընդունված չափորոշիչներին համարժեք գործարկվել է հանրային ծառայությունների «Թվայնացման ուղեցույց» էլեկտրոնային հարթակը, որում տրված է հանրային ծառայությունների թվայնացման 14 ուղեցույց (ստանդարտներ), ինչպես նաև՝ պետական թվային հարթակների համար արտաքին տեսքի ու ֆունկցիոնալության «Հենակետ» դիզայն համակարգը:

Հաստատվել է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը նպաստող տեղեկատվության և հաղորդակցության, այդ թվում՝ վեբ բովանդակության մատչելիության խթանման և իրազեկվածության բարձրացման ուղեցույցը:

2022 թվականին գործարկվել են ազգային գեոպորտալը և վերջինիս քարտեզագրական բաղադրիչը, հաստատվել են բազային և որոշ թեմատիկ տարածական տվյալների ստանդարտացման ուղեցույցները, որից հետո սկսվել են տարածական տվյալների ուղղման և քարտեզագրական բաղադրիչ մուտքագրման լայնածավալ աշխատանքները:

Այս ուղղությամբ 2023 թվականին կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- ՀՀ բոլոր բնակավայրերի կադաստրային քարտեզները վարվում են առցանց միջավայրում,
- իրականացվել է 22 համայնքի և Երևան քաղաքի շուրջ 2 400 կմ երկարությամբ վարչական սահմանների, ինչպես նաև Շիրակի, Սյունիքի, Արարատի, Կոտայքի և Վայոց ձորի մարզերի 356 բնակավայրի կադաստրային քարտեզների ուղղում,
- սահմանված ստանդարտներին են համապատասխանեցվել բազային քարտեզագրական շերտեր հանդիսացող շուրջ 1 073 000 հասցե, աշխարհագրական շուրջ 36 000 անվանում, տեղագրական քարտեզ (Արմավիրի մարզ՝ շուրջ 1 240 քկմ, Շիրակի մարզ՝ 2 015 քկմ),
- Հայաստանում գտնվող անձանց առանց սահմանափակումների հնարավորություն է ընձեռվել օգտվելու Ազգային գեոպորտալի քարտեզագրական բաղադրիչից (maparmenia.am): 2023 թվականին մուտքերի քանակը համակարգ կազմել է շուրջ 30 000:

Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում

Հայաստանում իրականացված բարեփոխումների արդյունքում 915 համայնքի փոխարեն 2023 թվականի վերջի դրությամբ առկա է 71 համայնք:

2023 թվականին տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման բարեփոխումների իրականացման նպատակով կատարվել են հետևյալ աշխատանքները.

Համայնքների բյուջեներին հատկացվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների չափը 2024 թվականի համար նախատեսվել է 85,3 մլրդ ՀՀ դրամ, որը 15,6 մլրդ ՀՀ դրամով կամ 22%-ով ավելի է 2023 թվականին հատկացված 69,7 մլրդ ՀՀ դրամից և 37,1 մլրդ ՀՀ դրամով կամ 77%-ով ավելի է 2018 թվականին հատկացված 48,2 մլրդ ՀՀ դրամից:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներում կատարված փոփոխությունների արդյունքում համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի միջոցների 5%-ից 20%-ի փոխարեն

նախատեսվել է 5%-ից 30%, ինչը համայնքներին հնարավորություն է տալիս իրականացնելու հավելյալ շուրջ 21,5 մլրդ ՀՀ դրամի կապիտալ ծրագրեր:

Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի շրջանակներում համայնքներին աջակցելու նպատակով 9 համայնքում մեկնարկել են ենթակառուցվածքների կառուցման և վերակառուցման շինարարական աշխատանքներ: Միավորված համայնքների ենթակառուցվածքները բարելավելու նպատակով երկու խոշորացված համայնքում իրականացվել են ոռոգման համակարգերի կառուցման և վերանորոգման աշխատանքներ, ևս երկու համայնքում կառուցվել են ավտոկայանատեղիներ: 21 համայնքի հատկացվել է 42 միավոր կոմունալ և գյուղատնտեսական տեխնիկա, 1800 աղբարկղ: 3 համայնքում տեղադրվել է 15 արևային կայան՝ 205 կՎտ ընդհանուր հզորությամբ: Տարվա ընթացքում ներդրումների ընդհանուր թիվը կազմել է շուրջ 4,1 մլրդ ՀՀ դրամ:

Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում 2023 թվականի ընթացքում ավարտվել է 5 ենթածրագիր. Գառնու տաճարի մերձակա տարածքի բարեկարգում, Տաթև և Մարմաշեն վանական համալիրներ տանող ճանապարհների վերակառուցում, Ջերմուկի և Գյումրիի քաղաքային փողոցների (զբոսայգու) վերակառուցում: Տարվա ընթացքում ներդրումների ընդհանուր թիվը կազմել է շուրջ 5,1 մլրդ ՀՀ դրամ:

Սուբվենցիայի ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մի շարք փոփոխություններ են կատարվել սուբվենցիայի կարգում, այդ թվում՝ ջրամատակարարման և ոռոգման համակարգերի կառուցման ու նորոգման ծրագրերում ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման չափաբաժիններն ավելացվել են 5%-ով, ազգային փոքրամասնություններով բնակեցված բնակավայրերում՝ 15%-ով:

Հանրապետության բնակավայրերում իրականացվել է 446 սուբվենցիոն ծրագիր և ենթածրագիր՝ ընդհանուր շուրջ 58,7 մլրդ ՀՀ դրամի արժողությամբ, որից պետական բյուջեից համաֆինանսավորման նպատակով տրամադրվել է 30,8 մլրդ ՀՀ դրամ, համայնքային բյուջեից՝ 26,5 մլրդ ՀՀ դրամ և այլ ներդրողների կողմից՝ 1,4 մլրդ ՀՀ դրամ:

Մարզերում իրականացվել է 31 կապիտալ բնույթի հրատապ, անհետաձգելի ծրագիր՝ ավելի քան 2,9 մլրդ ՀՀ դրամ արժեքով:

Պետական բյուջեով սահմանամերձ համայնքների ընտանիքների բնական գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման ջրի սակագնի մասնակի փոխհատուցման ու գույքահարկի և հողի հարկի փոխհատուցման նպատակով տրամադրվել է ավելի քան 1 մլրդ ՀՀ դրամ:

3 տարով երկարաձգվել է «Սահմանամերձ բնակավայրերի սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի գործողությունը, ինչը հնարավորություն է տալիս սոցիալական

աջակցություն ստացող համայնքների բնակիչներին օգտվելու բնական գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման ջրի և այլ ծախսերի փոխհատուցման ծրագրերից:

ՎԶԵԲ-ի աջակցությամբ իրականացվող՝ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրի շրջանակներում ավարտվել են հանրապետությունում առաջին սանիտարական աղբավայրի և Ակունք ու Մարտունի բնակավայրերում աղբի փոխաբեռնման կայանների կառուցապատման աշխատանքները:

Գույքագրվել է 220 աղբավայր ու աղբանոց, որից փակվել է շուրջ 100-ը:

Ապրիլի 29-ին կազմակերպվել է համապետական շաբաթօրյակ, որին մասնակցել է շուրջ 174 000 մարդ: Վերացվել են շուրջ 4 հա տարածքով աղբավայրեր, շուրջ 3 հա տարածքով մեծ աղբակույտեր ու աղբանոցներ:

Պետական գույքի կառավարում

2023 թվականի ընթացքում պետական գույքի կառավարման ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Պետական գույքի կառավարումից ստացված ընդհանուր մուտքերը կազմել են 15,3 մլրդ ՀՀ դրամ, ինչը 6,4 մլրդ ՀՀ դրամով կամ 72%-ով ավելի է նախորդ տարվա համադրելի ցուցանիշից: Պետական բյուջեի մուտքերն աճել են 69%-ով՝ կազմելով 12,8 մլրդ ՀՀ դրամ, իսկ համայնքային բյուջեներ փոխանցվել է 2,3 մլրդ ՀՀ դրամ՝ 2022 թվականի նույն ցուցանիշը գերազանցելով 110%-ով: Հարկ է նշել, որ մինչև 2022 թվականն ընդհանուր բյուջետային մուտքերի միջին տարեկան ցուցանիշը կազմել է 2,7 մլրդ ՀՀ դրամ:

Պետական գույքի վարձակալության գործարքներից ստացված միջոցները նախորդ տարվա համեմատ աճել են 44%-ով՝ կազմելով 673 մլն ՀՀ դրամ:

Օտարվել է 31 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով 38 միավոր անշարժ գույք (նախորդ տարվա 16-ի համեմատ): Օտարման գործարքներով գնորդների կողմից ստանձնվել է առաջիկա 5 տարվա ընթացքում 35 մլրդ ՀՀ դրամ հանրագումարի ներդրումների իրականացման պարտավորություն: Պետական գույքի նվիրաբերության, մասնավորեց-ման, անհատույց օգտագործման և վարձակալության տրամադրման գործարքներով ստանձնվել են ևս 2,2 մլրդ ՀՀ դրամ հանրագումարի ներդրումային պարտավորություններ:

Ավարտին է հասցվել մասնավորեցման ծրագրում ընդգրկված 2 կազմակերպության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի մասնավորեցման գործընթացը, ինչի արդյունքում պետական և համայնքային բյուջե փոխանցված դրամական միջոցները կազմել են շուրջ 3,7 մլրդ ՀՀ դրամ՝ 2022 թվականի համեմատ ավելանալով 348%-ով կամ շուրջ 2,9 մլրդ ՀՀ դրամով:

Պետական կառավարման համակարգում տրանսպորտային միջոցների օպտիմալացման արդյունքում 2023 թվականին օտարվել է 488 միավոր տրանսպորտային միջոց (ընդհանուր շուրջ 340 մլն ՀՀ դրամի):

Մշակվել և հաստատվել է հանրային իշխանության մարմինների և ՊՈԱԿ-ների ծառայողական և սպասարկող տրանսպորտային միջոցների հատկացման և շահագործման նոր կարգը, որով առաջին անգամ կանոնակարգվել են մեքենաների քանակները, դրանց հատկացման սկզբունքները և կանոնները:

Մշակվել և հաստատվել է պետական գույքի օտարման, գրավադրման, մասնավորեցման և այլ պայմանագրերով ստանձնած ներդրումային պարտավորությունների վերահսկման կարգը, որով կանոնակարգվել են ներդրումային պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողության ձևերը և պարտավորությունների չկատարման դեպքում գործողությունները:

Հանրությանը հասանելի է դարձել պետական սեփականություն հանդիսացող գույքի վերաբերյալ տեղեկատվությունը՝ maparmenia.am կայքի միջոցով:

Նոր կարգավորումների ներդրման միջոցով պարզեցվել է մանկապարտեզների և այլ համայնքային ենթակառուցվածքների կառուցման նպատակով համայնքներին պետական գույքի նվիրաբերության գործընթացը:

Հարկաբյուջետային քաղաքականություն

2023 թվականի ընթացքում հարկաբյուջետային քաղաքականության բարեփոխումների ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Կատարելագործվել է մակրոտնտեսական կանխատեսումների համակարգը՝ համալրելով այն ժամանակակից և առաջատար գործիքակազմերով, ինչը հնարավորություն է տվել պետական բյուջեի կանխատեսումներում բարձրացնելու սցենարային վերլուծության դերակատարումը: Ներդրված նոր գործիքները հնարավորություն են տվել 2024 թվականի բյուջեի ուղերձում հրապարակելու խոշոր հարկատեսակների կանխատեսումները՝ բարձրացնելով բյուջեի թափանցիկությունը:

Զարգացվել է փաստերի և վերլուծությունների վրա հիմնված (evidence-based) քաղաքականությունների քննարկումների մշակույթը. իրականացվել է ավելի քան երկու տասնյակ վերլուծություն Կառավարության ծրագրի առանցքային միջոցառումների իրականացման մակրո-ֆիսկալ և սոցիալ-տնտեսական ազդեցությունների, 7% տնտեսական աճի թիրախի ապահովման համար անհրաժեշտ ներդրումների ու արտահանման ծավալների և բարեփոխումների անհրաժեշտ ջանքերի, ներուժային տնտեսական աճի գնահատումների ուղղությամբ:

Գնահատվել են հարկման միջնաժամկետ հնարավորությունները՝ ապահովելով վերլուծական հիմքեր հարկային վարչարարության բարելավման և ստվերի կրճատման աշխատանքների արդյունավետ իրականացման համար: Մշակվել և հաստատվել է խոշոր հարկատեսակների՝ ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ), եկամտային հարկի, շահութահարկի գծով հարկային ներուժի և վարչարարության ճեղքի գնահատման մեթոդաբանությունը: Գնահատումները ցույց են տվել, որ վարչարարության ջանքերի շնորհիվ վերջին տարիներին վարչարարության ճեղք/ՀՆԱ հարաբերակցությունը դրսևորել է շարունակական նվազման միտում՝ 2020 թվականին՝ 6,5%, 2021 թվականին՝ 5,7% և 2022 թվականին՝ 5,3%:

Ստեղծվել են բավարար վերլուծական հիմքեր, և դրանց համահունչ՝ շարունակվել է պարտքի կայունության ամրապնդման քաղաքականությունը: Պարտք/ՀՆԱ-ի 60%-ից ցածր թիրախի վաղաժամ ապահովումից հետո երկրորդ տարին անընդմեջ Կառավարության պարտքն ապահովվել է հարկաբյուջետային կանոններով սահմանված միջին՝ 50% շեմից ցածր մակարդակում: Միջազգային փորձի լավագույն մեթոդաբանությամբ Կառավարության պարտքի շեմերի վերագնահատման արդյունքում հիմնավորվել է ներկա տնտեսական վերափոխումների պայմաններում պարտք/ՀՆԱ-ի գործող՝ 40%, 50% և 60% բազմամակարդակ շեմերի համակարգի արդիականությունը: Միաժամանակ Կառավարության պարտքի կառուցվածքում ներքին պարտքի դերի հաշվեկշռված՝ հարկաբյուջետային կայունության և ֆինանսական միջնորդության համար ռիսկեր չստեղծող ընդլայնում ապահովելու համար գնահատվել է ներքին պարտքի կշռի մեծացման օպտիմալ արագությունը՝ հանգելով դրա միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում տարեկան 1 տոկոսային կետի չափին: Մշակվել են պարտքի կառավարման թիրախները:

Պարտքի կայունությունն ամրապնդելու համար շարունակվել է պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման կառուցվածքում դրամով փոխառությունների խթանման գործընթացը: Ներքին փոխառու միջոցների հաշվին պետական բյուջեի պակասուրդի զուտ ֆինանսավորումը կազմել է շուրջ 360,3 մլրդ ՀՀ դրամ կամ փոխառու զուտ միջոցներով ֆինանսավորման 125,5%-ը, իսկ արտաքին փոխառու միջոցների հաշվին պակասուրդի զուտ ֆինանսավորումը բացասական է եղել -73,3 մլրդ: Նախորդ տարվա համեմատությամբ ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորման կշիռն աճել է 46,3 տոկոսային կետով:

Տարվա ընթացքում իրականացվել են պարտքի կառուցվածքի բարելավմանն ուղղված՝ արտարժույթով պարտքի հետգնման գործառնություններ, մասնավորապես, դրամի արժևորման պայմաններում 7,15% եկամտաբերությամբ, 500 մլն ԱՄՆ դոլար ծավալով, 2025 թվականի մարմամբ եվրապարտատոմսերից կատարվել է շուրջ 187 մլն ԱՄՆ դոլար ծավալով հետգնման գործարք, որի արդյունքում եվրապարտատոմսերի գծով տոկոսավճարների տնտեսումը կազմելու է շուրջ 20 մլն ԱՄՆ դոլար:

ԼՂ հիմնադրամների, առանձին իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ ՀՀ ֆինանսական կազմակերպությունների դրամական պահանջների զիջման դիմաց վերջիններիս օգտին Կառավարությունը տեղաբաշխել է շուրջ 206,4 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով պետական գանձապետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր: Նշված գործարքն էական նշանակություն ունի երկրի ֆինանսական կայունության, այդ թվում՝ բանկային համակարգի բնականոն գործունեության ապահովման համատեքստում:

Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի բարելավման, ցածր արդյունավետություն ունեցող և հասցեականություն չունեցող հարկային արտոնությունների կրճատման, ինչպես նաև հարկման տարբեր համակարգերի միջև համադրելի և արդարացի հարկային բեռի սահմանման նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- որոշվել է, որ 2024-2026 թթ. ընթացքում յուրաքանչյուր տարի բարձրացվելու են ակցիզային հարկի դրույքաչափերը,
- մշակվել է օրենքի նախագիծ, որով առաջարկվում է շրջանառության հարկի համակարգի հարկային բեռը մոտարկել հարկման ընդհանուր համակարգում առկա հարկային բեռին, ինչպես նաև գործունեության որոշ տեսակներ դուրս բերել շրջանառության հարկի և միկրոձեռնարկատիրության հարկման համակարգերից,
- ԱՄՀ-ի հետ համագործակցությամբ կատարվել է հարկային արտոնությունների արդյունավետության վերլուծություն:

2023 թվականին հարկեր/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 23,9% (ներառյալ հիփոթեքի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձը)՝ բարելավվելով նախորդ տարվա համեմատությամբ 0,8 տոկոսային կետով: Վերջին 6 տարվա ցուցանիշը միջինը բարելավվել է 0,5 տոկոսային կետով (2017 թվականին կազմել էր 20,9%): 2023 թվականի հարկեր/ՀՆԱ ցուցանիշի բարելավումը տեղի է ունեցել հարկման բազաների առաջանցիկ աճի (հիմնականում շահույթների և աշխատավարձերի), ինչպես նաև հարկային վարչարարության ջանքերի շնորհիվ: Ընդհանուր առմամբ՝ վերջին տարիներին հարկային վարչարարության արդյունավետության բարձրացումը և ստվերի կրճատումը ապահովել են հարկային ճեղքի (հնարավորի նկատմամբ չհավաքագրված հարկային եկամուտների) զգալի փոքրացում՝ լրացուցիչ ռեսուրսներ գեներացնելով Կառավարության ծրագրով նախա-տեսված միջոցառումների և այլ առաջնահերթ կարիքների ֆինանսավորման համար:

Ներդրումային միջավայրի բարելավման նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- ոսկու հումքը երկրի ներսում վերամշակելու և արժեշղթաների երկարացումը խրախուսելու նպատակով հնարավորություն է ընձեռվել ոսկու համաձուլվածքի օտարման՝ ԱԱՀ-ից ազատված գործարքների մասով հաշվանցել մատակարարներին վճարված ԱԱՀ-ի գումարները,

- սահմանվել են ՀՀ ներմուծված և արտահանվող՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ներմուծման ժամանակ վճարված ակցիզային հարկի գումարի փոխհատուցման կարգը, չափը և ժամկետները:

Ընդլայնվել է մաքսային սահմանին ԱԱՀ-ից ազատված ներմուծվող ապրանքների ցանկը, և ցանկում ներառվել են 63 տեսակի հումք և նյութ:

2023 թվականից սկսած՝ երեք հաջորդական տարվա ընթացքում ներդրվելու է ֆիզիկական անձանց եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգը, որի հիմնական նպատակներն են անձնավորված հաշվառման համապարփակ համակարգ ձևավորելը, ֆիզիկական անձանց կողմից ինքնուրույնաբար եկամտային հարկ վճարելու պարզ գործիքների ներդրումն ու առհասարակ հարկ վճարելու մշակույթի ամրապնդումը, ինչպես նաև մարդկային կապիտալի զարգացմանն ուղղված սոցիալական ծախսերի կատարման խրախուսումը: Վերջին նպատակն իրացնելու համար սահմանվել են սոցիալական ծախսերի տեսակների առանձին ուղղությունները, ընտանիքի անդամների շրջանակը և սոցիալական ծախսերի փոխհատուցման առավելագույն չափերը: Այս համակարգի շրջանակներում հայտարարատուները հնարավորություն են ստանալու եկամտային հարկի գումարներից նվազեցնելու կամ հետ ստանալու իրենց կամ իրենց ընտանիքի անդամների համար կատարված՝ առողջապահության և կրթության գծով ծախսերը (կրթության մասով՝ տարեկան 100 000 դրամ, առողջապահության մասով՝ տարեկան 50 000 դրամ, հանրագումարով՝ առավելագույնը տարեկան 100 000 դրամ):

Հաշվի առնելով այն, որ Երևան քաղաքի մասով կիրառված՝ հիփոթեքային վարկերի տոկոսները եկամտային հարկից հետ վերադարձնելու համակարգի կիրառության ժամանակային սահմանափակումները կարճաժամկետ հեռանկարում Երևանում ակտիվացրեցին բնակարանաշինական ծրագրերը, նախատեսվում է նմանատիպ մոտեցում կիրառել նաև մարզերի պարագայում: Մասնավորապես, նախատեսվում է եկամտային հարկի վերադարձի համակարգը Երևանին սահմանակից մարզերում կիրառել, եթե հիփոթեքային վարկը ստացվել է մինչև 2027 թվականի հունվարի 1-ը, մնացյալ մարզերում՝ եթե հիփոթեքային վարկը ստացվել է մինչև 2029 թվականի հունվարի 1-ը՝ անժամկետ բացառություն նախատեսելով սահմանամերձ բնակավայրերի համար:

Հարկային և մաքսային վարչարարություն

2023 թվականի արդյունքներով պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են 2 տրլն 222 մլրդ դրամ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից ավելի է շուրջ 296 մլրդ ՀՀ դրամով կամ 15,4%-ով, 2021 թվականից ավելի է շուրջ 635 մլրդ ՀՀ դրամով կամ 40%-ով, 2020 թվականից ավելի է շուրջ 837 մլրդ ՀՀ դրամով կամ 60,4%-ով, 2019 թվականից ավելի է շուրջ 758 մլրդ ՀՀ դրամով կամ

51,7%-ով և 2018 թվականից ավելի է շուրջ 964 մլրդ ՀՀ դրամով կամ 76,6%-ով, 2017 թվականից ավելի է շուրջ 1 տրլն 64 մլրդ դրամով կամ 91,9%-ով:

Ընդ որում, նախորդ տարվա նկատմամբ էական աճ է արձանագրվել գրեթե բոլոր հարկատեսակներով, մասնավորապես՝

- ԱԱՀ-ի աճը՝ 87,6 մլրդ ՀՀ դրամ կամ 12,9%,
- շահութահարկի աճը՝ 98,7 մլրդ ՀՀ դրամ կամ 44,3%,
- շրջանառության հարկի աճը՝ 11,5 մլրդ ՀՀ դրամ կամ 28,1%,
- եկամտային հարկի աճը՝ 79,7 մլրդ ՀՀ դրամ կամ 16,8%, իսկ եթե մուտքերում ներառվեն նաև հիփոթեքի տոկոսների մասով վարկառուներին և համավարկառուներին վերադարձված եկամտային հարկի գումարները, ապա աճը կազմում է շուրջ 95,2 մլրդ ՀՀ դրամ կամ 18,6%,
- մաքսատուրքերի աճը՝ 18,6 մլրդ ՀՀ դրամ կամ 32,8%. ընդհանուր հավաքագրվել է 189,8 մլրդ ՀՀ դրամ մաքսատուրք, որից ԵԱՏՄ միասնական բյուջե է փոխանցվել 187,5 մլրդ ՀՀ դրամը, իսկ ստացվել է 73 մլրդ ՀՀ դրամ՝ 2022 թվականին ստացած 55,1 մլրդ ՀՀ դրամի համեմատ:

Բացառություն են կազմում միայն պետական տուրքը և ռոյալթին, որոնց գծով արձանագրվել է նվազում, համապատասխանաբար՝ 39,4 մլրդ ՀՀ դրամ կամ 36,9% և 40 մլրդ ՀՀ դրամ կամ 48,9%: Ընդ որում, պետական տուրքի գծով մուտքերի նվազումը պայմանավորված է մետաղական խտանյութի արտահանման տուրքի վերացմամբ, որի բացասական ազդեցությունը կազմում է 52 մլրդ ՀՀ դրամ, իսկ ռոյալթիի գծով մուտքերի նվազումը պայմանավորված է հիմնականում մետաղի միջազգային գների նվազմամբ:

2013-2017 թթ. ժամանակահատվածի հարկային եկամուտների հնգամյա աճի հանրագումարը կազմել է շուրջ 279,5 մլրդ ՀՀ դրամ, իսկ 2019-2023 թթ. ժամանակահատվածի եկամուտների հնգամյա աճի հանրագումարը կազմել է շուրջ 963,8 մլրդ ՀՀ դրամ: Նշված հնգամյա ժամանակահատվածների աճերի տարբերությունը կազմում է շուրջ 684,2 մլրդ ՀՀ դրամ կամ 245%:

2023-ին հարկ վճարողներին է վերադարձվել շուրջ 363 մլրդ ՀՀ դրամ, ինչը նախորդ տարվա ցուցանիշից ավելի է շուրջ 100 մլրդ ՀՀ դրամով կամ 38%-ով: Ընդ որում, նշված գումարները ներառված չեն պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտների մեջ, այսինքն՝ ընդհանուր հավաքագրված գումարներից հարկ վճարողներին վերադարձված գումարները նվազեցված են:

Հարկ վճարողներին վերադարձված գումարներն աճել են բոլոր հարկատեսակների գծով, մասնավորապես՝

- ԱԱՀ-ի՝ շուրջ 75,4 մլրդ ՀՀ դրամ կամ 35%,
- եկամտային հարկի՝ շուրջ 20,9 մլրդ դրամ կամ 44%,

- ակցիզային հարկի՝ շուրջ 3,5 մլրդ ՀՀ դրամ կամ 206%:

Հարկ վճարողների կողմից հարկային պարտավորությունների՝ ամբողջ ծավալով և ժամանակին հայտարարագրման շրջանակներում իրականացված աշխատանքների արդյունքում՝

- հաշվարկային փաստաթղթերով (այդ թվում՝ ՀԴՄ կտրոններով) հարկ վճարողների կողմից հայտարարագրվել է ավելի քան 12,2 տրլն ՀՀ դրամ շրջանառություն՝ 2022 թվականի 10,1 տրլն ՀՀ դրամի համեմատ (հարկ վճարողները 2022 թվականի համեմատ հայտարարագրել են շուրջ 2,1 տրլն ՀՀ դրամով ավելի իրացում),
- միջին ամսական եկամտային հարկի ընդհանուր գումարը կազմել է շուրջ 40,6 մլրդ ՀՀ դրամ, ինչն ավելի է 2022 թվականի նույն ցուցանիշից շուրջ 5,7 մլրդ ՀՀ դրամով, 2021 թվականի ցուցանիշից՝ շուրջ 10,6 մլրդ ՀՀ դրամով, իսկ 2018 թվականի նույն ցուցանիշից՝ շուրջ 15,3 մլրդ ՀՀ դրամով կամ շուրջ 60,3%-ով:

Հարկային մարմնի կողմից հսկողական աշխատանքների շրջանակներում իրականացված 1 189 համալիր հարկային ստուգման արդյունքում արձանագրվել է շուրջ 38,5 մլրդ ՀՀ դրամ (այդ թվում՝ ներկայացված ճշտված հաշվարկներով առաջացած լրացուցիչ հարկային պարտավորություն)՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ընթացքում իրականացված 1 127 ստուգմամբ արձանագրված 30,7 մլրդ ՀՀ դրամի (այդ թվում՝ ներկայացված ճշտված հաշվարկներով առաջացած լրացուցիչ հարկային պարտավորություն) համեմատ:

Վերլուծությունների և կամերալ ուսումնասիրությունների արդյունքում պետական բյուջե հաշվեգրվել է 55 մլրդ ՀՀ դրամ հանրագումարի լրացուցիչ հարկ՝ նախորդ տարվա 31,3 մլրդ ՀՀ դրամի համեմատ: Լրացուցիչ հաշվեգրված հարկի ցուցանիշը գերազանցում է նախորդ տարվա նույն ցուցանիշը շուրջ 23,7 մլրդ ՀՀ դրամով կամ 75,7%-ով: 2022 թվականից սահմանված թեմատիկ ուսումնասիրություն վարչարարության տեսակի արդյունքում 2023 թվականի ընթացքում առաջացել է շուրջ 9,4 մլրդ ՀՀ դրամի լրացուցիչ պարտավորություն:

Իրականացվել են աշխատանքներ ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող, էլեկտրոնային հարթակի միջոցով ապրանքների իրացման ծառայություն մատուցող կազմակերպությունների հարկման ուղղությամբ: Այդ նպատակով մշակվել և ներդրվել է «e-VAT» էլեկտրոնային համակարգը, որը հնարավորություն է տալիս այդ կազմակերպություններին ներկայացնելու ԱԱՀ-ի հաշվետվություններ և կատարելու հարկերի վճարումներ: Այս ծառայությունների մասով լրացուցիչ հավաքագրվել է շուրջ 2,7 մլրդ ՀՀ դրամ:

2023 թվականի նոյեմբերին Կառավարության կողմից ընդունված «Ժամանակավորապես ՀՀ ներմուծվող անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների համար մաքսատուրքերի և հարկերի վճարման պարտավորությունների

ապահովման որոշակի միջոց սահմանելու մասին» և «Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններից ՀՀ ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման համար ժամանակավոր ներմուծված՝ ԱՏԳ ԱԱ 8703 ապրանքային դիրքին դասվող թեթև մարդատար տրանսպորտային միջոցների ազատ շրջանառության համար ներմուծման դեպքում պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» որոշումների համաձայն՝ 2023 թվականի դեկտեմբերի 5-ից 30-ն ընկած ժամանակահատվածում մաքսային ձևակերպում է ստացել ՀՀ ժամանակավոր ներմուծված 2 648 տրանսպորտային միջոց, որոնց գծով գանձվել է շուրջ 4,4 մլրդ ՀՀ դրամ:

Հարկային օրենսգրքում կատարված լրացումների և փոփոխությունների համաձայն՝

- ապահովագրական գործակալները և ապահովագրական բրոքերներն այլևս չեն կարող համարվել շրջանառության հարկ վճարողներ կամ միկրոձեռնարկատի-րության սուբյեկտներ,
- շրջանառության հարկ վճարողները 2025 թվականի հունվարի 1-ից չեն ազատվում օրենսգրքի 150-րդ հոդվածի 13-րդ մասով (հարկ վճարողներին փաստաթղթերով չհիմնավորված եկամուտների վճարման դեպքում) հարկային գործակալի համար սահմանված պարտավորությունների կատարումից՝ բացառությամբ գյուղատնտեսական արտադրանքի և կառավարության սահմանած ցանկում ներառված երկրորդային հումքի ձեռքբերման դեպքերի,
- անհատ ձեռնարկատերերի համար սահմանվել է ակտիվների և պարտավորությունների հաշվառում վարելու պարտադիր պահանջ:

2023 թվականի նոյեմբերի 28-ին Լիսաբոնում կայացած՝ Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման Գլոբալ ֆորումի Ասիայի նախաձեռնության 5-րդ բարձրաստիճան հանդիպման ժամանակ ՀՀ-ն ստանձնել է 2024-2025 թթ. Ասիայի նախաձեռնության համանախագահությունը:

Ներդրվել և գործում է Էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր և գրքեր (E-invoicing) համակարգի «վեբ» տարբերակը:

Ներդրվել է ՀԴՄ սարքում անկանխիկ վճարման ընդունման գործառույթների ակտիվացման դիմումը, որը հարկ վճարողներին թույլ է տալիս ՀԴՄ սարքում ակտիվացնելու անկանխիկ վճարում ընդունելու հնարավորություն՝ առանց բանկ այցելելու:

Օրինապահ հարկ վճարողի հավաստագիր է տրամադրվել 81 տնտեսավարող սուբյեկտի:

Ապրիլի 1-ից մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածում իրականացվել է ՊԵԿ-ի գործունեության վերաբերյալ գոհունակության գնահատման հարցում, որին մասնակցել է 886 կազմակերպություն (այդ թվում՝ ԱՁ) և ինքնուրույն հարկ վճարող

(ֆիզիկական անձ): Հարցման արդյունքները փաստել են, որ ՊԵԿ-ի գործունեությունը դրական են գնահատել հարկային մարմնի մասով հարցման մասնակիցների 87,2%-ը, իսկ մաքսային մարմնի մասով՝ 78%-ը:

Համաշխարհային բանկի «Հարկային և մաքսային վարչարարության արդիականացման» ծրագրի շրջանակում հետազոտություն է իրականացվել Երևանում և մարզերում գործող 532 առևտրային կազմակերպության և անհատ ձեռնարկատիրոջ շրջանում: Հետազոտության շրջանակներում հարցման արդյունքների համաձայն՝ վերջին երեք տարվա ընթացքում հարկային մարմնի կողմից ձեռնարկված հարկային վարչարարության բարելավման միջոցառումները դրական և խիստ դրական է գնահատել հարցվածների 72,2%-ը:

Հարկ վճարողների իրազեկվածության բարձրացման նպատակով հարկ վճարողների տարբեր խմբերի համար անցկացվել է 82 ուսումնական միջոցառում, որոնց մասնակցել է 1 665 հարկ վճարող:

Բողոքարկման հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է հարկ վճարողների կողմից ներկայացված 2 343 բողոք, որից 39,6%-ը կամ 927 բողոք ամբողջությամբ կամ մասնակի բավարարվել է, իսկ 334-ը կարճվել է:

Էականորեն պարզեցվել է տարանցման հայտարարագրման գործընթացը, մասնավորապես, հավաքական բեռների յուրաքանչյուր միավորի համար տարանցման հայտարարագիր ներկայացնելու փոխարեն հնարավորություն է ստեղծվել ամբողջ բեռի համար ներկայացնելու մեկ հայտարարագիր: Իրականացված պարզեցման արդյունքում տարանցման հետ կապված մաքսային գործառնությունների տևողությունը սահմանային մաքսային մարմիններում կրճատվել է շուրջ 40%-ով, նվազել են հերթերը և բեռնատար տրանսպորտային միջոցների կուտակումները:

Նախնական մաքսային հայտարարագրման գործընթացի շնորհիվ մաքսային ձևակերպումների ժամանակահատվածը երկիր մուտք գործելուց մինչև ապրանքի բաց թողնումը 2-3 օրվա փոխարեն դարձել է 2-3 ժամ: 2023 թվականի ընթացքում նախնական հայտարարագրման դեպքերը նախորդ տարվա համեմատ 2 284-ից դարձել են 8 955՝ ավելանալով գրեթե չորս անգամ, իսկ նախնական հայտարարագրում իրականացնող տնտեսավարողների քանակը 49-ից դարձել է շուրջ 140: 2023 թվականին նախնական մաքսային հայտարարագրման միջոցով սահմանից բաց թողնված բեռնատարների քանակը կազմել է 16 746՝ 2022 թվականի 3 976-ի համեմատ:

«Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ում կազմակերպվել է 121 ուսումնական դասընթաց, որոնց մասնակցել է 2 526 աշխատակից:

Շարունակվել են կադրային քաղաքականության բարեփոխումները, այդ թվում՝ բարեվարքության ստուգման համակարգի գործարկումը: Բարեվարքության ստուգման շրջանակներում պաշտոնից ազատվել է 38 մաքսային ծառայող: Մաքսային

ծառայության պատրաստման դասընթացը հաջողությամբ հաղթահարած և համապատասխան հավաստագիր ստացած 160 դիմորդ ընդգրկվել է մաքսային ծառայողների թեկնածուների ցուցակում, որոնցից 115-ը նշանակվել է աշխատանքի (նշանակվածներից 65-ը (33% կին) նախկինում մաքսային ծառայող չի հանդիսացել):

Մայիսի 5-ից կրկին մեկնարկել է մաքսային ծառայողի պատրաստման դասընթացի ընդունելության գործընթացը, որի արդյունքում ստացվել է 1 301 դիմում-հայտ (674 դիմորդ նախկինում մաքսային ծառայող չի հանդիսացել), որոնց ուսումնասիրության և ընդունելության քննությունների արդյունքում դասընթացին մասնակցության իրավունք է ստացել շուրջ 800 դիմորդ:

Հաշվետու տարվա ընթացքում ՊԵԿ-ը հաջողությամբ անցել է տեղեկատվական անվտանգության ISO-27001-2013 միջազգային ստանդարտի հավաստագրման աուդիտը և ստացել համապատասխան հավաստագիրը:

Պետական ծախսեր

Կապիտալ ծախսերի զգալի աճը եղել է Կառավարության ծրագրային նպատակներն իրագործելու կարևոր գրավականներից մեկը: Կապիտալ ծախսերը 2022 թվականի համեմատ 2023 թվականին ավելացել են 105,2 մլրդ ՀՀ դրամով կամ 27%-ով՝ կազմելով շուրջ 494,4 մլրդ ՀՀ դրամ:

Հաշվետու տարում առավել արագ են աճել տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքներում կատարված կապիտալ ծախսերը՝ կազմելով շուրջ 209 մլրդ ՀՀ դրամ՝ 2022 թվականի նկատմամբ արձանագրելով 37,6% աճ, իսկ համայնքային ներդրումային ծրագրերի համաֆինանսավորման նպատակով հատկացված սուբվենցիաների ներառմամբ՝ շուրջ 239 մլրդ ՀՀ դրամ՝ 2022 թվականի նկատմամբ արձանագրելով 40,6% աճ: Այս ցուցանիշը 2022 թվականին արձանագրված նույն ցուցանիշի 39,1%-ով աճի շարունակությունն է: Ավելին՝ վերջին տարիներին արձանագրված բարձր աճի արդյունքում տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքներում 2023 թվականի ընթացքում կապիտալ ծախսերի մակարդակը (ներառյալ սուբվենցիաների մասը) 2018 թվականի համեմատ ավելի քան կրկնապատկվել է:

2023 թվականի ընթացքում պետական ծախսերի արդյունավետության բարձրացման ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Բարելավվել է 2024-2026 թթ. ՄԺԾԾ, 2024 թվականի ՀՀ պետական բյուջեի ծրագրերի և Կառավարության կողմից ընդունված ռազմավարական փաստաթղթերի կապը:

Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում ավելացվել է մարդկային կապիտալին և ենթակառուցվածքներին ուղղվող ծախսերի տեսակարար կշիռը:

Միջնաժամկետ հատվածում պետական բյուջեի ծախսերում գերակայելու են սոցիալական ոլորտի ծախսերը՝ կազմելով ընդհանուր ծախսերի շուրջ 42,5%-ը:

Սոցիալական ոլորտի ծախսերը ՀՆԱ-ում 2023 թվականի հաստատված բյուջեի 11,3%-ի համեմատ առաջիկա երեք տարում կաճեն՝ կազմելով միջինը 12,1%: Առաջիկա երեք տարվա ծախսերի ընդհանուր ծավալում կաճեն նաև ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը՝ 2023 թվականի 547,7 մլրդ ՀՀ դրամի փոխարեն 2026 թվականին հասնելով 862,9 մլրդ ՀՀ դրամի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ